Արաքս Մելքոնյան

Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը ՀՀ-ում

դեպի որոշումների կայացման համար աջակցության ապահովում

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Քաղաքականության կրթաթոշակներ» ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ թիվ 18827:
Վերլուծությունն արտահայտում է հեղինակի տեսակետները, որոնք կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Շնորհակալություն եմ հայտնում «Բաց հասարակություն հիմնադրամներ- Հայաստան» կազմակերպությանը համագործակցության, ֆինանսական և խորհրդատվական օժանդակության համար:

Շնորհակալություն եմ հայտնում հետազոտության մասնակից բոլոր փորձագետներին, որոնց տեսակետներն ու խորհրդատվությունը էականորեն հարստացրել են այս վերլուծությունը, ինչպես նաև բոլոր անձանց, ովքեր ինձ աջակցել են հետազոտության իրականացման հարցում:

Բովանդակություն

Ներածություն 3
1. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությանն առնչվող միջազգային չափանիշները 6
1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա 6
2. Եվրոպայի Խորհրդի շրջանակներում ձևավորված չափանիշներ 11
2. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի սահմանափակման օրենսդրական և պրակտիկ խնդիրները Հայաստանում 14
1. Գործունակության իրավունքի սահմանափակման միատեսակ մոտեցման կիրառում 16
2. Անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լսված լինելու իրավունքը 19
3. Անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումների հիմնավորվածություն 23
4. Դատահոգեբուժական փորձաքննության շրջանակը 25
5. Դատարանների կողմից միջազգային նորմերի և չափանիշների կիրառում 27
3. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անգործունակ ճանաչելու հետևանքներն այլ իրավունքների և ազատությունների իրականացման և պաշտպանության համար 29
1. Անձնական և ընտանեկան կյանքի իրավունք 29
2. Ազատության և անձնական անձեռմխելիության իրավունք 31
3. Դատական պաշտպանության իրավունք 34
4. Անկախ ապրելու և հասարակությունում ինտեգրվելու իրավունք 37
5. Առողջության իրավունք 38
6. Խոշտանգումներից և դաժան ու անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 38
7. Աշխատանքի իրավունք 39
8. Քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք 40
9. Սեփականության իրավունք 41
4. Անգործունակ ճանաչված անձանց իրավունքների պաշտպանվածության երաշխիքները 43
5. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքը ըստ այլ պետությունների օրենսդրության 46
1. Հունգարիա 46
2. Չեխիայի Հանրապետություն 48
3. Ռուսաստանի Դաշնություն 51
4. Գերմանիայի Դաշնություն 54
5. Շվեդիայի Թագավորություն 55
6. Եզրահանգումներ 58
7. Առաջարկություններ 61
Օգտագործված գրականության ցանկ 66

Ներածություն

Առանց գործունակության մենք իրավական առումով անձ չենք,
և մեր որոշումները որևէ իրավական ուժ չունեն:
Թոմաս Համմարբերգ[1]

Գործունակության իրավունքն անձի իրավասությունը և հնարավորությունն է լինելու իրավունքի սուբյեկտ՝ կայացնելու վավեր որոշումներ և գործարքներ, որոնք կպահպանվեն և կհարգվեն այլոց կողմից:[2] Այն նպաստում է անձի ազատությանը և անկախությանը՝ կայացնելու իր անձնական կյանքի առնչությամբ ընտրություն առանց երրորդ անձանց անհարկի միջամտության: Գործունակությունը, սակայն, ավելին է, քան միայն որոշումների կայացումը: Դա այն է, ինչ մարդուն դարձնում է անձ,[3] և նրա ինքնորոշման և ինքնաարտահայտման հիմքն է: Անձի, հատկապես հաշմանդամություն ունեցող անձի, գործունակության իրավունքը սերտ կապի մեջ է նրա այլ իրավունքների և ազատությունների հետ և հանդիսանում է դրանց իրականացման երաշխիքը: Մասնավորապես, պրակտիկայում գործունակության իրավունքի սահմանափակումը կամ դրանից զրկումը հանգեցնում է այլ իրավունքների ինքնաբերական և կամայական սահմանափակման:[4]

Գործունակության իրավունքի սահմանափակման կամ դրանից զրկման հետևանքները բացասական ազդեցություն են ունենում անձանց անձնական կյանքի մի շարք կողմերի վրա, ներառյալ ամուսնաընտանեկան հարաբերությունների, առողջության, ինչպես նաև ազատության և անձնական անձեռնմխելիության, քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու, նրանց կողմից սեփականության և ֆինանսական միջոցների տիրապետման և տնօրինման իրավունքի և այլ իրավունքների վրա: Ավելին, անգործունակությունը զրկում է անձին դատարանի հասանելիության իրավունքից, քանի որ վերջիններս օրենքով զրկվում են նաև դատարանին առանց միջնորդների դիմելու իրավունքից, ինչը հանգեցնում է մի իրավիճակի, երբ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ վատ վերաբերմունքը և բռնությունը, ներառյալ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և այլն, նրա շահագործումը և այլ իրավունքների խախտումները մնում են չբացահայտված և անպատիժ:

Միաժամանակ, անձին անգործունակ ճանաչելը հանդիսանում է ուղղակի խտրականության դրսևորում, ինչը ենթադրում է անձի տարբերակում, բացառում, սահմանափակում՝ հիմնվելով նրա հոգեկան առողջության և մտավոր կարողությունների վրա՝ վերացնելով կամ սահմանափակելով նրա՝ իրավունքի լիարժեք սուբյեկտ լինելու՝ այլ անձանց հետ հավասար իրենց իրավունքներից և ազատություններից օգտվելու և իրականացնելու հնարավորությունը:[5]

Անգործունակ ճանաչված անձի նկատմամբ սահմանվում է երկարաժամկետ կամ ցմահ խնամակալություն՝ որոշումների կայացման մոդել, որի ներքո խնամակալը անձի կյանքի գրեթե բոլոր ոլորտներում որոշումների կայացման իրավասություն է ձեռք բերում: Որոշումների կայացման փոխարինող մոդելը հիմնված է հաշմանդամություն ունեցող անձին պաշտպանելու գաղափարի վրա, սակայն դատական պրակտիկան, մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ դիտարկումները փաստում են, որ բազմաթիվ են դեպքերը, երբ խնամակալները անտեսում և հաճախ իրենք են խախտում այն անձի իրավունքները և շահերը, ում կոչված են

---

[1]Hammarberg, T., *Human Rights and Disability: Equal Rights for All*, Council of Europe, October 2008, CommDH/Issue Paper(2008)2, sec. 5.

[2] Lewis, O. *Advancing Legal Capacity Jurisprudence*, EHRLR, Issue 6, 2011, p. 700.

[3] Nilsson, A., *Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial Disabilities*, Strasbourg, 2012.

[4] MDAC, *Guardianship and Human Rights in Hungary: Analysis of Law, Policy and Practice*, 2007, p.6.

[5] UN, Human Rights Committee (2000), *General Comment no. 28: Equality of rights between men and women* (Article 3), Doc. CCPR/C/21/Rev.1/Add.10, 29 March 2000.

պաշտպանելու: Սակայն նույնիսկ այն դեպքերում, երբ խնամակալությունը ծառայում է իր պաշտպանիչ գործառույթին, այն հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձի «քաղաքացիական մահվան»[6], քանի որ վերջինս այլևս զրկվում է հասարակական կյանքին առանց երրորդ անձի միջնորդության մասնակցելու հնարավորությունից, ինչը իր հերթին հանգեցնում է անձի բևեռացմանը և հասարակությունից մեկուսացմանը:

Գործունակության իրավունքի լրիվ սահմանափակումը մարդու իրավունքների լուրջ և լայն տարածում ունեցող խնդիր է նաև Հայաստանի Հանրապետությունում, քանի որ յուրաքանչյուր տարի հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող առնվազն 200 անձ դատարանի կողմից ճանաչվում է անգործունակ և նրանց նկատմամբ սահմանվում է երկարաժամկետ, մեծամասամբ ցմահ խնամակալություն:[7] Դատական պրակտիկան փաստում է, որ 2011-2014թթ. ընթացքում անձի գործունակությունը վերականգնելու վերաբերյալ որևէ դիմում չի քննվել:[8]

Մինչդեռ վերջին տասնամյակի ընթացքում գործունակության իրավունքի ճանաչման և պաշտպանության առնչությամբ միջազգային սկզբունքներ զարգացվել են ինչպես Միավորված ազգերի կազմակերպության, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան[9], որը կտրականապես արգելում է հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակում և փոխարենը պետություններին պարտավորեցնում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել աջակցության համապատասխան մեխանիզմներով՝ իրենց գործունակության իրավունքը այլ անձանց հետ հավասար պայմաններում իրականացնելու նպատակով: Ավելին, համանման սկզբունքներ են զարգացվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, որոնց Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է հետևել:

Հետազոտության նպատակը

Սույն հետազոտության իրականացումը բխում է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ճանաչման և պաշտպանության առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, քաղաքականությունը և պրակտիկան փոփոխելու և միջազգային զարգացումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից: Տվյալ հարցի կարևորությունն ընդգծվել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից[10] բխող միջոցառումների ծրագրում,[11] որով նախատեսվել է «*հստակեցնել հոգեկան առողջության և(կամ) մտավոր խնդիրներ ունեցող անձին անգործունակ ճանաչելու հիմքերը և մշակել անգործունակության գնահատման տարբերակված*

---

[6] MDAC, *Legal Capacity in Europe, A Call to Action to the Governments and to the EU*; October 2013, էջ. 38: Հասանելի է http://mdac.info/sites/mdac.info/files/legal_capacity_in_europe.pdf

[7] Զրվանդյան Ա., *Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում*, Քաղաքացիական Հասարակություն Ինստիտուտ, Երևան, 2014, էջ 105: Հասանելի է http://www.hra.am/i/up/pmdARMFINALweb.pdf : Միաժամանակ, համաձայն ՀՀ Դատական Դեպարտամենտի կողմից տրամադրված թիվ ԴԴ-2Ե-7818 գրության՝ անձին անգործունակ ճանաչելու պահանջով որպես առանձին վիճակագրական դասակարգիչ վիճակագրություն կամ հաշվառում չի վարվում, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի տիրապետում Հայաստանի Հանրապետությունում բնակվող անգործունակ անձանց ընդհանուր վիճակագրության:

[8] Համաձայն ՀՀ Դատական Դեպարտամենտի կողմից տրամադրված թիվ ԴԴ-2Ե-7818 գրության համաձայն:

[9] Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան 2010թ. սեպտեմբերի 22-ին:

[10] ՀՀ նախագահ, *ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն*, 29 հոկտեմբերի 2012թ: Հասանելի է http://www.gov.am/u_files/file/kron/MIP%20azgayin%20razmavarutyun25_11_2011.pdf կայքէջում:

[11] ՀՀ Կառավարություն, *Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին թիվ 303-Ն որոշում*, ընդունվել է 27 փետրվարի 2014թ:

չափանիշներ»:[12] Ավելին, ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից անձին անգործունակ ճանաչելու վարույթի և անձի դատավարական իրավունքների պաշտպանության առնչությամբ տրված գնահատականի շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներ դիտարկվել են որպես խնդրահարույց, ինչպես նաև հակասահմանադրական:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սույն հետազոտության նպատակն է.

1. Վերլուծել Հայաստանի Հանրապետությունում հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի սահմանափակման միակ՝ անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգին, անգործունակության հետևանքներին, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքների և շահերի պաշտպանության և հսկողության մեխանիզմներին վերաբերող օրենսդրական և պրակտիկ խնդիրները:
2. Ներկայացնել առաջարկություններ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ճանաչման և պաշտպանության քաղաքականության զարգացման ուղղությամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

Փաստաթղթերի վերլուծություն: Իրականացվել է Հայաստանի Հանրապետության՝ ոլորտին վերաբերող օրենսդրության հետազոտություն, ուսումնասիրվել են անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից 2013-2014 թթ.ընթացքում կայացված դատական ակտեր: Պետական քաղաքականության առնչությամբ գործուն առաջարկություններ ներկայացնելու համար ուսումնասիրվել են հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի վերաբերյալ միջազգային չափանիշները՝ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված դրույթները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, այլ պետությունների ներպետական օրենսդրությունները և հեղինակավոր վերլուծությունները:

Փորձագիտական հարցազրույցներ: Փորձագետների հետ հիմնականում քննարկվել են հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրները, հեղինակի առաջ քաշած վարկածները, եզրահանգումները և առաջարկությունների կիրառելիությունը: Փորձագետներն ընտրվել են՝ հաշվի առնելով նրանց ներգրավվածությունը հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի առնչությամբ որոշումների կայացմանը, անգործունակ ճանաչված անձանց իրավունքների և շահերի պաշտպանության իրականացմանն ուղղված գործունեությունը: Հետազոտության մասնակից փորձագետներն էին դատավորներ, փաստաբաններ, խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչներ, մարդու իրավունքների ոլորտի փորձագետներ, ինչպես նաև հոգեբույժ փորձագետներ: Ընդհանուր առմամբ, հարցազրույց իրականացվել է 15 փորձագետների հետ:

[12] Նույն տեղում, կետ 70:

1. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությանն առնչվող միջազգային չափանիշները

1. *Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա*

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (հետայսու՝ ՀՈՒԱԻԿ) 21-րդ դարում մարդու իրավունքների վերաբերյալ ընդունված առաջին միջազգային փաստաթուղթն է:[13] Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 2010 թվականի սեպտեմբերի 22-ին՝ առանց որևէ վերապահման ստանձնելով ՀՈՒԱԻԿ-ով սահմանված պարտավորությունները:

ՀՈՒԱԻԿը լրջագույն նորամուծություններ կատարեց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ առկա մոտեցումներում: Նախ, դրանով վերանայվեց հաշմանդամության հասկացությունը՝ հաշմանդամության բժշկական մոդելից անցում կատարելով դեպի սոցիալական մոդելի: Մասնավորապես, Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանվեց, որ

> *հաշմանդամություն ունեցող անձինք ներառում են նրանց, ովքեր ունեն երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական խանգարումներ, որոնք, բախվելով տարբեր խոչընդոտների, կարող են խոչընդոտել այլ անձանց հետ հավասար անձի լիարժեք և արդյունավետ մասնակցությունը հասարակությունում:*[14]

Մինչև ՀՈՒԱԻԿ ընդունումը հաշմանդամությունը մեկնաբանվում էր՝ հիմք ընդունելով բժշկական մոդելը, որի պայմաններում անձի հաշմանդամությունը բխում էր նրա ֆիզիկական, հոգեկան մտավոր կամ զգայական խանգարումից, որը և խոչընդոտում էր անձի լիարժեք և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքին՝ այլ անձանց հետ հավասար: Սոցիալական մոդելի համաձայն՝ հաշմանդամությունը բխում է հասարակությունում առկա պատնեշներից, որոնք խոչընդոտում են որոշակի ֆիզիկական, մտավոր, հոգեկան և զգայական խանգարումներ ունեցող անձանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքին՝ այլ անձանց հետ հավասար: Հետևաբար, սոցիալական մոդելի շրջանակներում պետությունները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները վերացնելու անձի սոցիալական ներգրավմանը խանգարող ինչպես պրակտիկ, այնպես էլ օրենսդրական խոչընդոտները:

Նման խոչընդոտների վերացումը առաջնահերթ պահանջում է հաշմանդամություն, այդ թվում հոգեկան և մտավոր հաշմանդամություն, ունեցող անձանց ճանաչել իրավունքի սուբյեկտ առանց որևէ սահմանափակումների և խտրականության:

Այս առումով, Կոնվենցիայի թերևս ամենակարևոր և շրջադարձային դրույթը պարունակում է 12-րդ հոդվածը, որը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասար ճանաչման իրավունքը: Մասնավորապես,

> *1. Անդամ պետությունները վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուր օրենքի առջև որպես անձ ճանաչման իրավունք ունեն:*

---

[13] ՀՈՒԱԻԿ, ընդունվել է 13 դեկտեմբերի 2006թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից, UN Doc. A/RES/61/106/: Կոնվենցիան վավերացվել է 152 պետությունների կողմից: Աղբյուրը՝ UN Treaty Collection: CRPD (https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-15&chapter=4&lang=en).

[14] ՀՈՒԱԻԿ, հոդված 1:

2. Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունակությունը կյանքի բոլոր ոլորտներում այլ անձանց հետ հավասար:

3. Անդամ պետությունները պարտավորվում են ձեռք առնել պատշաճ միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունակությունը իրականացնելու համար պահանջվող աջակցության հասանելիությունը:

4. Անդամ պետությունները պարտավորվում են երաշխավորել բոլոր միջոցները՝ ուղղված իրավունակության իրականացմանը, ապահովել պատշաճ և արդյունավետ երաշխիքներ միջազգային մարդու իրավունքներին համապատասխան չարաշահումները կանխելու համար: Տվյալ երաշխիքները պետք է ապահովեն, որ գործունակության իրականացմանն ուղղված միջոցները հարգեն անձի իրավունքները, ցանկությունները և նախապատվությունները, զերծ լինեն շահերի բախումից և անհարկի ճնշումներից, լինեն համաչափ և հաշվի առնեն կոնկրետ անձի հանգամանքները, կիրառվեն հնարավորին կարճ ժամանակահատվածի համար, ենթարկվեն պարբերական վերանայման իրավասու անկախ և անաչառ մարմնի կամ դատարանի կողմից: Երաշխիքները պետք է համաչափ լինեն անձի իրավունքներին և շահերին կիրառված միջոցների ազդեցությանը:

5. Սույն հոդվածի դրույթներին համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են ձեռք առնել բոլոր պատշաճ և արդյունավետ միջոցները՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց հավասար սեփականության և ժառանգման իրավունքը, կառավարելու սեփական ֆինանսական հարաբերությունները, ունենալու բանկային փոխառությունների, գրավադրման և վարկերի այլ տեսակներին հավասար հասանելություն, և պարտավորվում են երաշխավորել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կամայականորեն չեն զրկվի իրենց սեփականությունից:

Չնայած 12-րդ հոդվածը՝ գործունակության իրացման առնչությամբ անդամ պետությունների կողմից առավել շատ վերապահումներ և հայտարարություններ ստացած հոդվածն է՝[15] մի շարք պետություններ ձեռնամուխ են եղել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքին առնչվող օրենսդրության և քաղաքականության բարեփոխումների իրականացմանը, որոնք կքննարկվեն հաջորդիվ:

Հիմք ընդունելով պետությունների տարակարծությունները և թյուրըմբռնումը՝ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն (հետայսու՝ Կոմիտե)[16] իր առաջին ընդհանուր մեկնաբանությամբ անդրադարձել է օրենքի առջև հավասար ճանաչման իրավունքի տարրերի մեկնաբանությանն ու պետությունների պարտավորությունների հստակեցմանը:[17]

Կոմիտեի մեկնաբանության համաձայն՝ *ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածի 1-ին* պարբերությունը կրկնում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 16-րդ հոդվածը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր անձ ամենուր օրենքի առջև որպես անձ ճանաչման

[15] UN Treaty Collection: CRPD.

[16] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն կոնվենցիոն մարմին է՝ կոչված մեկնաբանելու Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և վերահսկելու դրա կատարումը պետությունների կողմից:

[17] ՀԻԿ, *Ընդհանուր մեկնաբանություն թիվ 1(General Comment 1)*, 19 մայիսի 2014թ., UN Doc. CRPD/C/GC/1

իրավունք ունի», որը մարդու իրավունքների հիմնարար սկզբունք է և որից շեղում կամ վերապահում կատարել չի թույլատրվում անգամ արտակարգ իրավիճակների պայմաններում:[18]

ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածի 2-րդ պարբերությունն ուղղակիորեն հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքը՝ կյանքի բոլոր ոլորտներում իրավունքներն ուղղակիորեն իրացնելու հնարավորությունը,[19] ինչը անձին իրավական պաշտպանության ամբողջական հնարավորություն է տալիս, միաժամանակ ճանաչում է իրավահարաբերություններ ստեղծելու, փոփոխելու կամ դադարեցնելու նրա իրավասությունը:[20]

ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածով նախատեսված <u>իրավունակությունը</u> (legal capacity) ներառում է անձի՝ իրավունքներ և պարտականություններ կրելու հնարավորությունը՝ պասիվ իրավունակությունը (legal standing) և այդ իրավունքները և պարտականությունները իրականացնելու հնարավորությունը՝ գործունակությունը (ակտիվ իրավունակությունը (legal agency)):[21]

Առանց հաշմանդամություն ունեցող անձի գործունակության իրավունքի լիարժեք ճանաչման հնարավոր չէ նրանց այլ իրավունքների ամբողջական իրականացումը և պաշտպանությունը, ներառյալ այնպիսի իրավունքներ ինչպիսիք են որոշել, թե որտեղ և ում հետ ապրել, անձնական և ընտանեկան կյանքի, առողջության և բժշկական սպասարկման, աշխատանքի, դատարանի հասանելիության, անձնական ազատության և անձեռնմխելիության, կրթության և այլ իրավունքներ: Պետությունը պարտավոր է հարգել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անկախությունն ու ինքնուրույնությունը, ներառյալ ընտրություն կատարելու և իրենց առնչվող որոշումների կայացմանն ուղղակիորեն ներգրավվելու իրավունքը:

Այդպիսով, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ճանաչումը կրում է երկակի կարևորություն. այն ինքնին անձի իրավունք է և միաժամանակ այլ իրավունքների իրականացման հիմք և երաշխիք:

ՀՈՒԱԻԿը սահմանում է համընդհանուր գործունակության գաղափարը՝ ընդգծելով դրա տարբերությունը անձի՝ որոշումներ կայացնելու ունակությունից, ինչը յուրաքանչյուր անձի մոտ տարբեր է՝ պայմանավորված մի շարք գործոններով: Հետևաբար, անձի գործունակության լրիվ կամ մասնակի սահմանափակման մոտեցումները՝ հիմնված հիվանդության ախտորոշման (կարգավիճակի վրա հիմնված տեսություն), որոշումների բացասական հետևանքների հնարավորության (արդյունքի վրա հիմնված տեսություն) կամ անձի որոշումների կայացման ունակությունների թերության (գործառույթի վրա հիմնված մոտեցում) մոտեցումների վրա ուղղակի խտրական վերաբերմունքի դրսևորում է:[22]

---

[18]ՄԱԿ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, 1966, հոդված 4.2 և 16:

[19] ՀԻԿ, Ընդհանուր մեկնաբանություն 1, կետ 12:

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում:

[22]Նույն տեղում, կետ 15: Կարգավիճակի մոտեցումը անձին զրկում է գործունակությունից՝ ելնելով նրա հաշմանդամություն ունենալու հանգամանքից, երբ անձի հոգեկան կամ մտավոր հիվանդություն ունենալու հանգամանքը բավարար է նրան անգործունակ ճանաչելու և խնամակալ նշանակելու համար: Նման մոտեցումն ակնհայտորեն անհամաչափ է և անարդար, քանի որ անձի որոշումների կայացման անհնարինությունը գնահատվում է բացառապես բժշկական ախտորոշման հիման վրա:
Արդյունքի մոտեցումը զրկում է անձին գործունակությունից՝ հիմք ընդունելով երրորդ անձի գնահատականը, որ հաշմանդամություն ունեցող անձի որոշումը կհանգեցնի բացասական արդյունքի: Նման իրավիճակն առկա է, երբ

Ելնելով վերոգրյալից *ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածի 3-րդ* պարբերության համաձայն՝ պետությունները պարտավոր են վերացնել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը լրիվ կամ մասնակիորեն սահմանափակելու վերաբերյալ օրենսդրությունը և քաղաքականությունը՝ փոխարենը հաշմանդամություն ունեցող անձանց ապահովելով իրենց գործունակությունը լիարժեքորեն իրականացնելու համար անհրաժեշտ աջակցությամբ, ներառյալ ինտենսիվ աջակցություն՝ իրավական ուժ ունեցող որոշումներ կայացնելու համար:[23] Դա նշանակում է խնամակալի կողմից որոշումների կայացման փոխարինող համակարգից անցում դեպի որոշումների կայացման աջակցման համակարգի, որի պայմաններում անձը հանդիսանում է որոշումների կայացման առաջնային սուբյեկտը՝ անկախ անհրաժեշտ աջակցման ծավալից և աստիճանից՝[24] ստանալով սեփական կյանքին վերաբերող իրավական նշանակություն ունեցող որոշումներ կայացնելու և հաղորդելու իրավասություն:[25] Պետությունները պարտավոր են հարգել անձի ինքնուրույնությունն ու որոշումների կայացման իրավունքը նույնիսկ ճգնաժամային իրավիճակներում:[26]

Չնայած ՀՈՒԱԻԿ չի մանրամասնում աջակցման հիմնական ձևերը և տեսակները՝ Կոմիտեն նշում է, որ «աջակցությունը» լայն հասկացություն է և ներառում է տարբեր տեսակի և ինտենսիվության ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական ձևերը՝ ընդգծելով, որ աջակցությունը պետք է հիմնված լինի անձի իրավունքների, կամքի ու նախասիրությունների հարգանքի վրա և չպետք է վերածի անձի փոխարեն որոշման կայացման միջոցի:[27]

ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը սահմանում է պետությունների պարտավորությունը ձեռք առնել գործունակության իրականացման համար համարժեք և արդյունավետ երաշխիքներ: Նման երաշխիքների առաջնային նպատակը պետք է լինի հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների, ցանկությունների և նախասիրությունների հարգանքի ապահովումը՝ ի պաշտպանություն ցանկացած խախտումներից:

Ավելին, անձի ցանկությունները և նախասիրությունները որոշելու անհնարինության դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել *դրանց լավագույն մեկնաբանությամբ, այլ ոչ անձի լավագույն շահերը հաշվի առնելու սկզբունքով*,[28] քանի որ լավագույն շահերը հաշվի առնելու սկզբունքը բավարար չէ անձի գործունակության իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու համար:

անձը մերժում է բժշկական միջամտությունը, սակայն բժիշկը չի ընդունում մերժումը՝ հիմնվելով այն կանխավարկածին, որ բուժումը կունենա դրական արդյունք:

Գործառույթի մոտեցումն անձին զրկում է գործունակությունից անձի մտավոր ունակությունների ստուգման հիման վրա, մասնավորապես գնահատելով անձի ունակությունը գնահատելու կայացված որոշման բնույթն ու հետևանքները և անձի ունակությունը օգտագործելու և գնահատելու համապատասխան տեղեկությունները:

[23] Նույն տեղում, կետ 25:

[24] Bach, M., *Supported decision making under Article 12 of the UN Convention on the Rights of Persons with Disabilities: questions and challenge*; Athlone, Ireland: Parents' Committee of Inclusion Ireland; 3 November 2007.

[25] Office of the High Commissioner for Human Rights, *Thematic Study by the Office of the United Nations High Commissioner for Human Rights on enhancing awareness and understanding of the Convention on the Rights of Persons with Disabilities*, 26 January 2009.

[26] ՀԻԿ, *Ընդհանուր մեկնաբանություն 1*, կետ 18:

[27] Նույն տեղում, կետ 17:

[28] Կոնվենցիան մերժում է հաշմանդամություն ունեցող անձի «լավագույն շահերի» վրա հիմնված որոշումների կայացման հնացած մոտեցումը: Կոնվենցիան հղում է լավագույն շահերի հաշվի առման պահանջին միայն հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ կայացվող որոշումների և առնչությամբ: Տես, ՀՈՒԱԻԿ, հոդվածներ 7 և 23:

Կոմիտեն նկատում է, որ բոլոր անձինք կարող են ենթարկվել անհարկի ճնշման, սակայն նման ճնշումն առավել մեծ կարող է լինել որոշումների կայացման հարցում աջակությանան կարիք ունեցող անձանց դեպքում: Անհարկի ճնշումը ներառում է նաև աջակցող և աջակցության ենթակա անձանց միջև առկա փոխհարաբերություններում վախի մթնոլորտը, ագրեսիան, ահաբեկումը, խաբեությունը կամ խարդախությունը: Առկա երաշխիքները պետք է ուղղված լինեն անձին ցանկացած միջամտությունից պաշտպանելուն, սակայն միաժամանակ դրանք պետք է հաշվի առնեն անձի ցանկությունները, ինչպես նաև ռիսկի դիմելու և սխալվելու իրավունքը:[29] Հետևաբար, աջակցությունը չպետք է չափազանց մեծ միջամտություն ունենա անձի անձնական կյանքին:[30]

ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ պետությունները պարտավոր են ձեռք առնել օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցներ՝ իրենց ֆինանսատնտեսական հարցերի առնչությամբ այլ անձանց հետ հավասար պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման համար: Կոմիտեն նկատում է, որ հաշմանդամություն ունեցող աձնինք ավանդաբար զրկված են եղել իրենց սեփականության իրավունքի և ֆինանսական հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքից՝ հիմք ընդունելով հաշմանդամության բժշկական մոդելը, և ամրագրել է, որ տվյալ հարցերի լուծման առնչությամբ նույնպես հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ապահովվեն աջակցությամբ:[31]

Այսպիսով, վավերացնելով ՀՈՒԱԻԿը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն անհապաղ իրականացնելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասարապես ճանաչվելու իրավունքը, ինչը ներառում է հետևյալ պարտավորությունները՝

Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշումներ կայացնելու իրավունքի և «ռիսկի դիմելու» հնարավորության ճանաչում: Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող և մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք պարտավոր են հաշվի առնել անձի որոշումների կայացման իրավունքը և նրանց պետք է տրամադրվի մասնագիտական վերապատրաստում:

Որոշումների նախօրոք պլանավորման հնարավորության նախատեսում, ինչը թույլ կտա անձին հստակ արտահայտել իր կամքը և ցանկությունները սեփական հարաբերությունների, ներառյալ առողջական, բժշկական միջամտության, ֆինանսական և այլ հարցերի առնչությամբ, ինչպես նաև ընտրել ներկայացուցչի, որի պայմաններում հնարավոր կլինի խուսափել անձի գործունակության իրավունքին ցանկացած միջամտությունից:

Հաշմանդամություն, այդ թվում հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի կողմից որոշումների կայացման հնարավորության ապահովման համար անհրաժեշտ է նրան ապահովել որոշմանը վերաբերելի ամբողջական տեղեկատվությամբ: Տվյալ իրավունքի իրացումը պետք է ապահովվի ոչ միայն կոնկրետ որոշման կայացման առնչությամբ, այլև անձի կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ սեփականության իրավունքի և ֆինանսատնտեսական հարաբերությունների առնչությամբ:

1. Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ստացված տեղեկատվության ըմբռնման համար անհրաժեշտ է նրանց ապահովել ողջամիտ հարմարություններով, որոնք կարող են ներառել տեխնոլոգիական հարմարանքներ, համապատասխան նշանների թարգմանիչներ և հասանելի և ընթեռնելի ձևաչափեր:

---

[29] ՀԻԿ, *Ընդհանուր մեկնաբանություն 1*, կետեր 20-22:

[30] Նույն տեղում, կետ 29:

[31] Նույն տեղում, կետ 23:

2. Հաշմանդամություն, հատկապես հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի համար որոշումների կայացման հարցում աջակցության միջոցների անհրաժեշտությունը պետք է ճանաչվի օրենքով: Նման միջոցները ներառում են ինչպես ոչ ֆորմալ աջակցության տեսակները, այնպես էլ ֆորմալ տեսակները, որոնք երաշխավորում են անձի ներկայությունը որոշումների կայացմանը և նրանց ցանկությունների և նախասիրությունների հաշվի առնումը:

3. Եթե այլ առավել նվազ միջամտություն նախատեսող միջոցների կիրառմամբ հնարավոր չէ հասնել անձի կարիքների բավարարմանը, որպես բացառիկ միջոց օրենսդրությունը կարող է նախատեսել անձի հետ համատեղ որոշումների կայացման հնարավորությունը: Նման միջոցը տարբերվում է անձի փոխարեն որոշումների կայացման դասական մոդելից, քանի որ հիմնվում է անձի ցանկությունները և նախասիրությունները, այլ ոչ լավագույն շահերը հաշվի առնելու սկզբունքի վրա: Նման պայմաններում անձի հետ համատեղ որոշումներ կայացնող անձի ընտրությունը, ինչպես նաև նրա կողմից որոշումների կայացումը պետք է հիմնվի անձի ցանկությունների և նախասիրությունների վրա, և տվյալ որոշումները պետք է ապահովեն անձի՝ որոշումներ կայացնելու ունակությունների զարգացումը: Անկախ այն հանգամանքից, որ անձի ցանկությունները և նախասիրությունները մեկնաբանելը կարող է երկարատև և խրթին լինել, դա է անձի գործունակության իրավունքի իրացման միակ հիմքը:

2. Եվրոպայի Խորհրդի շրջանակներում ձևավորված չափանիշներ

Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությանը վերաբերող սկզբունքներ զարգանում են նաև Եվրոպայի Խորհրդի շրջանակներում, որին Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է 2001 թվականին, 2002 թվականին վավերացրել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան[32] (հետայսու՝ ՄԻԵԿ) և պարտավոր է հետևել դրա շրջանակներում ձևավորվող իրավական զարգացումներին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, ի տարբերություն ՀՈՒԱԻԿ-ի, գործունակության իրավունք որպես այդպիսին չի նախատեսում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետայսու՝ ՄԻԵԴ կամ Դատարան) մեկնաբանությունների համաձայն՝ գործունակության իրավունքը հանդիսանում է անձի մասնավոր կյանքի իրավունքի մասը և պաշտպանվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո:[33] Դատարանն արձանագրել է, որ անձի գործունակությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն սեփական իրավունքներից և ազատություններից օգտվելու, այլև ազատորեն զարգանալու և սեփական անհատականությունը ձևավորելու կարողության համար:[34] Սույն պայմաններում, անձի գործունակության սահմանափակումը, առավել ևս գործունակությունից լրիվ զրկելը «*շատ լուրջ միջամտություն*» է անձի անձնական կյանքի նկատմամբ,[35] քանի որ անձը հայտնվում է իր խնամակալից լիովին կախյալ վիճակում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ առանց դատական վերահսկողության զրկվելով սեփականություն գնելու կամ վաճառելու, աշխատելու, իր բնակության վայրն ընտրելու, ամուսնության, ինչպես նաև ազատության և այլ իրավունքներից:[36]

---

[32] ՄԻԵԿ, ընդունվել է 1950թ. նոյեմբերի 4-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 26 ապրիլի 2002թ.:

[33] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի* /Shtukaturov v. Russia/, թիվ 44009/05, 27 մարտի 2008, կետ 83; ՄԻԵԴ, *Միկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* /Sýkora v. the Czech Republic/, թիվ 23419/07, 22 նոյեմբերի 2012, կետ 101:

[34] ՄԻԵԴ, *Բրյուդեմանը և Շեութենն ընդդեմ Գերմանիայի*/Brüggemann and Scheuten v. Germany/, Թիվ 6959/75, Հանձնաժողովի զեկույց, 12 Հուլիսի 1977, կետ 55:

[35] ՄԻԵԴ, *Իքս ևԻգրեկը ընդդեմ Խորվաթիայի* /X and Y v. Croatia/, թիվ No. 5193/09, 3 նոյեմբերի 2011թ, կետ 102:

[36] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 83:

Ի տարբերություն ՄԱԿ-ի Կոմիտեի՝ ՄԻԵԴ-ը, ընդունում է իրավաչափ նպատակների առկայության դեպքում, ինչպիսին է, օրինակ, կոնկրետ անձի իրավունքների պաշտպանությունը, գործունակության իրավունքի սահմանափակման հնարավորությունը: Սակայն, դիտարկելով որպես անձի անձնական կյանքի իրավունքի տարր, դրա ցանկացած սահմանափակում պետք է բավարարի Կոնվենցիայով նախատեսված նյութական և դատավարական պահանջներին:

Հիմք ընդունելով Նախարարների Կոմիտեի Հանձնարարական թիվ R (99)4-ով սահմանված դրույթները, որոնք համարվում են «ընդհանուր եվրոպական չափանիշներ»[37] ՄԻԵԴը խիստ պահանջներ է ներկայացնում գործունակության իրավունքի սահմանափակման համաչափության և ընթացակարգի առնչությամբ:[38]

Կարևորելով անդամ պետություններում հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի սահմանափակում, որոշումների կայացման փոխարինող համակարգ նախատեսող հնացած օրենսդրության և պրակտիկայի զարգացման, միասնականության և անձանց իրավունքների ու շահերի պաշտպանության խնդիրը՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեն 1999 թվականին ընդունել է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությանը վերաբերող առաջին եվրոպական փաստաթուղթը՝ Անգործունակ անձանց իրավական պաշտպանությանն ուղղված սկզբունքների մասին թիվ R(99)4 հանձնարարականը:[39] Այն վերաբերում է չափահաս անձանց, ովքեր հոգեկան կամ մտավոր հաշմանդամության, հիվանդության կամ այլ նման պատճառների[40] բերումով զրկված են անձնական կյանքի կամ ֆինանսական միջոցների առնչությամբ ինքնուրույն որոշումներ կայացնելու և իրենց շահերը պաշտպանելու հնարավորությունից:[41]

Չնայած՝ Հանձնարարականը նախատեսում է անձի գործունակության սահմանափակման հնարավորությունը, այն սահմանում է անձի իրավական պաշտպանությանն ուղղված սկզբունքներ, ընթացակարգային երաշխիքներ և ներկայացուցչության չափանիշներ, որոնց պահպանման դեպքում միայն գործունակության իրավունքի սահմանափակումը կարող է համարվել օրինական:

Մասնավորապես, դրանով ամրագրված հիմնական սկզբունքներն են.

- Անձի մարդկային արժանապատվության հարգանքը[42]՝ ի ապահովումն անձի ցանկությունների և կամքի[43]
- Պաշտպանության միջոցի կիրառման անհրաժեշտությունը և համարժեքությունը անհատի անձնական հանգամանքներին և կարիքներին[44]
- Պաշտպանության միջոցների ճկունությունը՝ ի ապահովումն տարբեր իրավիճակներում գտնվող անձանց համապատասխանող բավարար մոտեցումներ[45]
- Գործունակության առավելագույն պահպանումը՝ ապահովելու անձի իրավունքներին նվազագույն աստիճանի միջամտություն[46]
- Անձնական բնույթի իրավունքների ինքնաբերական սահմանափակման բացառումը[47]

---

[37]Սալոնտայի-Դրոբնյակն ընդդեմ Սերբիայի /Salontaji-Drobnjak v. Serbia/, թիվ. 36500/05, 13 հոկտեմբերի 2009, կետ 107:

[38] Այսինքն, անձի գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն պետք է համարժեք լինի հետապնդվող իրավաչափ նպատակին և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում:

[39] Committee of Ministers, Council of Europe, *Recommendation R(99)4*, 23 February 1999.

[40] Նույն տեղում, մաս 1, կետ 2.

[41] Նույն տեղում, մաս 1, կետ 1:

[42] Նույն տեղում, սկզբունք 1:

[43] Նույն տեղում, սկզբունք 9.2:

[44] Նույն տեղում, սկզբունք 5-6:

[45] Նույն տեղում, սկզբունք 2:

[46] Նույն տեղում, սկզբունք 3:

- Գործունակության սահմանափակման ընթացակարգի արդարություն՝ անձի հնարավորությունների և կարիքների պատշաճ գնահատում,[48] անձի ներգրավվածություն,[49] տեղեկացվածություն գործունակության սահմանափակման պարբերական վերանայման հնարավորություն[50]
- Պաշտպանության միջոցի կիրառման ժամանակավորություն և գործունակության սահմանափակման պարբերական վերանայման հնարավորություն[51]

Հետևաբար, սույն սկզբունքները նախատեսում են կարգավորման առավել լայն շրջանակ, քան անձի փոխարեն որոշումների կայացման համակարգը և կարող է որոշումների կայացման օժանդակող համակարգի անցման հիմք հանդիսանալ:[52]

Միաժամանակ, որոշումների կայացման օժանդակող համակարգի գաղափարն ընկած է նաև Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված մի շարք այլ փաստաթղթերում: Մասնավորապես, 2009թ. Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի կողմից ընդունված թիվ 1642 Հանձնարարականը կոչ է անում պետություններին հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել գործունակության իրավունքի իրացման հնարավորությամբ այլ անձանց հետ հավասար՝ երաշխավորելով, վերջինների որոշում կայացնելու իրավունքը առանց սահմանափակումների և փոխարինող որոշումների կայացմամբ, ինչպես նաև վերջիններին վերաբերող միջոցները համապատասխանում են անհատական կարիքներին և ապահովել վերջիններին որոշումների կայացման համար անհրաժեշտ աջակցությամբ՝ հաշվի առնելով վերջինների ցանկությունները և կամքը:[53]

Ավելին, Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խթանման և հասարակությունում մասնակցության վերաբերյալ 2006-2015 գործողությունների ծրագիրը նպատակ է հետապնդում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցությունը հասարակությանը՝ նրանց գործունակության իրավունքի իրացման համար աջակցության միջոցով նաև:[54]

Այսպիսով, վերոգրյալ միջազգային իրավական չափանիշների ուսումնասիրությունը հաստատում է, որ անձի գործունակության իրավունքը մարդու քաղաքացիական իրավունք է և ենթակա է անհապաղ ճանաչման և իրականացման: Հետևաբար, համապատասխան պարտավորությունները ստանձնելով՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է անհապաղ քայլեր ձեռնարկել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասարության լիարժեք երաշխավորման համար՝ ապահովելով գործունակության իրավունքի իրացման համար անհրաժեշտ աջակցության արդյունավետ մեխանիզմներով՝ բացառելով անձի անձնական կյանքի իրավունքի նկատմամբ ցանկացած անհարկի միջամտություն: Պետության կողմից ձեռնարկված քայլերը պետք է լինեն կոնկրետ, հիմնավորված և հիմնված հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպությունների ակտիվ մասնակցության և խորհրդակցության վրա:

---

[47] Նույն տեղում, սկզբունք 3.2:
[48] Նույն տեղում, սկզբունք 12:
[49] Նույն տեղում, սկզբունք 13:
[50] Նույն տեղում, սկզբունք 14:
[51] Նույն տեղում, սկզբունք 14:
[52] Nilsson, A., *Who Gets to Decide? Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial disabilities*, Strasbourg, 2012.
[53] Parliamentary Assembly, Resolution 1642, *Access to rights for people with disabilities and their full and active participation in society*, 26 January 2009, para. 7.
[54] Committee of Ministers, Recommendation Rec(2006)5 : Council of Europe Action Plan to promote the rights and full participation of people with disabilities in society: improving the quality of life of people with disabilities in Europe 2006-2015.

2. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի սահմանափակման օրենսդրական և պրակտիկ խնդիրները Հայաստանում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները հռչակում է որպես բարձագույն արժեքներ և անմիջականորեն գործող իրավունք:[55] Այն սահմանում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և ցանկացած խտրականություն, պայմանավորված այդ թվում՝ հաշմանդամությամբ կամ անձնական բնույթի այլ հանգամանքով, արգելվում է:[56] Ավելին, Սահմանադրությամբ թվարկված հատկանիշները սպառիչ չեն. խտրականությունն արգելող դրույթն ունի համընդգրկուն բնույթ և ներառում է յուրաքանչյուր կոնկրետ անհատի՝ իր կոնկրետ առանձնահատկություններով և հատկանիշներով:[57] Հետևաբար, ՀՀ սահմանադրությամբ, օրենքներով և ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով նախատեսված իրավունքները հավասարապես վերաբերում են նաև հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց:[58]

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը ճանաչում է բոլոր անձանց իրավունքներ, ազատություններ և պարտականություններ ունենալու և օրենքի առջև հավասարության իրավունքը առանց որևէ խտրականության: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անձանց քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես, որը ծագում է նրանց ծննդյան պահից և դադարում է մահվամբ:[59]

Միաժամանակ, սակայն, ՀՀ գործող օրենսդրությամբ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ կյանքի բոլոր ոլորտներում օրենքի առջև հավասարության իրավունքը հավասարապես ճանաչված և պաշտպանված չէ:

> *ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ քաղաքացին, ով հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն:*[60]

Օրենսդրական նման կարգավորման պայմաններում անձն ամբողջովին զրկվում է իր գործունակության իրավունքից առանց որևէ այլընտրանքի: Մասնավորապես, օրենսդրությամբ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց առնչությամբ նախատեսված չէ ինչպես գործունակության մասնակի սահմանափակման հնարավորությունը, այնպես էլ գործունակության իրավունքի սահմանափակման գործուն այլընտրանքներ: Այսպես, անձի գործունակության մասնակի սահմանափակում նախատեսվում է ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր

---

[55] ՀՀ Սահմանադրություն, հոդված 3:
[56] Նույն տեղում, հոդված 14.1:
[57] Տես, Հարությունյան Գ. և այլք, *ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ*, Երևան 2010, էջ 114-115: Հասանելի է: http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf
[58] ՀՀ Վճռաբեկ դատարան, *Վ. Օհանովի վերաբերյալ որոշումը*, ԵՇԴ/0938/02/10, 24 մայիսի 2013թ:
[59] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 20:
[60] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 31.1.

ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած անձի համար:[61] Անձի իրավունքների սահմանափակում չնախատեսող պատրոնի ինստիտուտը կիրառվում է միայն գործունակ անձի նկատմամբ նրա խնդրանքով, երբ անձը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել և պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները:[62] Սակայն պրակտիկայում անձի մոտ հոգեկան կամ մտավոր հիվանդության առկայության դեպքում պատրոն չի նշանակվում. պատրոն նշանակվում է, երբ անձն ունի ֆիզիկական (հենաշարժական) հաշմանդամություն կամ այլ հիվանդություններ, որոնք անձի տեղաշարժման համար խնդիրներ են առաջացնում:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը նախատեսում է կյանքի դժվարին իրավիճակում, ներառյալ հաշմանդամության հետևանքով, հայտնված անձին սոցիալական աջակցության տրամադրման հնարավորությունը:[63] Մասնավորապես, Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը նախատեսում է միջոցների ամբողջություն, որոնք ուղղված են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարմանը, անձի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած խնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացման խթանմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հասարակական ներառմանը համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև անձի սոցիալական մեկուսացման կանխարգելումը:[64] Սակայն սոցիալական աջակցության շրջանակներում անձանց, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակցությունը կրում է սահմանափակ բնույթ: Մասնավորապես, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության տեսանկյունից կարևորվում են սոցիալական ծառայությունների հետևյալ տեսակները՝ խորհրդատվությունը, ինչպես նաև իրավական օգնությունը:[65] Այդուամենայնիվ, ինչպես խորհրդատվությունը, այնպես էլ իրավական օգնությունը կրում են սահմանափակ բնույթ, ներառում են հիմնականում հենց սոցիալական ծառայություններ ստանալու առնչությամբ տրվող խորհրդատվությունը և սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը:[66] Օրենքը նախատեսում է նաև սոցիալական պատրոնաժի ինստիտուտը, որը կոչված է հաշմանդամություն ունեցող չափահաս, սակայն միայն գործունակ անձին հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում աշխատանքի իրավունքի իրականացման համար սոցիալական ծառայությունների իրականացումը, ինչը հիմնականում սահմանափակվում է անձին տրամադրվող խնամքով:[67]

Այդպիսով, սոցիալական աջակցության շրջանակներում նախատեսված միջոցառումները հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի իրացման և անձնական կյանքի բոլոր ոլորտների առնչությամբ որոշումներ կայացնելու համար բավարար և արդյունավետ համարվել չեն կարող:

Այդպիսով, առանց գործուն այլընտրանքների գոյության և կիրառման հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող աձնանց գործունակությունից լրիվ զրկումը կյանքում հանգեցնում է անձանց իրավունքների և ազատությունների անհամաչափ սահմանափակումների:

Անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի ուսումնասիրություն

---

[61] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 32:
[62] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 43, կետ 1:
[63] Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, հոդված 18, կետ 1:
[64] Նույն տեղում, հոդված 19:
[65] Նույն տեղում, հոդված 8:
[66] Նույն տեղում, հոդվածներ 9 և 14:
[67] Նույն տեղում, հոդված 13, կետ 11:

Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքից զրկելու օրենսդրական և ընթացակարգային խնդիրների առավել խորքային վերլուծության նպատակով ուսումնասիրվել են անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ 2013-2014 թվականների ընթացքում 100 գործերով կայացված դատական ակտեր,[68] որոնք ընդգրկել են բոլոր առաջին ատյանի դատարանները: Դատական գործերի այս համամասնությունն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի մեկ քառորդը,[69] որն ապահովում է խնդիրների համապարփակ ուսումնասիրության հնարավորությունը:

Ուսումնասիրված դատական ակտերից 87 դեպքում անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը բավարարվել է: Մյուս 13 դեպքերում դիմումը մերժվել է՝ տարբեր հիմնավորումներով, ինչպես օրինակ, ոչ պատշաճ դիմողի կողմից դիմումի ներկայացված լինելը[70], հիմնավոր կասկածի բացակայությունը[71], անգործունակ ճանաչման ենթակա անձի մահը,[72] անձի կողմից փորձաքննությանը չներկայանալը,[73] ինչպես նաև դատահոգեբուժական փորձաքննությամբ սեփական գործողությունները հասկանալու և ղեկավարելու հնարավորության հաստատումը:[74] Կայացված դատական ակտերից վերաքննության կարգով բողոքարկվել են միայն երկուսը:[75] Մյուս բոլոր գործերով առաջին ատյանի դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, որոնցից 4-ը օրինական ուժի մեջ են մտել հրապարակման պահից:[76]

Դատական գործերի ուսումնասիրությամբ վեր են հանվել հետևյալ հարցերի առնչությամբ խնդիրները:

1. Գործունակության իրավունքի սահմանափակման միատեսակ մոտեցման կիրառում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անձը կարող է ճանաչվել անգործունակ, եթե հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:[77] Օրենսդրական այս դրույթի շրջանակներում «հոգեկան խանգարում» տերմինը ներառում է ինչպես հոգեկան, այնպես էլ մտավոր հիվանդությունները:

---

[68] Դատական ակտերը վեր են հանվել Դատալեքս դատական տեղեկատվական համակարգում կատարված որոնման արդյունքում:

[69] Զրվանդյան Ա., *Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում*, Քաղաքացիական Հասարակություն Ինստիտուտ, Երևան, 2014, էջ 105:

[70] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/2808/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1684/02/13 վճիռը:

[71] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԳԴ/0620/02/12 գործով վճիռը:

[72] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1884/02/12 գործով վճիռը:

[73] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԳԴ/0025/02/12 գործով վճիռը:

[74] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՇԴ/0365/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ 0157/02/12 գործով վճիռը:

[75] Ընդ որում վերաքննիչ բողոքներից մեկը ներկայացվել է անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը բավարարող՝ անգործունակ ճանաչված անձի կողմից, մյուսը՝ դիմումը մերժող դատական ակտի դեմ՝ դիմողի կողմից: Առաջին դեպքում անձի ներկայացված բողոքը վերաքննիչ դատարանի կողմից վերադարձվել է, երկրորդ դեպքում՝ մերժվել:

[76] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԳԴ/0272/02/11 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՔԴ/1111/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՇԴ/1259/02/14 գործով վճիռը:

[77] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 31.1:

Սակայն անհրաժեշտ է փաստել, որ իրենց տեսակներով և ծանրության աստիճանով հոգեկան և մտավոր հիվանդությունները տարբեր են և նույնիսկ կոնկրետ անձի մոտ հնարավոր են վիճակի փոփոխություններ՝ հաշվի առնելով վերականգման և ճգնաժամային փուլերը: Հետևաբար, օրենսդրական նման միաչափ ու միատեսակ կարգավորումը հնարավորություն չի տալիս պատշաճ գնահատելու անձի իրական հնարավորությունները և կարիքները իրենց գործունակության իրավունքի իրացման առնչությամբ և կիրառել դրանց համարժեք, անձնական կյանքի նվազ սահմանափակումներ նախատեսող միջոցներ: Նման կարգավորումն անընդունելի է, քանի որ հանգեցնում է անձի իրավունքների և ազատությունների անհարկի սահմանափակման:

Ավելին, նոր սերնդի, ժամանակակից դեղամիջոցները, որոնք կիրառվում են քրոնիկ հոգեկան հիվանդությունների բուժման համար, էական դրական փոփոխություններ են ունենում անձանց առողջության վրա:

Հոգեբույժ փորձագետ

Ստորև աղյուսակում ներկայացված է ուսումնասիրված դատական ակտերով անգործունակ ճանաչված անձանց հիվանդության ախտորոշումների ցանկը.

1. Շիզոֆրենիա /պարանոիդ ձև/	28
2. Քրոնիկական զառանցական խանգարում	2
3. Անձի օրգանական խանգարում	2
4. Մտավոր խորը հետամնացություն	12
5. Ծանր աստիճանի մտավոր հետամնացություն	4
6. Չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն	15
7. Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն	5
8. Անոթային թուլամտություն	6
9. Էպիլեպտիկ թուլամտություն	8
10. Ալցհեյմերի հիվանդություն	2
11. Մտավոր և ֆիզիկական թերզարգացվածություն նանիզմ	2
12. Հոգեկան և վարքագծային խանգարումներ, ալկոհոլի գործածման հետևանքով	1

Անգործունակ ճանաչված անձանց ախտորոշումների նման տարբերությունների և բազմազանության պայմաններում օրենսդրական միաչափ և միատեսակ կարգավորման խնդիրներն առավել ցայտուն են դառնում, քանի որ արձանագրված ախտորոշումները, ըստ էության, տարբեր աստիճանի և բնույթի ազդեցություն են ունենում անձի՝ որոշումներ կայացնելու ունակությունների և հնարավորությունների վրա, հետևաբար տարբեր են նրանց կարիքները, որոնք պահանջում են տարբերակված մոտեցումներ:

Ավելին, ՀՀ օրենսդրությամբ անգործունակության որևէ ժամկետային սահմանափակում, անձի անգործունակության վերանայման պարբերականություն նախատեսված չէ, որի պայմաններում հոգեկան և մտավոր հիվանդություն ունեցող անձի գործունակության իրավունքի լրիվ սահմանափակումը կարող է լինել ցմահ՝ հաշվի առնելով նաև գործունակության իրավունքից զրկելու հետևանքները անձի՝ դատարանի հասանելիության իրավունքի սահմանափակման վրա:

ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործող օրենսդրական կարգավորումներում առկա խնդիրը և պահանջել օրենսդրական փոփոխություններով բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները, քանի որ ոչ բոլոր հոգեկան խանգարումներն են հանգեցնում անձի ամբողջական անգործունակության:[78]

ՄԻԵԴ դատական պրակտիկա

Անձի գործունակության սահմանափակման առնչությամբ ՄԻԵԴ ձևավորել է հստակ չափանիշներ:

Նախ, Դատարանն ամրագրել է, որ անձի գործունակության սահմանափակման համար միայն հոգեկան հիվանդության առկայությունը, անկախ դրա ծանրության աստիճանից, չի կարող բավարար լինել և արդարացնել գործունակության ցանկացած սահմանափակում: Նման հիվանդությունը պետք է լինի այն տեսակի կամ աստիճանի, որը կարդարացնի անձի գործունակության իրավունքի սահմանափակումը, հատկապես անձին լրիվ անգործունակ ճանաչելու դեպքում:[79]

Ավելին, ցանկացած միջոց, որը միջամտում է անձի անձնական կյանքի իրավունքին, պետք է համապատասխանի նրա կարիքներին և չլինի ավելին, քանի անհրաժեշտ է հետապնդվող նպատակին հասնելու համար:[80] Սույն առնչությամբ, Դատարանն անընդունելի է համարում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց լրիվ անգործունակ ճանաչելու միատեսակ մոտեցման գոյությունը:[81]

Հետևաբար, ըստ Դատարանի, նույնիսկ այն դեպքերում, երբ ներպետական մարմինների կողմից բավարար հստակությամբ հաստատվել է անձնական հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու հարցում անձի խնդիրների առկայությունը, գործունակության նույնիսկ մասնակի սահմանափակումը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց միայն այն դեպքում, երբ բոլոր հնարավոր այլընտրանքների հաշվի առմամբ ներպետական մարմինները հանգել են եզրակացության, որ առավել նվազ սահմանափակումներ ենթադրող միջոցի կիրառումը ապարդյուն կլիներ:[82] Ավելին, ցանկացած միջոցի կիրառություն պետք է կրի ժամանակավոր բնույթ և ենթարկվի պարբերական վերանայման՝ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում դրանց գործողությունը դադարեցնելու նպատակով:[83]

---

[78] ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ՔԴՕ 171-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության ՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում, 7 ապրիլի 2015թ, էջ 18: Միաժամանակ, սակայն, անհրաժեշտ է փաստել ՀՀ Սահմանադրական դատարանի մոտեցման անբավարարությունը՝ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության ճանաչման և պաշտպանության առնչությամբ, քանի որ Սահմանադրական Դատարանի որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվել անձի գործունակության իրավունքի սահմանափակում չենթադրող միջոցների նախատեսմանն ու կիրառմանը, ինչը բխում է նույն դատարանի կողմից կիրառված միջազգային փաստաթղթերի և նորմերի պահանջներից:

[79] ՄԻԵԴ, *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի* /Lashin v. Russia/ թիվ 33117/02, 22 հունվարի 2013, կետ 94:

[80] ՄԻԵԴ, *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 96:

[81] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետեր 94-95:

[82] ՄԻԵԴ, *Իվինոնիչն ընդեմ Խորվաթիայի* /Ivinovic v. Croatia/ թիվ 13006/1, 18 սեպտեմբերի 2014թ. կետ 44:

[83] ՄԻԵԴ, *Ստաննն ընդեմ Բուլղարիայի* /Stanev v. Bulgaria/ թիվ 36760/06, 17 հունվարի 2012, կետ 240:

2. *Անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լսված լինելու իրավունքը*

Ուսումնասիրված դատական ակտերից միայն տասն են նշում պարունակում դատական քննությանն անձի մասնակցության մասին: Օրինակ, վճիռներից մեկի համաձայն՝ «*անգործունակ ճանաչվող անձը ներկայացել է դատական նիստին, դատարանի հարցերին չի կարողացել պատասխանել*»:[84] Նույն դատական կազմով քննված մեկ այլ գործով դատարանն արձանագրել է, որ անձը «*դատաքննության ընթացքում եղել է սթափ, հասկացել է քննվող գործի էությունը, դատարանի հարցերին պատասխանել է հստակ: Հետևաբար, չնայած անձի մոտ առկա հոգեկան հիվանդության, այն արտահայտված չէ այն աստիճան, որ նրան զրկի իր գործողությունների նշանակությունը հասկանալուց կամ դրանք ղեկավարելուց*», ինչի հետևանքով, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարանի կողմից մերժվել է:[85] Անհրաժեշտ է նշել, որ անգործունակ ճանաչվող անձին հարցեր ուղղելու վերաբերյալ նշում պարունակում են գործերից միայն երեքը:[86]

Անձի բացակայությամբ տեղի ունեցած գործերից վեցի դեպքում անձը դատական քննությանը չի կանչվել այն պատճառաբանությամբ, որ «*առողջական վիճակը դա թույլ չի տալիս*»: Միաժամանակ, սակայն, դատական ակտերը նման որոշման կայացման հիմնավորում չեն պարունակում:[87]

Անգործունակ ճանաչվելու ենթակա անձի բացակայությամբ տեղի ունեցած դատական քննության պայմաններում դատական ակտերից միայն վեցն են նշում պարունակում վերջինի՝ ծանուցված լինելու վերաբերյալ[88] և միայն դատական ակտերից մեկն է նշում անձի բացակայության հիմնավոր պատճառի՝ *հոգեկան առողջության կենտրոնում բուժման մեջ գտնվելու պատճառով*:[89] Ընդ որում, ուսումնասիրված գործերից միայն երեքում է անձը ունեցել դատավարական կարգավիճակ՝ ներգրավված լինելով որպես երրորդ անձ:[90]

Մնացած բոլոր 78 գործերով կայացված դատական ակտերում բացակայում է անգործունակ ճանաչվող անձին պատշաճ ծանուցելու և դատական նիստին բացակայելու հիմնավոր պատճառների վերաբերյալ որևէ նշում:

Միաժամանակ, ուսումնասիրման ենթարկված դատական ակտերից ոչ մեկում անգործունակ ճանաչվելու ենթակա անձը իրավական ներկայացուցիչ չի ունեցել:[91]

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանը վայելում է որոշակի հայեցողություն անգործունակ ճանաչման ենթակա անձի մասնակցությունը դատական քննությանն ապահովելու հարցում՝ սահմանելով, որ քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը:[92] Ըստ էության, օրենսդրական դրույթի նման ձևակերպման շրջանակներում գործում է անձի՝ դատական քննությանը մասնակցության հնարավորության բացակայության կանխավարկածը:

ՄԻԵԴ պրակտիկա

---

[84] Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՇԴ/0310/02/14 գործով 15 հուլիսի 2014թ. վճիռը:

[85] Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՇԴ/0365/02/13 գործով 12 փետրվարի 2014թ. վճիռը:

[86] Նախորդ հղումները:

[87] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԳԴ/0620/02/12 գործով 7 փետրվարի 2013թ. վճիռը:

[88] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ/1689/02/13 գործով 16 հուլիսի 2014թ. վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1677/02/12 գործով 10 հոկտեմբերի 2013թ. վճիռը:

[89] Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՇԴ/0529/02/14 գործով վճիռը:

[90] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ/0794/02/13 գործով վճիռը:

[91] ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2013-2014թթ. ընթացքում գրասենյակի փաստաբանները ներգրավվել են անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ 13 գործում, որոնցից միայն մեկի դեպքում՝ որպես անգործունակ ճանաչման ենթակա անձի ներկայացուցիչ:

[92] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171 հոդված 1-ին մաս:

ՄԻԵԴ դատական պրակտիկայի շրջանակներում հաստատվել է, որ անկախ այն հանգամանքից, որ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմամբ գործերով ներպետական դատարաններն օժտված են որոշակի հայեցողական շրջանակով՝ արդարադատության պատշաճ իրականացման, անձի առողջության պահպանման նպատակով համապատասխան ընթացակարգային միջոցներ ձեռք առնելու իմաստով,[93] սակայն նման միջոցների կիրառումը չպետք է ազդի անձի արդար դատաքննության իրավունքի երաշխիքների վրա:

Դատարանի կողմից լսված լինելու իրավունքը ունի էական նշանակություն վարույթի արդարացիության տեսանկյունից, քանի որ գործունակության իրավունքի սահմանափակման ենթարկվող անձը տվյալ վարույթներում ոչ միայն շահագրգիռ կողմ է, այլև դատական քննության հիմնական օբյեկտն է:[94] Եվ քանի որ վիճարկվում է անձի անձնական անկախությունը կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, ներառյալ անձի անձնական ազատության իրավունքը, անհրաժեշտ է ապահովել նրա անձամբ լսված լինելու իրավունքը:[95]

Մասնավորապես, ՄԻԵԴ-ն արձանագրել է անգործունակ ճանաչվելու ենթակա անձի ուղղակի ներգրավման անհրաժեշտության երկու հիմնական պատճառ՝

առաջին, կողմերի հավասարության սկզբունքը պահանջում է, որ անձը հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործն անձամբ կամ իր ընտրած ներկայացուցչի միջոցով, ներառյալ նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքը, վիճարկելու փորձագետների եզրակացությունները, պահանջելու կրկնակի փորձաքննություն, և այլն,

երկրորդ, անձի ուղղակի մասնակցությունը պահանջվում է՝ դատարանին հնարավորություն տալու կազմելու սեփական պատկերացումը անձի մտավոր ունակության վերաբերյալ, քանի որ անգործունակ ճանաչվող անձը ոչ միայն շահագրգիռ կողմ է, բայց նաև դատարանի քննության հիմնական օբյեկտը:[96] Հետևաբար, նման դեպքերում դատարանի համար անհրաժեշտ է անձի հետ ունենալ թեկուզ կարճատև տեսողական շփում և գերադասելի է՝ հարցաքննել նրան:

Հետևաբար, մրցակցային դատավարության սկզբունքը համարվում է խախտված, երբ դատարանը որոշում է կայացնում միայն գրավոր ապացույցների հիման վրա՝ առանց անձին տեսնելու և լսելու:[97] Անձամբ լսվելու իրավունքից ցանկացած բացառություն կարող է թույլատրվել միայն այդ հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո՝ հիմնված կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագետի կարծիքի վրա, հատկապես անձի վրա դատական քննության հնարավոր հետևանքների առնչությամբ:[98] Դատարանն ամրագրել է, որ միայն հոգեկան հիվանդության առկայությունը բավարար հիմք չէ անձին դատական քննությանը չներգրավելու համար,[99] այլ պետք է պատշաճ և բավարար հիմնավորումներ ունենա:[100] Հետևաբար, գործունակության իրավունքի սահմանափակման առնչությամբ տարվող դատական քննության վերաբերյալ անձը պետք է պաշտոնապես ծանուցվի և ապահովվի նրա ներկայությունը:[101]

Ավելին, դատավարության մրցակցության և անձի իրավունքների և շահերի պաշտպանության ապահովման նպատակով անհրաժեշտ է երաշխավորել անձի իրավաբանական օգնության իրավունքը: Մասնագիտացված իրավաբանական օգնությունը նման գործերով ունի աննախադեպ կարևորություն, քանի որ այն ունենում է լուրջ հետևանքներ անձի տարբեր իրավունքների համար, վերաբերում է անձի հոգեկան և մտավոր առողջությանը՝

---

[93] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 68:
[94] ՄԻԵԴ, *Իքսը և Իգրեկն ընդդեմ Խորվաթիայի*, կետ 83:
[95] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 71:
[96] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 72:
[97] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետեր 73-74:
[98] ՄԻԵԴ, *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 82:
[99] ՄԻԵԴ, *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 82:
[100] ՄԻԵԴ, *Բերկովան ընդդեմ Սլովակիայի* /Berkova v. Slovakia, թիվ 67149/01, 24 մարտի 2009, կետ 144.
[101] ՄԻԵԴ, *Միկորեն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, կետ 99:

ներառելով փորձագետների հարցաքննության անհրաժեշտություն: Սակայն, ներկայացուցչի ձևական ընտրությունը դեռևս բավարար չէ տվյալ պահանջի բավարարման համար. անհրաժեշտ է ապահովել անձի պատշաճ ներկայացուցչությունը, ինչը պահանջում է, որպեսզի ներկայացուցիչը հանդիպի անձին, արդյունավետ մասնակցություն ունենա դատական լսումներին:[102]

ՀՀ վճռաբեկ դատարանի մոտեցում

Անձի լսված լինելու իրավունքի ապահովման առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը *Վլադիմիր Օհանովի վերաբերյալ* որոշմամբ արձանագրել է, որ «անձին իր գործի քննությանը մասնակից դարձնելու հայեցողական լիազորությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է իրականացվի այնպես, որպեսզի երաշխավորվի անձի արդար դատաքննության իրավունքի, դատարանում լսվելու, իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով իր շահերը դատարանում ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացումը: Վճռաբեկ դատարանը հաստատել է, որ իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս դատարանը կաշկանդված է այնքանով, որքանով չպետք է թույլ տալ սխալ գնահատել անձի առողջական վիճակը, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողությունը: Այլապես, դա ոչ միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլև անձին կզրկի իր իրավունքներն ու օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու հնարավորությունից»:[103]

Վճռաբեկ դատարանի որոշմամբ հաստատվել է, որ յուրաքանչյուր դեպքում անձին անգործունակ ճանաչելու դիմում քննելիս դատարանը պարտավոր է քաղաքացուն ծանուցել նիստի ժամանակի և վայրի մասին՝ հնարավորություն տալով անձամբ ներկա գտնվելու, անհնարինության դեպքում իր շահերը դատարանում ներկայացնել իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով, ինչպես նաև պարտավոր է քաղաքացուն ծանուցել անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի մասին՝ հնարավորություն տալով օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու տվյալ վճիռը: Անգործունակ ճանաչվող անձի ներկայությունը դատարանում ապահովելը կարևորվել է նաև այն հանգամանքով, որպեսզի «դատավորին հնարավորություն տրվի անսխալ կարծիք ձևավորել անձի առողջական վիճակի, իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու կարողության մասին, ինչպես նաև անգործունակ ճանաչվող անձին հնարավորություն տրվի օգտվելու իր դատավարական իրավունքներից: Անձի ներկայությունը դատական նիստին կօժանդակի դատարանին պարզելու նաև, թե արդյոք դիմում տված ընտանիքի անդամները վարվել են անբարեխիղճ՝ ակնհայտորեն նպատակ ունենալով քաղաքացուն անհիման զրկել գործունակությունից»:[104]

ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշում

Անձին անգործունակ ճանաչելու վարույթի ընթացքում անձի դատավարական իրավունքների պաշտպանվածության առնչությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի քննության վերաբերյալ որոշմամբ:[105] Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ անգործունակ ճանաչվելու ենթակա անձի՝ վարույթին մասնակցության առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դրույթը սահմանափակող բնույթ ունի: Հետևաբար, այն անհրաժեշտ է մեկնաբանել և կիրառել այն իմաստով, որ

---

[102] ՄԻԵԴ, *Միկորեն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, կետ 108:

[103] ՀՀ Վճռաբեկ դատարան, *Վ. Օհանովի վերաբերյալ որոշումը*, ԵՇԴ/0938/02/10, 24 մայիսի 2013թ:

[104] Նույն տեղում:

[105] ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ՔԴՕ 171-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում, 7 ապրիլի 2015թ:

«քաղաքացին չի կարող կանչվել դատական նիստի բացառապես այն դեպքում, եթե իր առողջական վիճակը դա թույլ չի տալիս»:[106]

Մասնավորապես, Դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հստակ դատավարական կարգավիճակով չի օժտում այն անձին, ում գործունակության հարցը քննվում է դատարանում: Ավելին, անձի դատավարական իրավունքների իրականացումը սահմանափակվում է միայն դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությամբ, ինչն *ինքնին ձևակերպման տեսանկյունից վիճահարույց է*:[107] Հետևաբար, զրկված լինելով դատավարական կարգավիճակից՝ «*անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, հստակ չեն ապահովվում իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները*»:[108]

Դատավորների հետ իրականացված հարցազրույցների արդյունքները փաստում են դատաքննությանը մասնակցելու առնչությամբ նրանց ունեցած տարբեր մոտեցումների մասին:

Այսպես, դատավորներից միայն մեկը շեշտեց, որ անգործունակ ճանաչվելու ենթակա անձի մասնակցությունը պարտադիր ապահովվում է սեփական ներքին համոզմունքը ձևավորելու և դիմումատուին զգոնացնելու համար: Հիմնականում անձի ներկայությունը ապահովվում է դիմողի վրա նման պարտավորություն դնելով և հիմնականում նախնական դատական նիստի ընթացքում՝ հոգեկան հիվանդության առկայության հիմնավոր կասկածի հաստատման համար: Միաժամանակ, սակայն, հոգեկան հիվանդության առկայության հիմնավոր կասկածը փարատվում է դիմումի և դրան կից ներկայացված բժշկական փաստաթղթերի հիման վրա:

Հոգեկան հիվանդության առկայության հիմնավոր կասկածը հաստատվում է բժշկական փաստաթղթերի հիման վրա՝ հոգեբուժական հաստատություններում գրանցված լինելը, նախկինում ստացած բուժումները: Այդ պատճառով հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր բուժման ենթարկելու գործերը առավել խնդրահարույց են, քանի որ հենց դրանցով են անձին անգործունակ ճանաչելու հիմքեր ստեղծվում:

Դատավոր

Անձի ինքնության ճշտումից շատ բան արդեն պարզ է… ու դա կատարվում է դատավարական ֆորմալիզմից դուրս: Նման պարզ հարցերի ընկալման հնարավորությունը ինձ համար կարևոր է հոգեկան հիվանդության առկայության կասկածը հաստատելու համար:

Դատավոր

Ունեցել եմ դեպք, երբ անգործունակ ճանաչվելու ենթակա անձին ծանուցելուց հետո դիմողը հրաժարվել է դիմումից, այսինքն անձի մասնակցությունը իսկապես կարևոր նախապայման է հնարավոր չարաշահումներից զերծ մնալու համար:

Դատավոր

Նույնիսկ եթե անձը ծանուցվում է, պարզ չէ, թե ով է ստանում ծանուցագիրը ու ստորագրում: Դատարանը դա ստուգելու հնարավորություն չունի: Ավելին, պարզ չէ, թե արդյոք անձն ընկալում է ծանուցագրի և առհասարակ, դատական քննության էությունը:

Դատավոր

[106] Նույն տեղում, էջ 14:
[107] Նույն տեղում, էջ 13:
[108] Նույն տեղում, էջ 14:

Դատավորները մատնանշեցին, որ անձի դատավարական կարգավիճակի անհստակությունը նրան դատական քննությանը ներգրավելու հիմնական խնդիրներից և խոչընդոտներից է:

Հատուկ վարույթի շրջանակներում քննվող հարց է, որպես այդպիսին չկա վեճ: Որպես ի՞նչ ներգրավեմ անձին:
Դատավոր

Անձի իրավական պաշտպանության տեսանկյունից դատավորների հետ քննարկվել է նաև անգործունակ ճանաչման ենթակա անձի իրավական ներկայացուցչության ապահովման հարցը՝ որպես դատավարական իրավունքների պաշտպանվածության երաշխիք:

Ըստ էության դատավորները համաձայնեցին, որ անձի իրավունքների, ինչպես նաև արդարադատության պահանջներից է բխում անձի իրավական պաշտպանությունը տվյալ գործերով, քանի որ «*անձը զրկվում է ըստ էության իր բոլոր իրավունքներից*» /*դատավոր*/ և նման կերպ «*գոնե անձի դատավարական իրավունքները կպահպանվեն*» /*դատավոր*/:

Սակայն, միաժամանակ, բարձրաձայնվեց դատարանի համար հնարավոր խնդիրների վերաբերյալ: Դատավորներից մեկը հայտնեց, որ

«եթե անձը չի ընկալում ու չի ղեկավարում իր գործողությունները, ներկայացուցչի մասնակցության հարցը բարդանում է, քանի որ նա չի կարող պատշաճորեն լիազորվել ներկայացուցչությունն իրականացնելու համար: Կարող է, արդյոք, անձը գիտակցել ու ստորագրել լիազորագիրը»:

«Եթե անձը չի հասկանում վարույթի էությունը, ներկայացուցչի ներգրավումը ֆիկտիվ, զուտ ձևական բնույթ կկրի»:

Դատավոր

3. Անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումների հիմնավորվածություն

Դատական գործերի ուսումնասիրությունը փաստում է, որ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճիռը կայացվում է ոչ բավարար, միայն գրավոր ապացույցների հիման վրա: Մասնավորապես, անձին ճանաչվում են անգործունակ հիմնականում դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա:

Նույնիսկ այն դեպքերում, երբ դատարանը ուսումնասիրում է նաև դիմումատուի և խնամակալության և հոգաբարձության մարմնի դիրքորոշումը, անձին անգործունակ ճանաչելու մասին որոշումն ուղղակիորեն հաստատում է դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության արդյունքները: Նման մոտեցումը հնարավոր չարաշահումների լուրջ ռիսկեր է պարունակում, և անձի դատական պաշտպանության իրավունքը տեսական և ձևական բնույթ է կրում՝ հաշվի առնելով անձին անգործունակ ճանաչելու համար դիմողի շահագրգռվածության և շահերի բախման հնարավորությունը, խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչների կողմից դատահոգեբուժական փորձաքննության արդյունքներին անշահարկելի ընդունումը,[109] ինչպես նաև անգործունակ ճանաչման ենթակա անձի դատավարական իրավունքների վերոգրյալ խախտումները:

[109] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ/0600/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/2468/02/13 գործով վճիռը.

Ավելին, դատական ակտերի ուսումնասիրությունը փաստում է, որ հաճախ դատարանների կողմից անձին անգործունակ ճանաչելու հիմքում որպես ապացույց դրվում է բացառապես դատաբժշկական փորձաքննության արդյունքը:

Օրինակ ուսումնասիրված դատական ակտերից, որում դատարանն արձանագրել է, որ «*սույն դեպքում անձին անգործունակ ճանաչելու դիմում ներկայացրել է նրա ընտանիքի անդամը՝ հայրը, իսկ «անձը» տառապում է հոգեկան հիվանդությամբ, որի հետևանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք: Նշված երկու պայմանները դատարանը բավարար է համարում դիմումը բավարարելու և «անձին» անգործունակ ճանաչելու համար*»:[110]

Այսինքն, դատարանը, որպես անձին անգործունակ ճանաչելու ապացույց դիտարկել է միայն դատահոգեբուժական փորձաքննության արդյունքը, որով հաստատվել է անձի մոտ առկա հոգեկան հիվանդությունը, ինչի հետևանքով վերջինս չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք:

ՄԻԵԴ պրակտիկա

ՄԻԵԴ դատական պրակտիկայով ամրագրվել է, որ անձի մտավոր ունակությունների կամ հոգեկան առողջության ցանկացած գնահատում պետք է հիմնված լինի համապատասխան բժշկական փաստաթղթերի վրա:[111] Միաժամանակ, հիմնվելով ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձնաց իրավունքների կոմիտեի մոտեցումներին՝ ՄԻԵԴն ընդգծել է հոգեկան և մտավոր առողջության և գործունակության միջև տարբերակումը:

Դատարանն ընդգծել է մասնագիտական և համընդգրկուն փորձագիտական եզրակացության կարևորությունը անձի հոգեկան և մտավոր ունակությունների գնահատման հարցում, որով պետք է բավարար և մանրակրկիտ գնահատական տրվի և պարզաբանվի, թե ինչպիսի գործողություններ է անձն անկարող ընկալել կամ ղեկավարել, և ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ հիվանդությունը անձի սոցիալական կյանքի, առողջության, նյութական շահերի և կյանքի այլ ոլորտների համար:[112]

> *Սակայն, անձի գործունակության իրավունքի սահմանափակման անհրաժեշտության գնահատումը պետք է կատարվի ոչ թե բժիշկ-մասնագետի, այլ դատարանի կողմից՝ հաշվի առնելով անձին առնչվող բոլոր փաստերը և նրա անձնական հանգամանքները:*[113]

Դատական իշխանության ներկայացուցիչների կարծիքով անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերով այլ ապացույցների ուսումնասիրությունը, ինչպիսիք են օրինակ, վկաների ցուցմունքները և այլն, գործի լուծման համար նշանակություն ունենալ չեն կարող, քանի որ տվյալ դեպքում հիմնական հարցը, թե արդյոք անձը կարող է հասկանալ և ղեկավարել իր գործողությունները կարող է լուծվել միայն համապատասխան մասնագիտական կարծիքի հիման վրա:

«*Եթե փորձագետները հաստատում են անձի անգործունակ լինելու հանգամանքը, էլ ի՞նչ պետք է ասեն վկաները: Եթե հիմնավորվում է անձի հոգեկան հիվանդության առկայությունը, վկաների ցուցմունքները անձի վերաբերյալ իմաստ չեն ունենա*»:

Դատավոր

---

[110] Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՍԴ/ 0472/02/13 գործով վճիռը:

[111] ՄԻԵԴ, *Իվինոնիչն ընդդեմ Խորվաթիայի*, կետ 40.

[112] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետեր 93-94, *Միկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, կետ 103:

[113] ՄԻԵԴ, *Իվինովիչն ընդդեմ Խորվաթիայի*, կետ 40:

Այլ ապացույցների հետազոտման անհրաժեշտության վերաբերյալ նույն տեսակետն ունեն նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները, ինչպես նաև անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերին որպես դիմողի ներկայացուցիչ ներգրավված փաստաբանները:

Անձի դատավարական իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր է փաստել, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները որպես կանոն անձին չեն հանդիպում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ անձը ներկա է գտնվում դատական քննությանը կամ «*նրա խնդրի վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում: Սակայն կասկած սովորաբար չի լինում, որովհետև նման անձինք հիմնականում ունենում են հաշմանդամության կարգ, բազմաթիվ փաստաթղթեր*»:

Խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչ

«Անձին տեսնելու պարտավորություն խնամակալության և հոգաբարձության մարմինները չունեն, ավելին, անձին տեսնելու իմաստը ո՞րն է, դատարանում ասելը, որ անձը իսկապես հիվանդ է:՞ Դա որոշվում է փորձաքննությամբ, հետևաբար, խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը միայն միջնորդում է կատարել փորձաքննություն»:

Խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչ

«Տվյալ գործերով հիմնական ապացույցը փորձագիտական եզրակացությունն է, քանի որ այն է որոշում անձի գործունակությունը: Դա է հիմքը»:

Փաստաբան

4. Դատահոգեբուժական փորձաքննության շրջանակը

Անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական վարույթներում դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության վճռորոշ նշանակությամբ պայմանավորված՝ կարևորվում է փորձաքննության շրջանակներն ու հիմնավորվածությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն:[114] Փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:[115] Օրենսդրությունը չի նախատեսում փորձագետներին առաջադրվող հարցերի շրջանակը, բովանդակությունը՝ դրանք թողնելով դատարանի հայեցողությանը:

ՄԻԵԴ պրակտիկա

ՄԻԵԴ դատական պրատիկան հաստատում է, որ հիմք ընդունելով անձի մտավոր վիճակի փոփոխությունների և զարգացումների հնարավորությունը՝ նրա գործունակության իրավունքի առնչությամբ որոշումը պետք է հիմնված լինի արդի դատահոգեբուժական փորձաքննության վրա: Հնացած փորձագիտական եզրակացությունները չեն կարող դիտարկվել որպես վստահելի և որոշիչ ապացույց անձի իրավունքներին միջամտությունն արդարացնելու համար:[116] Ավելին, քանի որ վտանգվում են անձի կարևորագույն իրավունքները, հատուկ կարևորություն պետք է տալ փորձագետների անկախությանն ու պրոֆեսիոնալիզմին:[117]

---

[114] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 170:

[115] Նույն տեղում, հոդված 60, կետ 3:

[116] ՄԻԵԴ, *Ստանևն ընդդեմ Բուլղարիայի*, կետ 156:

[117] ՄԻԵԴ, *Հաշինն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 87:

Ինչպես վերը նշվեց, համաձայն ՄԻԵԴ կողմից ձևավորված չափանիշների՝ դատահոգեբուժական փորձաքննությամբ պետք է տրամադրվի անձի ունակությունների վերաբերյալ բավարար մանրակրկիտ վերլուծություն,[118] որի պայմաններում դատարանը կարող է պատշաճորեն գնահատել անձին գործունակության իրավունքից զրկելու անհրաժեշտությունը: Դրանում պետք է բավականին մանրակրկիտ ներկայացված լինի անձի հիվանդության տեսակը, աստիճանը, դրա ամբողջական պատմությունը,[119] ինչպես պետք է մանրակրկիտ պարզաբանվի, թե ինչպիսի ազդեցություն է այն ունենում անձի անձնական կյանքի, առողջության, նյութական շահերի և կյանքի այլ ոլորտների վրա, ինչպիսի հետևանքներ է ունենում անձի՝ որոշումներ կայացնելու և գործողությունները ղեկավարելու ունակության վրա: [120]

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրված բոլոր գործերով դատարանի կողմից նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն, սակայն փորձաքննություն նշանակելու վերաբերյալ ուսումնասիրված բոլոր որոշումներում[121] փորձագետներին ուղղված են եղել ընդհանրական բնույթի հարցեր, ինչպես նաև մեծամասամբ դատարանի կողմից որոշման ենթակա՝ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ իրավական բնույթի հարցեր:

Օրինակներ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ կայացված որոշումներում փորձագետներին առաջադրված հարցերից՝

Արդյոք փորձաքննության ենթակա անձը հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ: Եթե այո, ապա ինչպիսի, և այդ պայմաններում կարող է նա հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:[122]

Քաղաքացին որևէ հոգեկան խանգարմամբ տառապում է, թե ոչ: Եթե այո, երբվանից և դրա հետևանքով կարող է արդյոք հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Արդյոք առկա են հիմքեր քաղաքացուն անգործունակ ճանաչելու համար:[123]

Ինչ հիվանդությամբ է տառապում Անձը և կարող է արդյոք հաշիվ տալ իր գործողություններին և ղեկավարել դրանք:[124]

Ավելին, փորձագետներին հաճախ ուղղակիորեն առաջադրվում է հարց, թե արդյոք անձը հանդիսանում է անգործունակ, թե ոչ,[125] որպիսի պայմաններում փաստորեն փորձագետները առնչվում են դատարանի կողմից անմիջականորեն լուծման ենթակա *<u>իրավական</u>* հարցի հետ:

Նման դեպքերում, անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռը փաստացիորեն հաստատում է փորձագիտական եզրակացության արդյունքը:

---

[118] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 94:

[119] ՄԻԵԴ, *Հաշինն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 94:

[120] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետեր 93-94, *Միկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, կետ 103:

[121] Ուսումնասիրված գործերի շրջանակներում նշանակված դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միայն 57-ի դեպքում է որոշումը հասանելի եղել *Դատալեքս* դատական տեղեկատվական համակարգում:

[122] Օրինակ, Թիվ ԵԱԴԴ 0238/02/13 քաղաքացիական գործով դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը:

[123] Թիվ ԼԴ/1507/02/13 քաղաքացիական գործով դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը:

[124] Թիվ ԵԿԴ 2468/02/13 քաղաքացիական գործով դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը:

[125] Թիվ ԵԷԴ/0620/02/13 քաղաքացիական գործով դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը:

Օրինակներ դատական ակտերից.

Դատարանը, լսելով դիմողի բացատրությունները, հետազոտելով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ … եզրակացությունը, համաձայն որի … «Փորձաքննվողի մոտ սակավամտությունն արտահայտված է այն աստիճան, որ զրկում է նրան իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու ունակությունից, ուստի Անձին <u>հարկ է ճանաչել անգործունակ</u>», գտնում է, որ առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31 հոդվածով նախատեսված հիմքերը անգործունակ ճանաչելու համար:[126]

Դատաքննությամբ հիմնավորվեց, որ համաձայն ՀՀ Առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի… եզրակացության Անձը տառապում է … հոգեկան հիվանդությամբ, որը զրկում է նրան իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու հնարավորությունից, ուստի նրան <u>հարկ է ճանաչել անգործունակ</u>:[127]

Հանձնաժողովը եզրակացնում է, որ Անձը տառապում է ծանր մտավոր հետամնացություն, ֆենիլկետոնուրիա հոգեկան հիվանդությամբ, որն արտահայտված է այն աստիճան, որ զրկում է իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք զեկավարելու ունակությունից: Ուստի, իր հոգեկան վիճակով Անձը <u>կարող է ճանաչվել ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ</u>:[128]

Այսպիսով, դատական գործերի ուսումնասիրությունը փաստում է, որ անձին անգործունակ ճանաչելու գործերով իրականացված դատահոգեբուժական փորձաքննությունները հիմնականում հանգում են անձի մոտ առկա հոգեկան հիվանդության հաստատմանը՝ առանց պարզաբանելու, թե կոնկրետ ինչպիսի գործողություններ անձը չի կարող ընկալել և ղեկավարել, ինչպես նաև դրա ազդեցությունը անձի սոցիալական կյանքի, առողջության և այլ իրավունքների իրացման վրա:

5. Դատարանների կողմից միջազգային նորմերի և չափանիշների կիրառում

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:[129]

Ավելին, ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է, որ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործող վճռաբեկ դատարանի կամ ՄԻԵԴ դատական ակտի հիմնավորումները, այդ թվում օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:[130]

Մինչդեռ ուսումնասիրված դատական ակտերից որևէ մեկում կիրառված չեն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթներ՝ ներառյալ ինչպես ՀՈՒԱԻԿ կամ ՄԻԵԿ

---

[126] Տես, Անձին անգործունակ ճանաչելու մասին, թիվ ԵԱՔԴ/1111/02/13 գործով վճիռը:

[127] Տես, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ 0757/02/12 գործով վճիռը:

[128] Տես, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ/1689/02/13 գործով վճիռը: Տես, նաև Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ /0499/02/12 գործով վճիռը:

[129] ՀՀ Սահմանադրություն, հոդված 6:

[130] ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 15, մաս 4:

նորմեր, այնպես էլ ՄԻԵԴ դատական ակտերով գործունակության իրավունքի վերաբերյալ կատարված մեկնաբանությունները և սկզբունքները:

Միջազգային իրավական դրույթների չկիրառման պատճառները հանգում են հիմնականում դատական իշխանության ներկայացուցիչների, փաստաբանների, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչների կողմից միջազգային իրավական զարգացումների վերաբերյալ իրազեկվածության պակասին:

Այսպիսով, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը հակասում է ոլորտին առնչվող մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Ավելին, դատարանների կողմից անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական գործերի քննությունն իրականացվում է անձի արդար դատաքննության իրավունքի կարևորագույն սկզբունքների խախտմամբ:

3. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անգործունակ ճանաչելու հետևանքներն այլ իրավունքների և ազատությունների իրականացման և պաշտպանության համար

ՀՀ գործող օրենսդրության պայմաններում անգործունակ ճանաչվելու դեպքում անձն ուղղակիորեն զրկվում է մի շարք իրավունքներից, ինչպես նաև ենթարկվում այլ իրավունքների և ազատությունների սահմանափակման և խախտման ռիսկերի:

Այսպես, գործունակության իրավունքից զրկելու հետևանքով սահմանափակվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կարևորագույն իրավունքներ, ինչպիսիք են անձի անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը,[131] իրավական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները,[132] սեփականության իրավունքը,[133] հասարակական և քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը, ինչպես նաև սահմանափակման լուրջ ռիսկի են ենթարկվում անձի ազատության և անձնական անձեռմխելիության իրավունքը,[134] առողջության պահպանման իրավունքը,[135] խոշտանգումներից, դաժան կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքը[136] և այլ իրավունքներ:

Ավելին, ուսումնասիրված դատական ակտերում որպես անձին անգործունակ ճանաչելու հիմնական պատճառներ արձանագրվել են հետևյալները

1. Անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացիական շրջանառության մեջ դնելու անհրաժեշտությունը[137]
2. անձի անունից գործարքներ կնքելու, ինչպես նաև կենսաթոշակի հաշվառման և ստացման անհրաժեշտությունը[138]
3. հոգեբուժական հիվանդանոցում անձի բուժման անհրաժեշտությունը[139]
4. անձին մշտական կողմնակի խնամքի և հսկողության անհրաժեշտության, ինչպես խնամքի հաստատությունում տեղավորելու անհրաժեշտության պատճառով[140]

Այսպիսով, դատարանի կողմից անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճիռներում բերվում են պատճառաբանություններ, որոնք ըստ էության պարունակում են ապագայում կոնկրետ անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման և խախտման հիմքեր:

1. Անձնական և ընտանեկան կյանքի իրավունք

Գործունակության իրավունքից զրկումն ուղղակիորեն ազդում է անձի անձնական և ընտանեկան, այդ թվում ծնողական իրավունքների վրա: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ արգելվում է ամուսնություն կնքել այն անձանց միջև, որոնցից թեկուզ

---

[131] ՀՀ Սահմանադրություն, հոդված 23:

[132] Նույն տեղում, հոդվածներ 18 և 19:

[133] Նույն տեղում, հոդված 31:

[134] Նույն տեղում< հոդված 16:

[135] Նույն տեղում, հոդված 38:

[136] Նույն տեղում, հոդված 17:

[137] Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԳԴ4/0309/02/11 գործով վճիռը:

[138] Օրինակ անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/3130/02/13 գործով վճիռը, ինչպես նաև Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԿԴ 1/1074/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու մասին թիվ ՇԴ/0810/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու մասին թիվ ԳԴ/0218/02/09 գործով վճիռը:

[139] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՇԴ/0529/02/14 գործով վճիռը, ինչպես նաև Անձին Անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԳԴ4/0268/02/12 գործով վճիռը:

[140] Օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ՍԴ/ 0410/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ/1545/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու մասին թիվ ԳԴ4/0377/02/12 գործով վճիռը:

մեկին դատարանն անգործունակ է ճանաչել,[141] իսկ կնքված ամուսնությունը կարող է դադարել անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հիման վրա:[142]

Գործունակությունից զրկված անձինք զրկվում են նաև ծնողական իրավունքներից: Մասնավորապես, ըստ օրենսդրության՝ անգործունակ ճանաչված ծնողի երեխան մյուս ծնողի բացակայության դեպքում համարվում է առանց ծնողական խնամքի մնացած և համապատասխան մարմինների կողմից ենթակա է տեղավորման ընտանիքում կամ երեխաների համար նախատեսված խնամքի կազմակերպություններում:[143] Հատկանշական է, որ անգործունակ ճանաչված անձի երեխայի որդեգրման,[144] երեխայի ազգանունը փոխելու[145] դեպքում նրա համաձայնությունը օրենքով չի պահանջվում: Միաժամանակ, անգործունակ ճանաչված անձանց արգելվում է լինել որդեգրողներ,[146] ինչպես նաև խնամատար ծնողներ:[147]

Մինչդեռ, ՀՈՒԱԻԿ 23-րդ հոդվածը սահմանում է ամուսնական տարիքի հասած հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց, այդ թվում՝ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ամուսնության և ընտանիք կազմելու իրավունքը՝ հիմնված ամուսնացող անձանց ազատ և լիարժեք համաձայնության /կամքի/ վրա: Ավելին, նույն հոդվածի համաձայն՝ պետությունները պարտավոր են ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը ունենալու երեխաներ և պարտավոր են ապահովել համապատասխան աջակցություն երեխաների դաստիարակման պարտականությունների կատարման հարցում:[148]

Կոմիտեն մի շարք պետությունների զեկույցների վերաբերյալ ամփոփիչ եզրակացություններում պետություններից պահանջել է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց անձնական կյանքի իրավունքը, ներառյալ՝ ամուսնության, երեխա որդեգրելու և այլն:[149]

Հոգեկան հաշմանդամություն ունեցող անձի ամուսնության իրավունքին անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը Լաշինն ընդդեմ Ռուսաստանի գործով:[150] Անգործունակ ճանաչվելու և նրա նկատմամբ խնամակալություն նշանակվելու արդյունքում Դիմումատուն զրկված է եղել իր ամուսնությունը գրանցելու հնարավորությունից: Բողոքների արդյունքում Դիմումատուն հոսպիտալացվել էր հոգեբուժական հիվանդանոցում ավելի քան մեկ տարի ժամկետով: Ըստ ռուսական օրենսդրության՝ քանի որ խնամակալը համաձայնել է Դիմումատուի հոսպիտալացմանը, նրա հոսպիտալացումը համարվել է կամավոր: Ի լրումն այլ իրավունքների խախտումների՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ամուսնության արգելքը անգործունակության մի շարք իրավական հետևանքներից մեկն է և ներպետական օրենսդրական գործող կարգավորման պայմաններում, երբ անձը իրավասու չէ դիմելու գործունակության վերականգնման պահանջով, անհամաչափ միջամտություն է՝ ի խախտումն անձի մասնավոր կյանքի իրավունքի:[151]

---

[141] ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 11.դ:

[142] Նույն տեղում, հոդված 13.2:

[143] Նույն տեղում, հոդվածներ 109-111: Տվյալ մոտեցումը խախտում է ոչ միայն անգործունակ ծնողների ծնողական իրավունքները, այլև երեխայի իրավունքները, քանի որ անգործունակ ճանաչված ծնողներից երեխան կարող է տեղափոխվել առանց վերջինի լավագույն շահերի՝ ծնողի հետ ապրելու և նրա կողմից դաստիարակվելու հնարավորության գնահատման բացակայության պայմաններում:

[144] Նույն տեղում, հոդված 119.բ:

[145] Նույն տեղում, հոդված 46:

[146] ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ որդեգրման իրավունքի չունեն նաև այն ամուսինները, որոնցից թեկուզ մեկը ճանաչվել է անգործունակ: Հոդված 116.1(ա) և (բ) կետեր:

[147] Նույն տեղում, հոդված 138.1:

[148] ՀՈՒԱԻԿ, հոդված 23, 1-ին և 2-րդ մասեր:

[149] CRPD, *Concluding Observations on Azerbaijan*, 12 May 2014, UN Doc.CRPD/C/AZE/CO/1; CRPD, *Concluding Observations on Costa Rica*, 12 May 2014, UN. Doc. CRPD/C/CRI/CO/1.

[150] ՄԻԵԴ, *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի* (Lashin v. Rassia), թիվ 33117/02, 22 հունվարի 2013թ:

[151] ՄԻԵԴ, *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 124:

Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի երեխաների տեղավորման և նրան ծնողական իրավունքներից զրկելու հարցին ՄԻԵԴն անդրադարձել է Ռ-ն ընդդեմ Ռումինիայի գործում:[152] Ըստ Դատարանի՝ անկախ այն հանգամանքից, որ երեխաներին խնամքի կենտրոնում տեղավորելը բխել է նրանց լավագույն շահերից, քանի որ մոր՝ հոգեբուժական հիվանդանոց ընդունվելուց հետո, երեխաները մնացել են առանց համապատասխան խնամքի և հսկողության, դուրս մնացել նաև դպրոցից, այդուամենայնիվ, ծնողի կողմից երեխաների տեղավորման վերաբերյալ որոշման կայացմանը չմասնակցելը, ինչպես նաև որոշում կայացնող մարմինների և ծնողի միջև այլ կերպ կապի հաստատման բացակայությունը հանդիսանում է անձի անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի խախտում: Այսինքն, անձին ուղղակիորեն իր ծնողական իրավունքներից զրկելը խախտում է նրա անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը:

2. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Անգործունակ ճանաչված անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը թերևս ամենախոցելի իրավունքներից է, քանի որ անգործունակ ճանաչված անձին հոգեբուժական հիմնարկում, ինչպես նաև սոցիալական խնամքի հաստատությունում տեղավորելու դեպքերը շարունակական են և լայն տարածում ունեն Հայաստանի Հանրապետությունում:

Անձի մեկուսացումը հոգեբուժական հաստատությունում

ՀՀ «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա[153]: Տվյալ օրենքի տեսանկյունից՝ անձի օրինական ներկայացուցիչ հանդիսանում է նրա խնամակալը, ում կողմից անձի բուժման համաձայնության դեպքում անձին հոգեբուժական կենտրոնում տեղավորելը համարվում է կամավոր՝ անկախ բուժման ենթակա անձի ցանկությունից:

Օրենսդրական նման կարգավորումը պրակտիկայում հանգեցնում է ինչպես անձի առողջության իրավունքի միջամտության, այնպես էլ անձին կամայականորեն ազատությունից զրկման՝ ի խախտումն ՀՈՒԱԻԿ 14-րդ հոդվածի, որի հիման վրա պետությունները պարտավոր են ներդնել հստակ մեխանիզմներ, որպեսզի հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք առանց իրենց հստակ համաձայնության չտեղավորվեն հատուկ հաստատություններում:[154] Անձին հոգեբուժական հաստատությունում տեղավորելու վերաբերյալ խնամակալի կողմից համաձայնություն տալու առնչությամբ Կոմիտեն բազմիցս հայտնել է իր մտահոգությունը:[155]

Միաժամանակ, անձին հոգեբուժական հաստատությունում մեկուսացնելու վերաբերյալ հստակ դրույթներ պարունակում է ՄԻԵԿ, որի ՄԻԵԿ 5-րդ հոդվածը նախատեսում է անձին ազատությունից զրկելու հիմքերի սպառիչ ցանկ և այդ առնչությամբ հստակ երաշխիքներ: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» ենթակետի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի օրինական ազատազրկումը պետք է տեղի ունենա «օրենքով նախատեսված ընթացակարգին համապատասխան»: Ըստ Դատարանի՝ անձին ազատությունից զրկելու «օրինականությունը» պահանջում է ոչ միայն ներպետական օրենսդրության պահանջների պահպանում, այլև Կոնվենցիայով նախատեսված սկզբունքների պահպանում: ՄԻԵԴ կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին ազատությունից զրկելու հիմքերը սահմանվել են Վինթերվերպն ընդդեմ Նիդերլանդների գործով, որում Դատարանը

---

[152] ՄԻԵԴ, *Բ-ն ընդդեմ Ռումինիայի* (թիվ 2) (B. v. ROMANIA (no. 2)), թիվ 1285/03, 19 փետրվարի 2013թ:

[153] Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենք, հոդված 15, 1-ին մաս:

[154] ՀՈՒԱԻԿ, հոդված 14:

[155] CRPD, *Concluding Observations on Hungary*, UN Doc. CRPD/C/HUN/CO/1, 2012.

սահմանել է անձին հոգեբուժական հիմնարկում հարկադիր հոսպիտալացնելու համար անհրաժեշտ նախապայմանները: Դրանք են մասնավորապես.

- անձի մոտ հոգեկան հիվանդության առկայությունը պետք է հաստատված լինի օբյեկտիվ բժշկական փորձաքննության հիման վրա,
- հոգեկան հիվանդությունը պետք է լինի այն տեսակի կամ աստիճանի, որը կարդարացնի անձի հարկադիր մեկուսացումը,
- անձի շարունակական մեկուսացումը պետք է հիմնավորված լինի հիվանդության տևականությամբ:[156]

Հայաստանի Հանրապետությունում անձի հարկադիր բուժման պայմանների վերաբերյալ պահանջները սահմանված են ՀՀ «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, որը նախատեսում է հարկադիր հոսպիտալացման երկու հիմք, այն է հոգեբուժական հանձնաժողովի կողմից հաստատվել է, որ անձը վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար կամ բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:[157] Տվյալ դեպքում, անձի կողմից բուժումից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելու դեպքում անձին հարկադիր բուժման ենթարկելու համար համախատասխան հոգեբուժական կազմակերպության ղեկավարը դիմում է դատարան:[158]

Այսպիսով, հարկադիր բուժման ենթարկելու պահանջով դատարան դիմելու պարտադիրությունը նախատեսվում է գործունակ անձի կողմից բուժումից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու դեպքում միայն: Անգործունակ ճանաչված անձի խնամակալի կողմից նրան բուժման ենթարկելու համաձայնությունը դիտարկվում է որպես կամավոր հոսպիտալացում՝ ի հակասություն ինչպես ՀՈՒԱԻԿ, այնպես ՄԻԵԿ պահանջների:

ՄԻԵԴ-ը մի շարք գործերում անդրադարձել է հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր մեկուսացման օրինականությանը: Մասնավորապես, Դատարանն արձանագրել է, որ անձին ազատությունից զրկելը բուժական կամ խնամքի հաստատությունում չի սահմանափակվում օբյեկտիվ տարրով՝ որոշակի սահմանափակ վայրում որոշակի ժամանակահատվածում անձին ազատությունից զրկելու մեջ, այլև ազատությունից զրկված գնահատվելու համար պահանջվում է նաև լրացուցիչ սուբյեկտիվ տարրի առկայություն. այն է՝ անձը օրինականորեն չի համաձայնել իր մեկուսացմանը: Սուբյեկտիվ տարրի կարևորությունը հաշվի առնելով՝ Դատարանն անձի ազատությունից զրկում է արձանագրել հետևյալ դեպքերում: Անգործունակ ճանաչված անձի օրինական ներկայացուցչի համաձայնությամբ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորման դեպքում Դատարանն արձանագրել է, որ որոշումներ կայացնելու իրավական հնարավորությունից զրկված լինելու հանգամանքը չի նշանակում, որ անձը փաստացիորեն ունակ չէ հասկանալու իրավիճակը:[159] Դատարանը հիմք է ընդունել անձի գործողությունները՝ հաստատությունը լքելու փորձերը, որոնք հաստատել են հոսպիտալացմանը նրա դեմ լինելը, որի արդյունքում Դատարանն արձանագրել է, որ որոշիչ է անձի վերաբերմունքը մեկուսացմանը, քան վերջինի օրինական կարգավիճակը՝ որպես անգործունակ անձ: Ի տարբերություն տվյալ գործի՝ Դատարանն ազատությունից զրկում է արձանագրել նաև այն դեպքում, երբ Դիմումատուն ըստ էության համաձայնել է հոսպիտալացմանը և երբեք փախուստի փորձեր չի կատարել, սակայն հիվանդության բերումով ինքնուրույն որոշում

---

[156] ՄԻԵԴ, *Վինթերվերպն ընդդեմ Նիդերլանդների*, (Winterwerp v The Netherlands), 24 հոկտեմբերի 1979, թիվ 6301/73, կետ 39:

[157] Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենք , հոդված 22, մաս 1-ին:

[158] Նույն տեղում, մաս 2-րդ:

[159] ՄԻԵԴ, *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 108:

կայացնելու ունակություն չի ունեցել:[160] ՄԻԵԴ կողմից ազատությունից զրկման փաստի առկայությունը հաստատվել է նաև այն դեպքում, երբ անձն ի սկզբանե համաձայնել է հոսպիտալացմանը, սակայն սակայն հետագայում փախուստի փորձեր է կատարել: Դատարանն արձանագրել է, որ ելնելով անձի՝ համաձայնություն տալու ունակության կանխավարկածից, նման վարքագիծը փաստում է, որ անձը համաձայն չէ իր մեկուսացմանը: Հետևաբար, առկա է ազատությունից զրկում:[161]

Սույն պայմաններում, Հոգեբուժական ծառայության մասին ՀՀ օրենքի շրջանակներում անգործունակ ճանաչված անձի հոսպիտալացումը՝ հիմնված միայն նրա օրինական ներկայացուցչի համաձայնության վրա, առանց անձի ցանկության հաստատման, կարող է հանգեցնել ազատության իրավունքի խախտման:

Անձի մեկուսացումը խնամքի հաստատությունում

Ի լրումն հոգեբուժական հիմնարկների, ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է նաև առանց անձի համաձայնության բնակչության սոցիալական պաշտպանության (խնամքի) հաստատություններում տեղավորելու հնարավորությունը: Մասնավորապես, Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի (2005թ.)[162] հիման վրա ՀՀ Կառավարության կողմից ընդունված Ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների խնամքի տրամադրման կարգը հաստատելու վերաբերյալ թիվ 1874-Ն որոշման համաձայն՝ 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդություն կամ մտավոր հետամնացություն ունեցող անձինք շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման և մշտական բնակության համար ենթակա են տեղավորման սոցիալական պաշտպանության հատուկ հաստատություններում,[163] քանի որ, ըստ նույն որոշման, քրոնիկ հոգեկան խանգարումներով տառապող անձանց տնային պայմաններում խնամքի տրամադրում չի իրականացվում:[164]

Տվյալ դեպքում միայն խնամակալի համաձայնությունը բավարար է անձին հատուկ տիպի հաստատությունում տեղավորելու համար: Միաժամանակ, Կառավարության նույն որոշման համաձայն՝ անձը կարող է տեղավորվել համապատասխան հաստատությունում նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ առանց հաճախորդի կամ նրա խնամակալի համաձայնության այն դեպքերում, երբ անգործունակ ճանաչված անձը իր խնամակալից չի ստանում անհրաժեշտ խնամք և ուշադրություն՝ իր հիմնական պահանջմունքները ինքնուրույն բավարարելու անկարողության պայմաններում:[165] Անձին հաստատությունում տեղավորելուց հետո նրա խնամակալ նշանակվում է տվյալ հաստատության ներկայացուցիչը՝ դրա բոլոր իրավական հետևանքներով:

Անհրաժեշտ է փաստել, որ Կառավարության թիվ 1874-Ն որոշումը որևէ դրույթ չի պարունակում հատուկ տիպի սոցիալական հաստատություններում անձի խնամքի դադարեցման պայմանների և կարգի վերաբերյալ, որպիսի պայմաններում անգործունակ ճանաչված անձն ամբողջովին գտնվում է խնամակալ-հաստատության իշխանության ներքո՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

Սոցիալական աջակցության մասին նոր օրենքը[166] հիմնականում կրկնում է նախորդի դրույթները հատուկ տիպի հաստատությունում անձին տրամադրվող խնամքի վերաբերյալ:

---

[160] ՄԻԵԴ, *Հ.Լ. ընդդեմ Միացյալ Թագավորության* (H.L. v. the United Kingdom), թիվ 45508/99, ECHR 2004-IX, կետեր 89-94:

[161] ՄԻԵԴ, *Ստորքն ընդդեմ Գերմանիայի* (Storch v. Germany) թիվ 61603/00, ECHR 2005-V, կետ 76:

[162] Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, ընդունվել է 24 հոկտեմբերի 2005թ, ուժը կորցրել է 1 հունվարի 2015թ:

[163] ՀՀ Կառավարություն, *Ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին* թիվ 1874-Ն որոշում, 7 դեկտեմբերի 2006թ, կետ 27:

[164] Նույն տեղում, Հավելված 2:

[165] Նույն տեղում, կետեր 13-14:

[166] Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, ընդունվել է 17 դեկտեմբերի 2014թ, ուժի մեջ մտել 1 հունվարի 2015թ:

Մասնավորապես, բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ տիպի հաստատությունները նախատեսված են, ի լրումն այլ խմբերի, 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող անձանց կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց համար երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք ապահովելու համար:[167] Անձին խնամքի տրամադրման կարգը և պայմանները նախատեսվելու է Կառավարության նոր որոշմամբ:[168] Ավելին, նույն օրենքը կրկնում է նաև անգործունակ ճանաչված անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու՝ առանց նրա կամ օրինական ներկայացուցչի համաձայնությունը հաշվի առնելու հնարավորությունը:[169]

Անձին սոցիալական խնամքի հաստատությունում տեղավորելու օրինականության հարցին ՄԻԵԴն անդրադարձել է Ստաննն ընդդեմ Բուլղարիայի գործում: Սահմանափակ գործունակ ճանաչված դիմումատուն սոցիալական խնամքի հաստատությունում տեղավորվել էր խնամակալի՝ համայնքային պաշտոնատար անձի որոշմամբ: Դատարանը, քննելով նրա տեղավորման առնչությամբ առկա հիմքերը, կիրառել էր Վինթերվերպն ընդդեմ Նիդերլանդների գործով ձևավորված սկզբունքները:[170] Ըստ Դատարանի, անկախ այն հանգամանքից, որ ներպետական օրենսդրությունը սոցիալական հաստատությունում անձին տեղավորելը դիտարկում է որպես պաշտպանության միջոց, այն անձի անձնական ազատությունների զգալի սահմանափակումներ է նախատեսում՝ հանդիսանալով ազատությունից զրկում առանց նրա ցանկությունները և կամքը հաշվի առնելու:[171] Դատարանն արձանագրել է, որ չնայած անձի տեղավորումը պայմանավորված է եղել նրան սոցիալական աջակցություն և բնակության վայր տրամադրելու անհրաժեշտությամբ, սակայն նման անհրաժեշտությունը չպետք է մեխանիկորեն հանգեցնի այնպիսի միջոցի կիրառման, որը ներառում է ազատությունից զրկում: Անձի պաշտպանությանն ուղղված ցանկացած միջոց պետք է հնարավորինս համապատասխանի անձի կամքին և ցանկություններին, որոնք հաշվի չառնելը կարող է հանգեցնել չարաշահումների և խոչընդոտել նրա իրավունքների իրականացմանը:[172] Սույն պայմաններում Դատարանը ճանաչել էր Կոնվենցիայի խախտում:

3. Դատական պաշտպանության իրավունք

Անձին անգործունակ ճանաչելն ուղղակիորեն հանգեցնում է նրա՝ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման՝ անձին զրկելով դատարանի հասանելիության իրավունքից ինչպես գործունակության իրավունքը վերականգնելու պահանջի, այնպես էլ այլ իրավունքների և ազատությունների պաշտպանության առնչությամբ:

Գործունակությանը վերականգնման պահանջով դատարան դիմելու իրավունք

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անձին գործունակության իրավունքից զրկելը որևէ ժամկետային սահմանափակման և պարբերական վերանայման ենթակա չէ: Ավելին, օրենսդրությամբ անգործունակ ճանաչված անձը զրկված է իր իրավունքների պաշտպանության հարցով դատարան դիմելու հնարավորությունից: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձի գործունակությունը վերականգնելու համար

[167] Նույն տեղում, հոդված 13, կետ 6:
[168] Նույն տեղում, հոդված 13, կետ 7:
[169] Նույն տեղում, հոդված 30, կետ 1:
[170] ՄԻԵԴ, Ստաննն ընդդեմ Բուլղարիայի, 36760/06 , կետ 145:
[171] Նույն տեղում, կետ 149:
[172] Նույն տեղում, կետ 153:

դատարան դիմելու իրավունք ունեն անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը:[173] Անգործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց խնամակալները:[174] Նման սահմանափակումը անձի՝ արդար դատաքննության՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում է հանդիսանում:

Դատարանի մատչելիության իրավունքի առնչությամբ ՄԻԵԴն արձանագրել է, որ անկախ այն հանգամանքից, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ իրավունք չէ, և պետությունները այն կանոնակարգելու հարցում որոշակի հայեցողություն ունեն, սակայն դատարանի մատչելիության իրավունքն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի հիմնարար իրավունքներից է, քանի որ այն որոշիչ է այն բոլոր իրավունքների և ազատությունների համար, որոնց իրականացման վրա գործունակության իրավունի սահմանափակումն ազդել է:[175] Հետևաբար, նրանք պետք է օժտված լինեն դատարանի մատչելիության ուղղակի, այլ ոչ միջնորդավորված հնարավորությամբ:

Սույն հարցի առնչությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործունակության վերականգնման հարցում ՀՀ օրենսդրության վերոգրյալ կարգավորումը, չնախատեսելով գործունակության ճանաչման համար տվյալ անձի լսվելու և դատաքննությունում մասնակցելու հնարավորություն, փաստացիորեն խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի դատական և իրավական պատշտպանության իրավունքները:[176]

Դատավորների հետ հարցազրույցների ընթացքում պարզվեց, որ նրանցից ոչ ոք անձի գործունակության վերականգնման վերաբերյալ դիմում երբևէ չի քննել: Սակայն անձի գործունակության վերականգնման դիմումի ներկայացման հարցում դատավորներն ունեին տարբեր կարծիքներ: Մասնավորապես, հայտնվեց, որ գործունակությունը վերականգնելու դիմում ներկայացվելու դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դիմողների սահմանափակ շրջանակի առկայությունը հիմք չէր հանդիսանա անձի՝ դատարանի հասանելիության իրավունքի սահմանափակման և այն վարույթ կընունվեր՝ դրա բոլոր իրավական հետևանքներով:

Այլ կարծիքի համաձայն՝ անձի գործունակությունը վերականգնելու առնչությամբ դիմողների շրջանակների հարցում պետք է լինի սահմանափակում:

«Եթե նախատեսվի անգործունակ անձի՝ դատարան դիմելու իրավունքը, անհրաժեշտ է նախատեսել նաև նրա պարտականությունը ներկայացնել հիվանդությունից բուժված լինելու վերաբերյալ փաստաթղթեր: Պատկերացնում եք դատարանների ծանրաբեռնվածությունը, եթե ամեն մի գիժ իր գործունակության վերականգման հարցով որոշի դիմել դատարան»:

Դատավոր

---

[173] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 173:

[174] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 43:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարույթին ցանկացած կարգավիճակով մասնակցող անգործունակ անձի իրավունքները նրանց փոխարեն իրականացնում է օրինական ներկայացուցիչը, բացառությամբ այն իրավունքներից, որոնք անբաժանելի են տվյալ անձից, հոդված 77:

[175] ՄԻԵԴ, *Ստաննն ընդդեմ Բուլղարիայի*, կետ 241, ինչպես նաև *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 71:

[176] ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ՔԴՕ 171-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում, 7 ապրիլի 2015թ, էջ 17:

Անգործունակ ճանաչված անձի դատական մատչելիության իրավունքի սահմանափակման է հանգեցնում նաև անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռը բողոքարկելու համար անգործունակ ճանաչման ենթակա անձի կողմից պետական տուրք վճարելու պարտականությունը: Մասնավորապես, Դատական ակտերի ուսումնասիրության շրջանակներում անգործունակ ճանաչված անձի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձվել էր պետական տուրքը վճարված չլինելու պատճառաբանությամբ:[177]

ՀՀ պետական տուրքի մասին օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի մասին վճարումից ազատվում են դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով:[178]

Օրենսդրական նման կարգավորման պայմաններում լրջորեն սահմանափակվում են անգործունակ ճանաչված անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման հնարավորությունները՝ դարձնելով այն ձևական և ոչ արդյունավետ: Ելնելով իրենց անձնական հատկանիշներից և առավել խոցելի իրավիճակից՝ անգործունակ ճանաչված անձանց համար դատական պատշպանության համար սահմանված պետական տուրքը դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հարցում էական խոչընդոտ է: Մինչդեռ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձինք ազատվում են պետական տուրքից դատական բոլոր ատյաններում հարցի քննության համար՝ ակնհայտ անհավասար և անշահավետ իրավիճակ ստեղծելով անգործունակ ճանաչման ենթակա անձանց համար:

Ազատությունից զրկելու դեպքերում դատական վերանայման իրավունք

Անգործունակ ճանաչված անձինք ՀՀ ներպետական օրենսդրությամբ զրկված են դատական պաշտպանությունից նաև հոգեբուժական հիմնարկում կամ սոցիալական խնամքի հաստատությունում մեկուսացման օրինականության վերանայման առնչությամբ: Այսպես, ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ազատությունից զրկված անձի իրավունքը ստուգելու իր ազատազրկման նյութական և ընթացակարգային պահանջների պահպանումը, ինչը էական նշանակություն ունի ազատազրկման օրինականության համար: Դատական նման վերանայումը պետք է բավարար ընդգրկուն լինի՝ ներառյալ այն հանգամանքների ուսումնասիրությունը, որոնք էական են անձի ազատազրկման օրինականության գնահատման համար: Հետևաբար, վերանայող դատարանի լիազորությունները պետք է լինեն ոչ թե խորհրդատվական, այլ այն պետք է իրավասու լինի որոշում կայացնել ազատազրկման «օրինականության» վերաբերյալ և դրա պահանջների չպահպանման դեպքում պահանջել անձին ազատ արձակել:[179]

Անձին հոգեբուժական հիվանդանոցում կամ սոցիալական խնամքի հաստատությունում մեկուսացնելու հարցի դատական վերանայումը հիմնարար նշանակություն ունի անգործունակ ճանաչված անձին հնարավոր կամայականություններից պաշտպանելու տեսանկյունից, քանի որ տվյալ պայմաններում ռիսկի է ենթարկվում ինչպես անձի ֆիզիկական ազատությունը, այնպես էլ անձնական անվտանգությունը:[180] Դատարանն արձանագրել է, որ հոգեկան հիվանդության հիմքով անձին ազատությունից զրկելու դեպքերում, հատուկ ընթացակարգային երաշխիքներն անհրաժեշտ են ի պաշտպանություն անձի շահերի[181]՝ հիմնված հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝

- Եթե ներպետական օրենսդրությունը չի նախատեսում ազատազրկման դատական վերանայման հստակ պարբերականություն, անորոշ կամ երկար

[177] Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1677/02/12 վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում, 19 նոյեմբերի 2013թ:
[178] Պետական տուրքի մասին ՀՀ օրենք, հոդված 22, կետ ժե:
[179] ՄԻԵԴ, *Ստանևն ընդդեմ Բուլղարիայի*, կետեր 168-171; *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի*, կետ 123:
[180] ՄԻԵԴ, *Վերբանովն ընդդեմ Բուլղարիայի* (Varbanov v. Bulgaria) թիվ 31365/96, ECHR 2000-X, կետ 58
[181] ՄԻԵԴ, *Ստանևն ընդդեմ Բուլղարիայի*, կետ 170; *Վինթեպերտն ընդդեմ Նիդերլանդների*, կետ 60:

ժամանակաշրջանով ազատությունից զրկված անձը պետք է հնարավորություն ունենա ողջամիտ պարբերականությամբ նախաձեռնելու իր ազատազրկման օրինականության դատական վերանայման վարույթ,

- Ազատազրկությունից զրկելու վերանայման վարույթը պետք է ունենա դատական բնույթ և ազատազրկված անձին տրամադրի համապատասխան երաշխիքներ: Վարույթի երաշխիքների համապատասխանությունը պետք է գնահատվի վարույթի իրականացման հանգամանքների հաշվի առմամբ:
- Անկախ այն հանգամանքից, որ Կոնվենցիայի 5.4 հոդվածով նախատեսված դատական վարույթը չի պահանջում Կոնվենցիայի 6.1 հոդվածով սահմանված երաշխիքները, սակայն անձի իրավունքների պաշտպանության համար էական է ունենալ դատարանի հասանելություն և անձամբ կամ որտեղ անհրաժեշտ է ներկայացուցչի միջոցով լսվելու հնարավորություն:[182]

Այսպիսով, դատական պաշտպանության իրավունքը անգործունակ ճանաչված անձի իրավունքների և ազատությունների հիմնական գրավականն է, որը պետք է երաշխավորվի առանց երրորդ անձանց միջնորդության:

4. Անկախ ապրելու և հասարակությունում ինտեգրվելու իրավունք

Անձին գործունակության իրավունքից զրկելու և ազատության իրավունքի սահմանափակման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունները ուղղակիորեն ազդում են նաև հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և հասարակությունում ինտեգրվելու իրավունքի վրա: ՀՈՒԱԻԿ 19-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակությունում ապրելու իրավունքը և ձեռք առնել արդյունավետ և համարժեք միջոցներ՝ ի ապահովումն տվյալ իրավունքի իրացման և հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակությունում լրիվ ինտեգրվելու և հասարակական կյանքին մասնակցելու իրավունքի՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց բնակության վայրն ընտրելու և կոնկրետ վայրում բնակվելու պարտադրվածությունից զերծ լինելու հնարավորությունը: Անկախ ապրելու և հասարակությունում ինտեգրվելու իրավունքի շրջանակներում պետությունը պարտավոր է հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել տնային և համայնքահեն օժանդակող ծառայություններով, այդ թվում՝ անձի՝ հասարակությունում ազատորեն ինտեգրվելու և բևեռացումը կանխելու համար անհրաժեշտ անձնական աջակցությամբ: Ավելին, Կոնվենցիային մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության վայրը և իրենց հետ բնակվողներին, ստանալ տարատեսակ համայնքային աջակցության ծառայություններ՝ համապատասխանեցված նրանց կարիքներին:

Նման պայմաններում, երբ քրոնիկ հոգեկան հիվանդություն ունենալու դեպքում անձին տրամադրվում է միայն ինստիտուցիոնալիզացված խնամք, անձի անկախ ապրելու և հասարակությունում ինտրեգրվելու իրավունքի իրացման հնարավորությունները բացառված են: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում գործում է մեկ հատուկ պիտի խնամքի հաստատություն՝ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը, որտեղ 2014թ դեկտեմբերի 31-ի դրությամբ բնակվում են 449 անձինք, որոնցից 243-ը՝ ճանաչված են անգործունակ: 2013-2014թթ. ընթացքում տուն ինտերնատում ընդունված 37 անձի դեպքում,

[182] ՄԻԵԴ, *Մեգյերին ընդդեմ Գերմանիայի* (Megyeri v. Germany), 12 մայիսի 1992, 22, Series A no. 237-A, կետ 22:

դուրս են գրվել ընդամենը 4-ը:[183] Տուն-ինտերնատից դուրս գրված անձանց սակավաթվությունը պայմանավորված է ինչպես հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար խնամքի այլընտրանքային ձևերի բացակայությամբ, այնպես էլ անձի՝ իր անունից որոշումներ կայացնելու իրավունքից զրկված լինելու հանգամանքով, որպիսի պայմաններում անձի բնակության վայրը և անձնական կյանքին վերաբերող այլ կարևոր հարցեր որոշվում են երրորդ անձի՝ խնամակալի կողմից:

5. Առողջության իրավունք

Հաշմանդամություն ունեցող անձինք անխտիր ունեն ամենաբարձր հասանելի մակարդակի առողջության իրավունք, որը ներառում է ազատ և տեղեկացված համաձայնության վրա հիմնված բուժօգնություն:[184] Ինչպես վերը նշվեց, Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա[185], հետևաբար անձի խնամակալի համաձայնության դեպքում բուժումը համարվում է կամավոր: Ավելին, խնամակալն իրավասու է որոշում կայացնել նաև տրամադրվող բուժօգնությունից հրաժարվելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ:[186]

Ի տարբերություն ՄԻԵԴ դատական որոշումներով ձևավորված սկզբունքների, որոնց համաձայն անձի հարկադիր բուժումը կարող է արդարացվել իրավաչափ նպատակի առկայության պայմաններում,[187] ՀՈՒԱԻԿ համաձայն՝ պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի հաշմանդամություն, այդ թվում հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական ծառայությունները տրամադրվեն վերջինների ազատ և տեղեկացված համաձայնության հիման վրա:[188] Այս առնչությամբ Կոմիտեն պետություններին կոչ է արել բարեփոխել գործող օրենսդրությունը և պրակտիկան՝ ապահովելով անձի ազատ և տեղեկացված համաձայնությունը հոգեբուժական ծառայությունների տրամադրման շրջանակներում՝ ի ապահովումն ՀՈՒԱԻԿ դրույթների:[189] Անհրաժեշտ է փաստել նաև, որ տեղեկացված համաձայնությունը ոչ թե անձի կողմից բժշկական միջամտության ընդունումն է, այլ նրա կամավոր և տեղեկացված որոշումը, ինչը հոգեբուժական ծառայությունների մատուցման շրջանակներում անձի անկախության, ինքնորոշման և մարդկային արժանապատվության հիմնական երաշխիքն է:[190]

6. Խոշտանգումներից և դաժան ու անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

Հոգեբուժական հաստատություններում անձանց հարկադիր մեկուսացումը և բուժումը կարող է հանգեցնել վերջինների նկատմամբ խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի

---

[183] Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության թիվ ԱԿ/ԱԿ-1-1/1314-15 գրության:

[184] ՀՈՒԱԻԿ, Հոդված 23.

[185] Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենք, հոդված 15, 1-ին մաս:

[186] Նույն տեղում, հոդված 16, 1-ին մաս:

[187] ՄԻԵԴ, *Շնեյտերն ընդդեմ Շվեյցարիայի*(Schneiter v. Switzerland) թիվ 63062/00, 31 մարտի 2005:

[188] ՀՈՒԱԻԿ, Հոդված 25.դ:

[189] CRPD, *Concluding Observasions onNew Zealand*, UN Doc. CRPD/C/NZL/CO/1, 3 October 2014, para. 30; CRPD, *Concluding Observations on Hungary*, UN Doc. CRPD/C/HUN/CO/1, 22 October 2012, para. 27.

[190]UN Special Rapporteur on Torture, *Report of the Special Rapporteur on Torture and other inhuman or degrading treatment or punishment*, Juan E. Méndez, 1 February 2013, para. 28.

դրսևորման իրավիճակների: Մասնավորապես, խոշտանգումը՝ որպես անձի անձնական ամբողջականության և արժանապատվության իրավունքի ամենածանր խախտում, ենթադրում է անզորության իրավիճակներ, երբ անձը գտնվում է այլ անձի բացարձակ իշխանության ներքո:[191] Անձին գործունակության իրավունքից զրկելը, երբ անձի՝ որոշումներ կայացնելու իրավունքը փոխանցվում է այլ անձի, նման իրավիճակներից է:[192] Հետևաբար, հարկադիր բժշկական միջամտությունը, որը հանգեցնում է սուր ցավի կամ տառապանքների, կարող է գնահատվել որպես խոշտանգում կամ անմարդկային վերաբերմունք, երբ անձի նկատմամբ իրականացվում է առանց նրա ազատ և տեղեկացված համաձայնության:[193] Նման դեպքերը հատկապես վերաբերում են հարկադիր, առանց անձի համաձայնության բժշկական միջամտություններին, որոնց կատարվում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝ անկախ դրանց բարի նպատակներից և բժշկական անհրաժեշտությունից: Մասնավորապես, ըստ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հատուկ զեկուցողի՝ խտրական բնույթի հարկադիր հոգեբուժական միջամտությունները, որոնք կատարվել են հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բավարարում են խոշտանգման համար պարտադիր մտադրության և նպատակի տարրերը:[194]

Ավելին, այն իրավիճակները, որոնց չեն հասնում խոշտանգման, անձին պատճառված որոշակի մակարդակի ցավը և տառապանքը կարող է գնահատվել որպես անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք: Տառապանքի ծանրությունը սուբյեկտիվ է, սակայն այնպիսի գործոնները, ինչպիսիք են անձի տարիքը, սեռը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, կարևոր նշանակություն ունեն պատշաճ գնահատում իրականացնելու համար:

Անձի նկատմամբ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի տեսանկյունից կարևորվում է նաև հոգեբուժական և սոցիալական խնամքի հաստատություններում անձանց պահման պայմանները, ներառյալ յուրաքանչյուր անձին նախատեսված տարածքը, սնունդը, հիգիենիկ պայմանները և այլն: ՄԻԵԴ դատական պրակտիկայում սոցիալական հաստատությունում բնակության պայմանների առնչությամբ անմարդկային վերաբերմունք է ճանաչել Ստաննն ընդդեմ Բուլղարիայի գործով:[195]

Հետևաբար, յուրաքանչյուր անձի լրիվ գործունակության հարգանքը առաջին քայլն է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց խոշտանգումների և անմարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունքի կանխարգելման գործում հարկադիր մեկուսացման և բուժման առնչությամբ:[196]

7. Աշխատանքի իրավունք

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի իմաստով՝ աշխատողը սահմանված տարիքի հասած *գործունակ* քաղաքացին է, որը աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:[197] Սույն պայմաններում, առանց համապատասխան գնահատման անգործունակ ճանաչված անձը զրկվում է նաև սեփական

---

[191] UN Special Rapporteur on Torture, *Special Report of the Special Rapporteur on Torture and other inhuman or degrading treatment or punishment*, Manfred Nowak, UN Doc. A/63/175, 28 July 2008, para. 50.

[192] Նույն տեղում:

[193] Նույն տեղում, կետ 47:

[194] Նույն տեղում, կետեր 47-48:

[195] ՄԻԵԴ, *Ստաննն ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 37660/06, 17 հունվարի 2012, կետեր 192-221:

[196] UN, Special Rapporteur on Torture, *Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishments*, Juan E. Méndez, A/HRC/22/53, 1 February 2013, para. 15.

[197] ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 9 նոյեմբերի 2004թ., հոդված 17:

ապրուստի համար միջոցներ ձեռք բերելու հնարավորությունից՝ հանգեցնելով այլ անձանցից նաև տնտեսական կախվածության: Առաջանում է նաև անգործունակ անձանց անօրինական, հնարավոր է նաև հարկադիր աշխատանքում ներգրավվելու ռիսկը:

Մինչդեռ ՀՈՒԱԻԿ 27-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու իրավունքը այլ անձանց հետ հավասար հիմունքներով: Այս իրավունքը ներառում է ապրուստի միջոց վաստակելու հնարավորությունը, ներառյալ աշխատանքի ընտրության հնարավորությունը և հաշմանդամություն ունեցող անձանց համար բաց, հասանելի և ներառական աշխատանքային շուկայի և աշխատանքային միջավայրի առկայությունը: Միաժամանակ, պետությունները պարտավոր են պաշտպանել և խթանել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու իրավունքը, այդ թվում նաև օրենսդրական միջոցներով: Տվյալ դեպքում, առաջնային նշանակություն ունի աշխատանքային հարաբերություններում խտրականության բացառման և վերացման առնչությամբ օրենսդրությունը:

8. Քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեների մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտմամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը: Միաժամանակ, սակայն, Սահմանադրությունը նախատեսում է ընտրելու և ընտրվելու իրավունքի սահմանափակում դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձանց համար:[198] Նույնանման դրույթ իր ամրագրումն է գտել Ընտրական օրենսգրքում:[199]

Այսպիսով, անգործունակ ճանաչված անձինք ոչ միայն զրկվում են հանրային կյանքին մասնակցելու հնարավորությունից, այլև ուղղակիորեն զրկվում են քաղաքական կյանքում իրենց իրավունքների և շահերի համար պահանջատեր լինելու հնարավորությունից, քանի որ նրանց իրավունքները դուրս են մնում քաղաքական օրակարգից: Մինչդեռ հաշմանդամություն, այդ թվում և հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձի համար քաղաքական կյանքին մասնակցությունը կարևորագույն իրավունքներից է՝ սահմանված նաև ՀՈՒԱԻԿ 29-րդ հոդվածով, որի համաձայն պետությունները պարտավոր են ճանաչել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական և հանրային կյանքին մասնակցելու իրավունքը՝ այլ անձանց հետ հավասար պայմաններում:

Յուրաքանչյուր անձ, առանց որևէ խտրականության՝ պայմանավորված հաշմանդամությամբ, հոգեկան առողջությամբ կամ մտավոր ունակություններով, իրավունքի ունի մասնակցելու հասարակական և քաղաքական կյանքին: Ավելին, այս իրավունքն ավելին է, քան զուտ ժողովրդավարական գործընթացները և ներառում է նաև առավել լայն մասնակցությունը, ինչպիսին է մասնակցությունը իրավական և քաղաքական հարցերով որոշումների կայացմանը:

ՄԻԵԴ դատական պրակտիկայով հաստատվել է, որ առանց անձի իրական հանգամանքները հաշվի առնելու անգործունակ ճանաչված անձանց՝ ընտրություններին մասնակցելու ընդհանուր արգելքը հակասում է ՄԻԵԿ դրույթներին և չնայած պետություններն օժտված են որոշ հայեցողությամբ ընտրության իրավունքի իրացմանսահմանափակումների առնչությամբ նման հայեցողությունը բացարձակ չէ:[200] Ավելին, հայեցողության շրջանակները

---

[198] ՀՀ Սահմանադրություն, հոդված 30:

[199] ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդված 2.3:

[200] ՄԻԵԴ, Կիսսն ընդդեմ Հունգարիայի /Kiss v. Hungary/, թիվ 38832/06, 20 մայիսի 2010, կետեր 41-43:

զգալիորեն նեղանում են, երբ հիմնարար իրավունքների սահմանափակումները վերաբերում են հասարակության առանձնակի խոցելի խմբերի, ովքեր պատմականորեն ենթարկվել են նախապաշարմունքի և խտրականության՝ հանգեցնելով հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական բևեռացման:[201] Դատարանի նման դիրքորոշման հիմնավորումն այն է, որ այս խումբ անձինք պատմականորեն ենթարկվել են, որն ունեցել է իր երկարատև հետևանքները՝ հանգեցնելով հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական բևեռացման: Նման նախապաշարմունքները կարող են հանգեցնել օրենսդրական կարծարտիպերի առաջացման, որոնք արգելում կամ խոչընդոտում են տվյալ անձանց հնարավորությունների և կարիքների անհատակացված գնահատումը:[202] Հետևաբար ընտրության իրավունքի սահմանափակման արդարացման համար անհրաժեշտ են ծանրակշիռ պատճառներ:

9. Սեփականության իրավունք

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անգործունակ ճանաչված անձը զրկվում է իր սեփականատիրական իրավունքներից և քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու հնարավորությունից: Անգործունակ ճանաչված անձի գույքը տնօրինում և նրա անունից գործարքներ կնքում է խնամակալը,[203] բացառությամբ մանր կենցաղային գործարքների, անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքների, որոնց նոտարական վավերացում կամ իրավունքի պետական գրանցում չեն պահանջում, ինչպես նաև խնամակալի համաձայնությամբ՝ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ:[204]

Այսպես, անձի եկամուտները տնօրինում է խնամակալը նրա ապրուստը հոգալու նպատակով, այլ դեպքերում խնամակալը պետք է ստանա խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունը:[205] Միաժամանակ, խնամակալը պարտավոր է ստանալ խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունը անձի գույքի օտարման, ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են անձին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, բաժանել նրա գույքը կամ դրանից բաժիններ առանձնացնել, ինչպես նաև նրա գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարք կնքելու դեպքում:[206]

Օրենսդրական նման կարգավորման պայմաններում անգործունակ ճանաչված անձը, փաստորեն, զրկվում է իրեն պատկանող գույքը իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավազորություններից: Խնամակալը որևէ կերպ պարտավորված չէ անձի գույքը, եկամուտները և այլ սեփականությունը տիրապետելիս, օգտագործելիս և տնօրինելիս հաշվի առնել անգործունակ ճանաչված անձի կամքը և ցանկությունները: Խնամակալն առաջնորդվում է իր պատկերացմամբ անձի լավագույն շահերով, որոնք սակայն կարող են չհամընկնել անգործունակ ճանաչված անձի կամքին, ցանկություններին: Օրենսդրական նման կարգավորումը, փաստորեն, ուղղակիորեն հակասում է ՀՈՒԱԻԿ 12-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված պահանջներին:

---

[201] Նույն տեղում, կետ 44:
[202] ՄԻԵԴ,Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի, կետ 95:
[203] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 31, 39:
[204] Նույն տեղում, հոդված 29:
[205] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 39, մաս 1:
[206] Նույն տեղում, մաս 2:

Այսպիսով, ՀՀ օրենսդրության շրջանակներում գործունակության իրավունքի լրիվ սահմանափակումը հանգեցնում է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մի շարք իրավունքներից և ազատություններից բացարձակ զրկման, ինչպես նաև այլ իրավունքների խախտման ռիսկեր ստեղծում՝ դարձնելով տվյալ խումբ անձանց էլ ավելի խոցելի ու անպաշտպան:

Ավելին, անգործունակ անձանց իրավունքների և շահերի պաշտպանության և վերահսկողության արդյունավետ մեխանիզմների բացակայության պայմաններում իրավունքների հնարավոր խախտումները մնում են չարձանագրված և անպատիժ:

4. Անգործունակ ճանաչված անձանց իրավունքների պաշտպանվածության երաշխիքները

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անգործունակությունը դիտարկվում է որպես հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանիչ միջոց, որի պայմաններում անձի խնամակալի վրա դրվում են նրա իրավունքները և շահերը պաշտպանելու, նրա խնամքը, ապրուստը, կրթությունը և դաստիարակությունը կազմակերպելու և իրականացնելու պարտականությունները:[207] Սակայն, նույնիսկ հիմնվելով իրենց պարտականությունների պատշաճ կատարման առնչությամբ խնամակալների բարեխղճության կանխավարկածի վրա, այն պայմաններում, երբ անձն իր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում և հարցերում կախված է երրորդ անձանց կամքից, նրա իրավունքների և շահերի պաշտպանվածությունը չի կարող երաշխավորվել հանդիպող բոլոր դեպքերում: Հետևաբար, անհրաժեշտ են դրանց պաշտպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու արդյունավետ մեխանիզմներ:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անգործունակ ճանաչված անձի իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները:[208] Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են, Երևանում քաղաքապետի անունից լիազորություններն իրականացնում են վարչական շրջանների ղեկավարները:[209] Իրենց լիազորություններն իրականացնելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմինները ստեղծում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ,[210] որոնք և պրակտիկայում իրականացնում են օրենսդրությամբ ամրագրված լիազորությունները և պարտականությունները: Հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը նախատեսված է Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ:

Այսպես, անգործունակ ճանաչման ենթակա և անգործունակ ճանաչված անձի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները իրականացնում են հետևյալ գործառույթները՝

Պարտադիր մասնակցություն անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական վարույթին[211] Պրակտիկայում, սակայն, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մասնակցությունը անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ վարույթին ձևական բնույթ է կրում: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ներկայացուցիչը, օրենքով նման պարտականություն չունենալու պայմաններում, որպես կանոն չի տեսնում անգործունակ ճանաչվելու ենթակա անձին, և նրա դիրքորոշումը հիմնվում է միայն դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության վրա:

Անձին անգործունակ ճանաչելու և գործունակությունը վերականգնելու դիմումի ներկայացում դատարան[212] Պրակտիկայում խնամակալության և հոգաբարձության մարմինը դիմում է անգործունակ ճանաչելու խնդրանքով հիմնականում պատշաճ դիմողի բացակայության դեպքում, երբ անձի հարազատները չեն բավարարում ընտանիքի անդամ լինելու օրենսդրական պահանջին: Միաժամանակ, պրակտիկայում անձի գործունակությունը վերականգնելու վերաբերյալ համար դատարանի դիմելու դեպք չի գրանցվել:

---

[207] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 38, մաս 3:

[208] Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն, ՀՀ կառավարության որոշում թիվ 164-Ն, ընդունվել է 24փետրվարի 2011թ:

[209] Նույն տեղում, կետ 2:

[210] Նույն տեղում, կետ 3:

[211] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 171, մաս 1:

[212] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 168, մաս 1:

Խնամակալի նշանակում[213] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է անգործունակ ճանաչված անձի խնամակալ՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով նրա ցանկությունը խնամակալ նշանակվելու ենթակա անձի առնչությամբ:[214] Պրակտիկայում, սակայն, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ներկայացուցիչները նույնիսկ չեն հանդիպում անգործունակ ճանաչված անձին և չեն փորձում պարզել նման հնարավորության առկայությունը՝ ելնելով այն կանխավարկածից, որ հոգեկան և մտավոր հիվանդության պատճառով հնարավոր չէ անձից ադեկվատ և վստահելի պատասխան ակնկալել, հետագայում հնարավոր է հրաժարում տրված համաձայնությունից և այլն:

Ավելին, ելնելով խնամակալ նշանակվելու համար դիմող անձանց եզակիությունից և այլընտրանքների բացակայունից՝ դիմում ներկայացրած անձը հիմնականում նշանակվում է խնամակալ: Նույն հիմնավորմամբ՝ պրակտիկայում չեն գնահատվում անձի մարդկային և հոգեբանական հատկությունները, կրթական մակարդակը, անձանց համատեղելիությունը և այլ հանգամանքներ, քանի որ «ցանկացած պարագայում անձը պետք է նշանակվի որպեսխնամակալ»:[215] Պրակտիկայում ստուգվում են միայն խնամակալ նշանակվելու համար օրենքով նախատեսված ձևական պայմանները՝ խնամակալ նշանակվելու իրավունքի առկայությունը, անգործունակ անձի հետ բնակվելու հանգամանքը:

Նման պայմաններում, փաստորեն, խնամակալի անձին օրենքով ներկայացվող պահանջները ձևական բնույթ են կրում, քանի որ հաշվի չի առնվում անձանց միջև շահերի բախման հնարավորությունը, ինչն ուղղակիորեն հանգեցնում է անգործունակ ճանաչված անձի խոցելիության և անպաշտպանվածության բարձրացման:

Խնամակալների գործունեության նկատմամբ հսկողության իրականացում[216]

Չնայած խնամակալության և հոգաբարձության մարմինների հիմնական գործառույթներից է խնամակալների գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը, պրակտիկայում նման հսկողությունը բավարար և արդյունավետ չէ: Նախևառաջ, օրենսդրությամբ հստակեցված չեն խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները և հսկողության իրականացման մեխանիզմները: Գոյություն ունեցող կարգավորման պայմաններում, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից տվյալ գործառույթը դիտարկվում է որպես իրավունք, ցանկություն, այլ ոչ պարտականություն: Ավելին, խնամակալության և հոգաբարձության մարմինները անգործունակ ճանաչված անձի բնակության վայր այցելություններ, հանդիպումներ անձի հետ չեն կատարում: Հսկողության միակ միջոցը զանգով անձի որպիսության մասին տեղեկանալն է, հիմնականում՝ խնամակալից: Խնամակալության և հոգաբարձության մարմինը հիմնականում ապավինում է այլ մարմինների կողմից տրամադրվող տեղեկություններին, օրինակ, թաղապետարանների սոցիալական բաժին, համատիրություն և

---

[213] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդված 37, կետ 1: Անգործունակ անձի խնամակալ նշանակում է նրա բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը մեկ ամսվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն սահմանելու անհրաժեշտությունը: Մինչև անձի նկատմամբ խնամակալ նշանակելը, օրենքով վերջինի համար սահմանված պարտականությունները կատարում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

[214] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդված 37, կետ 2:

[215] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 37, կետ 3: Օրենսգիրքը պահանջում է հաշվի առնել խնամակալի բարոյական և անձնական այլ հատկանիշները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններ կատարելու ունակությունը, նրա ու խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը:

[216] Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն, կետ 13.2.ե:

այլն: Հետևաբար, անգործունակ ճանաչված անձի իրավունքների խախտումների, չարաշահումների բացահայտման մեխանիզմներ խնամակալության և հոգաբարձության մարմինները իրականում չունեն:

Անգործունակ անձի իրավունքների սահմանափակումների վերահսկողություն: Խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից անգործունակ ճանաչված անձի իրավունքների պաշտպանության հարցում միջամտություն տեղի ունենում է անձի գույքի օտարման, հավատարմագրային կառավարման և այլ քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու համար համաձայնություն տալու դեպքում միայն:[217] Խնամակալության հանձնաժողովների ներկայացուցիչների կողմից հայտնած տեղեկության համաձայն՝ անգործունակ ճանաչված անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը գրավադրելու համաձայնություն, որպես կանոն, չի տրվում այն պատճառաբանությամբ, որ անձը կարող է զրկվել իր գույքից այլ անձի կողմից գրավը չվճարելու դեպքում:

Անձի գույքի, հատկապես անշարժ գույքի օտարման համաձայնություն տրվում է միայն անգործունակ անձի անունով ձեռք բերված նոր գույքի վերաբերյալ ապացույցների առկայության պայմանով: Միաժամանակ, սակայն չի պահանջվում, որ ձեռքբերված գույքը համարժեք լինի օտարվածին: Խնամակալության և հոգաբարձության մարմինների նման մոտեցումը խնդրահարույց է անձի սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ գույքի օտարման հետևանքով անգործունակ ճանաչված անձն էական գույքային վնաս կրի:

Այլ իրավունքների սահմանափակումների դեպքում, հատկապես, խնամակալի կողմից անձին հոգեբուժական, խնամքի հաստատություններ տեղավորելու առնչությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը որևէ իրավասություն չունի: Նման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնի միակ գործառույթը, ինչպես նշվեց, խնամակալին իր լիազորություններից ազատելն ու որպես խնամակալ համապատասխան հաստատության ներկայացուցչին նշանակելն է:

Անգործունակ անձի խնամակալին իր պարտականությունների կատարումից ազատում տեղի է ունենում, երբ խնամակալությունն օգտագործվում է շահադիտական նպատակներով կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում, խնամարկյալին համապատասպան բուժական կամ սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատությունում տեղավորելիս, խնամակալի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու դեպքում, ինչպես նաև խնամակալի մոտ առաջացած հարգելի պատճառներով:[218]

Ըստ խնամակալության հանձնաժողովների հայտնած տեղեկությունների՝ պրակտիկայում խնամակալն ազատվում է իր պարտականություններից հիմնականում հարգելի պատճառներով: Դրանց այն դեպքերն են, երբ խնամակալը տարեց է և չի կարողանում ապահովել համապատասխան խնամք, մեկնում է ՀՀ-ից, ինչպես նաև խնամակալի մահվան դեպքում: Խնամակալն ազատվում է իր պարտականությունների կատարումից նաև, երբ անձը տեղավորվում է համապատասխան հիմնարկներում:

Այսպիսով, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից անգործունակ ճանաչված անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նկատմամբ տարվող հսկողությունը գործող օրենսդրական և պրակտիկ անկատարությունների շրջանակներում արդյունավետ չէ և չի ծառայում իր առջև դրված խնդիրների պատշաճ իրականացմանը:

---

[217] Նույն տեղում, մաս 2:

[218] Նույն տեղում, կետ 14.3:

5. Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքը ըստ այլ պետությունների օրենսդրության

Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ճանաչումը բավականին խնդրահարույց խնդիր է եվրոպական գրեթե բոլոր պետություններում, հատկապես, հետխորհրդային երկրներում:[219]

Ինչպես արդեն նշվեց, ՀՈՒԱԻԿը շրջադարձային նշանակություն ունեցավ՝ ճանաչելով բոլոր անձանց բացարձակ գործունակության իրավունքը՝ անկախ հաշմանդամության տեսակից և աստիճանից: Այն պետություններին պարտավորեցնում է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ի ապահովումն հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ճանաչման և իրականացման այլ անձանց հետ հավասարության հիման վրա:

Հատկապես ՄԻԵԴ կողմից կայացված վճիռներով ճանաչված իրավունքների խախտումների և ձևավորված սկզբունքների հիման վրա եվրոպական մի շարք երկրներում նախաձեռնվեցին օրենսդրության փոփոխություններ՝ վերանայելու հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքից լրիվ կամ մասնակիորեն զրկելու վերաբերյալ հնացած քաղաքականությունը:

Հետազոտության տվյալ գլխում ամփոփվել են հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի առնչությամբ այլ պետությունների օրենսդրական կարգավորումները: Հետազոտության համար ընտրվել են պետություններ, որոնք միջազգային չափանիշների զարգացման հիման վրա վերջին շրջանում իրականացրել են օրենսդրական փոփոխություններ՝ Հունգարիա, Ռուսաստանի Դաշնություն և Չեխիայի Հանրապետություն, ինչպես նաև պետություններ, որոնց օրենսդրությունը և պրակտիկան համարվում են լավագույններից՝ Գերմանիայի Դաշնություն և Շվեդիայի Թագավորություն:

1. Հունգարիա

Հունգարիան ՀՈՒԱԻԿը վավերացրած առաջին եվրոպական պետությունն է,[220] և որը Կոմիտեի եզրահանգումների[221] արդյունքում նախաձեռնել է հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների երկու շրջան՝ 2009 և 2013 թվականներին:[222]

Չնայած Կոմիտեի կողմից ներկայացված հանձնարարականին՝ Հունգարիայի քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո նույնպես նախատեսվում է անձի գործունակության իրավունքի լրիվ կամ մասնակի սահմանափակում:[223]

Գործունակության սահմանափակման համար անհրաժեշտ է երկու պահանջների բավարարում՝ համապատասխան հոգեկան կամ մտավոր հիվանդության առկայություն և սեփական հարաբերությունները կարգավորելու՝ անձի անկարողությունը: Միաժամանակ,

---

[219] Thomas Hammarberg, “Who Gets to Decide?”, Council of Europe, February 2012.

[220] Հունգարիան ստորագրել է 2007թ. մարտի 30-ին, վավերացրել է 2007թ. հուլիսի 20-ին:

[221] CRPD, Concluding Observations on Hungary, UN Doc. CRPD/C/HUN/CO/1, 22 October 2012:

[222] MDAC, Hungary: Parliament reforms legal capacity laws , 22 September 2009, Անհրաժեշտ է փաստել, որ 2009թ. օրենսդրական փոփոխությունները, որոնք առավել առաջադիմական և ՀԻԿ պահանջներին համապատասխանող էին, օրինական ուժ չստացան, իսկ 2013թ. քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ներդրվեցին որոշումների կայացման օժանդակող համակարգի որոշակի տարրեր, որոնք, սակայն, բավարար չեն ՀԻԿ պահանջներին բավարարելու համար: available at: http://www.mdac.info/en/hungary-parliament-reforms-legal-capacity-laws

[223] Հունգարիայի քաղաքացիական օրենսգիրք 2013թ, հոդված 2:8.1.

սակայն նման ցանկացած սահմանափակում պետք է արդարացվի նրա անձնական, ընտանեկան և սոցիալական հանգամանքների հիման վրա:[224] Եթե սեփական հարաբերությունները կարգավորելու հարցում անձն ունի որոշակի աջակցության կարիք, անհրաժեշտ է պարզել նման աջակցությունը միջավայրում, ընտանիքի անդամների կողմից ստանալու հնարավորությունը, որի առկայության դեպքում ինստիտուցիոնալ աջակցության, ինչպես նաև գործունակության սահմանափակման անհրաժեշտություն կարող է չառաջանալ:

Մասնավորապես, քաղաքացիական օրենսգրքի փոփոխության համաձայն՝ այն դեպքերում, երբ անձի հոգեկան կամ մտավոր հիվանդությունը քիչ ազդեցություն է ունենում նրա սեփական հարաբերությունները կարգավորելու ունակության վրա, խնամակալության մարմինը իրավասու է ընտրել օժանդակող անձի: Տվյալ դեպքում դատարանի միջամտություն չի պահանջվում:[225] Նույն կերպ, անձի գործունակության իրավունքի սահմանափակման անհրաժեշտության բացակայության դեպքում դատարանը նախաձեռնում է օժանդակողի ընտրություն:

Օժանդակող անձի պարտականությունն է ներկա գտնվել, անձին տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն ցանկացած դեպքերում, երբ անձն իրավական հետևանքներ առաջացնող գործողություններ է իրականացնում:[226]

Աջակցությունը հիմնված է անձնական վստահության վրա, որպիսի պայմաններում օժանդակող անձի ընտրությունը կատարվում է անձի համաձայնությամբ, հնարավորության դեպքում՝ օժանդակող անձը ընտրվում է անձամբ նրա կողմից:[227] Վստահելի անձի բացակայության դեպքում օրենքը նախատեսում է մասնագիտացված աջակցողի ներգրավում:[228]

Անձի գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակում տեղի է ունենում բացառապես դատարանի կողմից: Սակայն, անձի գործունակության իրավունքը կարող է սահմանափակվել միայն դատարանի հիմնավորմամբ, որ առկա այլընտրանքների կիրառումը բավարար չի լինի կոնկրետ անձի հանգամանքների դեպքում որոշման կայացման համար: Անձին սահմանափակ գործունակ ճանաչելու դեպքում դատարանը պարտավոր է հիմնավորել կոնկրետ հարաբերությունների առնչությամբ անձի գործունակության իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը: Օրենսդրությունը սահմանափակման ենթակա իրավունքների շրջանակ չի նախատեսում, սահմանափակման ենթակա իրավունքը որոշվում է դատարանի կողմից կոնկրետ դեպքում՝ անձի և նրա անձնական հանգամանքների գնահատմամբ:[229] Սահմանափակ գործունակ ճանաչված անձը որոշումների կայացման դեպքում պետք է պետք է ստանա խնամակալի համաձայնությունը:[230]

---

[224] Նույն տեղում, հոդված 2:19.2:

[225] Անհրաժեշտ է փաստել, որ անկախ օժանդակող անձի ներդրման՝ այն համընդհանուր ազդեցություն չունի, վերաբերում է միայն աջակցության նվազ կարիք ունեցող անձանց՝ այդպիսով հանդիսանալով խտրականության արտահայտում հաշմանդամության աստիճանի հիման վրա: Հետևաբար նման կարգավորումը հակասում է ՄԱԿ-ի Կոնվենցիայի 12-րդ հոդվածին:

[226] Քաղաքացիական օրենսգրքի փոփոխության մասին օրենք, 2013, հոդված 4.1:

[227] Նույն տեղում, հոդված 3.2:

[228] Պրակտիկայում խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատակիցն է տրամադրում աջակցություն: Նման կարգավորումը խնդրահարույց է, քանի որ բացակայում է վստահության տարրը և խնամակալության մարմինն է նշանակում օժանդակող անձին: Սա տարբերվում է 2009թ. քաղաքացիական օրենսգրքի փոփոխություններով նախատեսված կարգավորումից, որով նախատեսվում էր օժանդակող անձի ընտրություն դատարանի կողմից, որը հաստատում էր կոնկրետ անձի և օժանդակող անձի միջև կնքվող պաշտոնական կամ ոչ պաշտոնական համաձայնագրի հիման վրա: Վերջին դեպքում դատարանը միայն հաստատում և օրինականացնում էր իրավահարաբերությունը: Քաղաքացիական օրենսգիրք 2009, հոդված 2:19.4:

[229] Տվյալ ինֆորմացիան ներկայացվել է Կոմիտեին Ընդհանուր դիտարկումների առնչությամբ ներկայացված տեղեկությունների շրջանակում: Անձի գործունակության իրավունքի սահմանափակումը կատարվում է՝ ըստ կոնկրետ որոշումների կայացման անհրաժեշտության, օրինակ, սեփականության կամ առողջության հարցերում որոշումների կայացման կապակցությամբ:

[230] Նույն տեղում, 2:20.1:

Անձը կարող է լրիվ անգործունակ ճանաչվել բացառապես այն դեպքերում, երբ չի կարող իրականացնել իրավական գործարքներ նույնիսկ այլ անձի հետ համատեղ և երբ բացարձակապես անհրաժեշտ է անձի անունից որոշում կայացնել:[231]

Ի ապահովումն անձի արդար դատաքննության իրավունքի պահանջների՝ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը պահանջում է ապահովել նրա՝ անձամբ լսված լինելու իրավունքը, բացառությամբ այնպիսի բացառիկ դեպքերի, երբ վերջինի գտնվելու վայրն անհայտ է կամ անձի ներկա գտնվելու հնարավորությունը սահմանափակված է:[232]

Օրենսդրությունը պահանջում է յուրաքանչյուր դեպքում բժշկական փորձաքննության իրականացում, սակայն դրանով լուծման ենթակա հարցերի շրջանակ չի նախատեսում:[233] Միաժամանակ, անձի անձնական հանգամանքները, ինչպես նաև ընտանեկան ու սոցիալական հարաբերությունները պարզելու և անձի գործունակության իրավունքին միջամտության անհրաժեշտությունը գնահատելու հարցը լուծելու համար դատարանը պարտավոր է առավել մանրակրկիտ ուսումնասիրություն իրականացնել, ներառյալ անհրաժեշտ այլ ապացույցներ պահանջել, ինչպիսիք են, օրինակ, անձի ֆինանսական միջոցների վերաբերյալ ապացույցները և այլն:[234]

Հունգարիայի քաղաքացիական օրենսգրքի հաջորդ նորամուծությունը իրավական հարցերի նախօրոք պլանավորումն է:[235] Այն վերաբերում է ապագայում անձի գործունակության իրավունքի հնարավոր սահմանափակմանը և պոտենցիալ խնամակալի իրավասությունների շրջանակին: Անձն իր ցանկությամբ կարող է նշել, թե հիվանդության հնարավոր զարգացումների դեպքում ով կարող է կամ չի կարող լինել իր խնամակալը և խնամակալի հնարավոր գործողությունների և լիազորությունների շրջանակը իր անձնական և ֆինանսական հարաբերությունների կարգավորման առնչությամբ:[236] Նախօրոք պլանավորումը սկսում է գործել դատարանի կողմից անձին խնամակալ նշանակելու որոշմամբ: Դատարանն իրավասու է նաև չհաստատել դրա գործողությունը, եթե այն բացահայտորեն չի համապատասխանում անձի առկա հանգամանքներին, ինչպես նաև հնարավոր խնամակալի համաձայնության բացակայության դեպքում:

Այսպիսով, չնայած կատարված փոփոխություններին՝ Հունգարիայի օրենսդրությունը ՀՈՒԱԻԿ պահանջներին ամբողջովին չի բավարարում, քանի որ պահպանվել է որոշումների կայացման փոխարինող համակարգը: Սակայն դրական փոփոխություն է այն, որ անձի նկատմամբ կիրառված ցանկացած միջոց պետք է համարժեք լինի անձի կարիքներին և չհանգեցնի ավելորդ սահմանափակումների, ինչպես նաև այլընտրանքների առկայությունը հաշվի առնելու պարտավորությունը: Օրենսգրքով նաև կարևորվել է նաև անձին վստահության սզբունքի վրա հիմնված աջակցության տրամադրումը:

2. Չեխիայի Հանրապետություն

Չեխիայի Հանրապետության օրենսդրության փոփոխությունները նույնպես պայմանավորված են միջազգային և եվրոպական չափանիշների զարգացմամբ: Մինչև օրենսդրական փոփոխությունների իրականացումը Չեխիայի քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում էր հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի լրիվ կամ մասնակի սահմանափակման հնարավորությունը: 2009թ. օգոստոսի 18-ին

[231] Նույն տեղում:
[232] Նույն տեղում, հոդված 309.3:
[233] Հունգարիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 310.2
[234] Նույն տեղում, հոդված 310.1:
[235] Քաղաքացիական օրենսգիրք 2013, հոդված 2:39:
[236] Նույն տեղում, հոդված 2:39.2

Չեխիայի Հանրապետության Սահմանադրական Դատարանը անձի գործունակության իրավունքի սահմանափակումը «խնդրահարույց» ճանաչեց այն հիմնավորմամբ, որ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր անձի իրավասուբյեկտության իրավունքը: Դատարանը լուրջ քննադատության արժանացրեց նաև ընդհանուր իրավասության դատարանների պրակտիկան վճիռների ոչ բավարար հիմնավորվածության, ոչ բավարար ապացույցների, այդ թվում գործունակության իրավունքի սահմանափակման ենթակա անձի և նրա վկաների՝ դատարանի կողմից անմիջականորեն լսված լինելու իրավունքի իրացման առնչությամբ:[237]

2012թ. տեղի ունեցած փոփոխություններից հետո[238] Չեխիայի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անձի նկատմամբ կարող է սահմանվել խնամակալություն առանց գործունակության իրավունքի սահմանափակման: Քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է որոշումների նախօրոք պլանավորման հնարավորությունը,[239] որոշումների կայացման համար աջակցություն,[240] ինչպես նաև հարազատների կողմից ներկայացուցչությունը:[241]

Անձին գործունակության իրավունքից զրկելու հնարավորությունն օրենսդրությամբ վերացվել է, իսկ գործունակության իրավունքը մասնակի սահմանափակման կարող է ենթարկվել միայն այն դեպքերում, երբ այլընտրանքային միջոցները բավարար չեն անձի իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից: Որպես դատավարական երաշխիքներ՝ քաղաքացիական օրենսգիրքը պարտադրում է դատարանին անձամբ տեսնել անձին և հաշվի առնել նրա կարծիքը:

Նախօրոք պլանավորման շրջանակներում անձը, կանխատեսելով իր հնարավոր անգործունակությունը, կարող է գրավոր կերպով արտահայտել իր ցանկությունը սեփական հարաբերությունների կարգավորման կոնկրետ ձևի և պայմանների վերաբերյալ կամ կոնկրետ անձի կողմից, ինչպես նաև կոնկրետ անձի նշանակել իր խնամակալ:[242] Անձի կողմից կայացված նման որոշումը պարտադիր է դատարանի համար, և խնամակալի անձին ուղղված ցանկացած պայմանի բավարարում պետք է հաշվի առնվի դատարանի կողմից: Անձի անձնական հանգամանքների զգալի փոփոխման դեպքում դատարանն իրավունք ունի փոխելու կամ վերացնելու որոշումը, եթե անձը ենթակա է լուրջ վտանգի: Միաժամանակ, դատարանը պարտավոր է գործադրել բոլոր անհրաժեշտ քայլերը անձի կարծիքը և ցանկությունները որոշելու և հաշվի առնելու առչնությամբ:[243]

Հաջորդ նորամուծությունը որոշումների կայացման համար աջակցության տրամադրումն է, որի դեպքում առանց գործունակության իրավունքի սահմանափակման անհրաժեշտության անձը կարող է համաձայնել աջակցություն ստանալուն: Աջակցությունը տրամադրվում է համապատասխան պայմանագրի հիման վրա, որը պարտավորեցնում է աջակցող անձին ներկա գտնվել աջակցության կարիք ունեցող անձի իրավական գործարքների կնքմանը, ապահովել անհրաժեշտ տեղեկություն և հաղորդակցություն, ինչպես նաև օժանդակել խորհրդատվությամբ:[244] Նման պայմանագիրը պետք է հաստատվի դատարանի կողմից: Գրավոր պայմանագրի բացակայության դեպքում պայմանագիրը կնքվում է դատարանում: Պայմանագիրը չի հաստատվում, եթե դատարանը պարտադիր ուսումնասիրության արդյունքում

---

[237] MDAC, Czech Republic: Constitutional Court finds Deprovation of Legal Capacity "Constitutionally Problematic": Հասանելի է http://www.mdac.info/en/czech-republic-constitutional-court-finds-deprivat կայքէջում:

[238] Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններն օրինական ուժի մեջ են մտել 2014թ. հունվարի 1-ին:

[239] Չեխիայի քաղաքացիական օրենսգիրք, հոդվածներ 38-44:

[240] Նույն տեղում, հոդվածներ 45-48:

[241] Նույն տեղում, հոդվածներ 49-54:

[242] Նույն տեղում, հոդված 38:

[243] Նույն տեղում, հոդված 42-43:

[244] Նույն տեղում, հոդված 45-46:

բացահայտում է կողմերի միջև հնարավոր շահերի բախում:[245] Գործարքների կնքման ժամանակ, աջակցող անձը պետք է առաջնորդվի աջակցության ենթակա անձի ցանկություններով: Աջակցության ենթակա անձի կողմից գրավոր գործարքներ իրականացնելու դեպքում անհրաժեշտության դեպքում աջակցող անձը կարող է ավելացնել իր ստորագրությունը՝ նշելով իր կարգավիճակը և տրամադրված աջակցության վերաբերյալ տեղեկություն: Միաժամանակ, օժանդակող անձը իրավունք ունի վիճարկել աջակցության կարիք ունեցող անձի իրավական գործողությունների օրինականությունը:[246] Աջակցող անձի պարտականությունները դադարեցվում են դատարանի կողմից աջակցության կարիք ունեցող անձի կամ անձի դիմումի հիման վրա, ինչպես նաև դատարանը պետք է դադարեցնի աջակցությունը նույնիսկ առանց դիմումի, եթե աջակցող անձը խախտում է իր պարտականությունները, ինչը պարբերական վերանայման թ ենթարկվում:[247]

Չեխայի քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ եթե չափահաս անձը հոգեկան հիվանդության պատճառով չի կարող իրականացնել իր իրավական գործարքները և չունի այլ ներկայացուցիչ, նրա երեխաները, ամուսինը կամ փաստացի ամուսինը, եղբայրը կամ քույրը կամ անձը, ով բնակվում է վերջինի հետ նվազագույնը երեք տարի ժամանակով կարող է հանդես գալ որպես նրա ներկայացուցիչ:[248] Ներկայացուցչությունը կատարվում է միայն անձի համաձայնությամբ և ենթակա է հաստատման դատարանի կողմից:[249] Ներկայացուցիչը պարտավոր է հաշվի առնել անձի լավագույն շահերը, ապահովել նրանց իրավունքները՝ ներկայացվող անձի կարծիքի և ցանկությունների հիման վրա:[250] Ներկայացուցչի պարտականությունները սահմանափակվում են անձի կենցաղային հարցերի առնչությամբ, մասնավորապես ֆինանսական հարցերի կարգավորումը, որոշ բացառություններով:[251] Անձի ներկայացուցիչը չի կարող համաձայնություն տալ նաև նրա հոգեկան կամ ֆիզիկական առողջության միջամտության առնչությամբ:[252]

Անձի գործունակության իրավունքի սահմանափակում կարող է տեղի ունենալ, երբ անձը լուրջ վտանգի է ենթակա և այլ առավել նվազ սահմանափակումները բավարար չեն նրա շահերը պաշտպանելու համար: Տեղի է ունենում բացառությամբ դատարանի կողմից՝ անձին տեսնելուց և նրա բոլոր հանգամանքները հաշվի առնելուց հետո միայն: Դատարանն է որոշում սահմանափակման ենթակա իրավունքների շրջանակը:[253] Դատարանը կարող է սահմանափակել անձի գործունակության իրավունքը կոնկրետ հարցերի առնչությամբ՝ լուծման համար անհրաժեշտ կոնկրետ ժամկետով, սակայն ոչ ավելի, երեք տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո գործունակության իրավունքի սահմափակումը դադարում է, սակայն օրենքը նախատեսում է նաև ժամկետի երկարաձգման հնարավորություն:[254] Հանգամանքների փոփոխման դեպքում դատարանը դադարեցնում է անձի գործունակության իրավունքի սահմանափակումը նույնիսկ առանց համապատասխան դիմումի:

Միաժամանակ, օրենքը նախատեսում է պահանջներ որպես խնամակալ նշանակվող անձի ընտրության հարցում: Նախ, խնամակալը ստանձնում է իր պարտավորությունները

---

[245] Նույն տեղում:
[246] Նույն տեղում, հոդված 47:
[247] Նույն տեղում, հոդված 48:
[248] Նույն տեղում, հոդված 49:
[249] Նույն տեղում, հոդվածներ 49-50:
[250] Նույն տեղում, հոդված 51:
[251] Նույն տեղում, հոդված 52: Մասնավորապես, անձի բանկային հաշիվները կարող են կառավարվել միայն անձնական նվազագույն գումարի շրջանակներում, որը Չեխայի Հանրապետությունում կարգավորվում է իրավունքի այլ ճյուղի նորմերով:
[252] Նույն տեղում:
[253] Նույն տեղում, հոդվածներ 55-57:
[254] Նույն տեղում, հոդված 59:

կամավորության հիման վրա: Դատարանը պարտավոր է հաշվի առնել խնամակալության ենթակա անձի կարծիքը և ցանկությունները նշանակվող անձի վերաբերյալ, նրանց միջև հնարավոր շահերի բախման վտանգները և այլն: Եթե նման հնարավորությունը բացակայում է դատարանը, որպես կանոն, ընտրում է անձի հարազատներից կամ մերձավորներից մեկին, որոնք պետք է հիմնավորեն երկարաժամկետ կապը ու լուրջ հետաքրքրվածությունը խնամակալության ենթակա անձի նկատմամբ: Եթե նման ընտրության հնարավորությունը նույնպես բացակայում է դատարանը պետք է ընտրի հանրային խնամակալի՝ համապատասխան օրենսդրության համաձայն:[255] Հանրային խնամակալը անձի բնակության վայրի ինքնակառավարման մարմինը կամ դրա կողմից ստեղծված իրավաբանական անձի ներկայացուցիչն է, որը օրենքով սահմանված կարգով ստանձնում է անձի խնամակալի դերը:[256]

Որպես խնամակալ չի կարող նշանակվել խնամակալ հանդես գալու իրավասություն չունեցող անձը, ինչպես նաև այն անձը, ում ղեկավարությամբ գործող հաստատությունում անձը բնակվում է կամ ով անձին ծառայություններ է մատուցում կամ նման հաստատությունից կախվածություն ունեցող անձը:[257] Միաժամանակ, անձի գործունակության իրավունքի սահմանափակումը չի կարող ազդել անձի՝ սեփական կենցաղային հարցերը լուծելու իրավունքի վրա: Սույն պայմաններում, այն դեպքերում, երբ անձը գործել է ինքնուրույն, նրա իրավական գործարքները կարող են առոչինչ ճանաչվել միայն եթե վնաս են պատճառել իրեն: Անձի գործողությունները համարվում են օրինական նաև խնամակալի կողմից հետագայում դրանք հաստատելու դեպքում, կամ երբ անձը հաստատում է նման գործարքը գործունակության իրավունքը վերականգնելուց հետո:[258]

Չեխիայի օրենսդրության համաձայն՝ խնամակալն իրավասու չէ որոշումներ կայացնելու անձի անձնական կյանքին առնչվող հարցերի կապակցությամբ, այդ թվում ամուսնության կնքման կամ դադարեցման, ծնողական իրավունքների ճանաչման, կտակելու կամ ժառանգությունից զրկելու հարցերի առնչությամբ:[259]

Այսպիսով, չնայած Չեխիայի ներպետական օրենսդրությամբ կատարված փոփոխությունները ամբողջությամբ չեն բավարարում ՀՈՒԱԻԿ դրույթներին, այդուամենայնիվ դրանով նախատեսված տարատեսակ լուծումները թույլատրում են կոնկրետ անձի կարիքների և հանգամանքների հաշվի առմամբ գտնել համարժեք լուծում:

3. Ռուսաստանի Դաշնություն

Ինչպես վերը նշվեց, անձի գործունակության ճանաչման և պաշտպանության առնչությամբ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը և պրակտիկան ՄԻԵԴ կողմից մի շարք վճիռներով ճանաչվել են Կոնվենցիայի տարբեր դրույթներին հակասող: ՄԻԵԴ կողմից Ռուսաստանի Դաշնության դեմ գործերի քննության արդյունքում ՌԴ Սահմանադրական դատարանը 2012թ.հունիսի 27-ին քաղաքացի Ի. Դելովայի վերաբերյալ որոշմամբ սահմանել է, որ անձին լրիվ անգործունակ ճանաչելը հանդիսանում է ՌԴ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների խախտում, քանի որ թույլատրում է բացառապես ամբողջական

[255] Նույն տեղում, հոդված 464:
[256] Նույն տեղում:
[257] Նույն տեղում, հոդվածներ 62-63:
[258] Նույն տեղում, հոդվածներ 64-65:
[259] Նույն տեղում, հոդված 4

անգործունակություն (գործունակության իրավունքի լրիվ սահմնափակում), որպիսի պայմաններում հնարավոր չէ գնահատել անձի իրական կարիքները և հնարավորությունները:[260]

Սակայն, հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ինչպես մասնակի, այնպես էլ լրիվ սահմանափակումը և խնամակալի նշանակումն ինքնին հակասահմանադրական չի ճանաչվել, քանի որ իրենց հիվանդության պատճառով անձինք չեն կարող լիարժեքորեն հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք: ՌԴ Սահմանադրական Դատարանն արձանագրել է, որ գործունակության իրավունքի լրիվ սահմանափակումը որպես միակ մոտեցում հակասահմանադրական է քանի որ այն չափազանց սահմանափակող է և անհամարժեք հետապնդվող նպատակին:[261] Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ այլընտրանքներ, որոնք դատարաններին հնարավորություն կտան գնահատելու անձի՝ կոնկրետ գործողություններ կատարելու հնարավորությունը միատեսակ մոտեցման կիրառման փոխարեն:[262]

ՌԴ Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ անձին լրիվ անգործունակ ճանաչելու հնարավորությունը պահպանվել է այն դեպքերում, երբ հոգեկան հիվանդության պատճառով վերջինս չի կարողանում հասկանալ իր գործողությունների իմաստը կամ ղեկավարել դրանք: Անձի նկատմամբ նշանակվում է խնամակալ, ով խնամարկյալի անունից գործարքներ կատարելու իրավունք է ստանում: Սակայն ի տարբերություն նախկին օրենսդրության՝ փոփոխություններով նախատեսված է խնամակալի պարտականությունը խնամարկյալի անունից գործարքներ կատարելիս հաշվի առնել նրա կարծիքը, իսկ անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով անձի նախասիրությունների վերաբերյալ նրա ծնողներից, նախկին խնամակալներից, նրան ծառայություններ մատուցած և բարեխղճորեն իրենց պարտականությունները կատարած այլ անձանցից:[263]

Օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ այն դեպքում, երբ անձը հոգեկան հիվանդության պատճառով սեփական գործողությունների իմաստը կարողանում է հասկանալ կամ ղեկավարել դրանք *միայն այլ անձանց օգնությամբ*, դատարանի կողմից կարող է ճանաչվել սահմանափակ գործունակ: Անձի նկատմամբ նշանակվում է հոգաբարձություն: Սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում անձն իրավունք ունի կնքելու գործարքներ հոգաբարձուի համաձայնությամբ, բացառությամբ սեփական եկամուտները տնօրինելու, մանր կենցաղային գործարքներ կնքելու և այլ դեպքերում:[264] Սահմանափակ գործունակ ճանաչված անձը կարող է տնօրինել իրեն վճարվող ալիմենտը, կենսաթոշակը, առողջությանը պատճառված վնասի կամ կերակրողին կորցնելու համար վճարված փոխհատուցումը և այլ վճարները հոգաբարձուի համաձայնությամբ՝ հոգաբարձուի կողմից սահմանված ժամկետներում:[265] Բացառություն են կազմում անձի անձնական եկամուտների տնօրինումը և մանր կենցաղային գործարքները: Սակայն հոգաբարձուի կամ հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա և բավարար հիմքերի առկայության դեպքում դատարանը կարող է սահմանափակել կամ զրկել անձին տնօրինել նաև այդ եկամուտները:[266] Հոգեկան հիվանդության պատճառով սահմանափակ գործունակ ճանաչված անձն ինքնուրույն գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից

---

[260] ՌԴ Սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Ի.Բ. Դելովայի դիմումի հիման վար ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 31-րդ հոդվածի 2-րդ մասի և 32-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ, 27 հունիսի 2012թ., հասանելի է http://www.rg.ru/2012/07/13/spb-dok.html կայքէջում:

[261] Նույն տեղում:

[262] Նույն տեղում:

[263]ՌԴ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 29: Փոփոխությունները կատարվել են <Քաղաքացիական օրենսգրքի 1,2,3 և 4 մասերում փոփոխություններ կատարելու մասին> Դաշնային օրենքով, 30 դեկտեմբերի 2012թ. թիվ 302-ФЗ, հոդված Հասանելի է http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_142950/ կայքէջում:

[264] Նույն տեղում, հոդված 30, 2-րդ մաս:

[265] Նույն տեղում:

[266] Նույն տեղում:

կայացրած գործարքների համար և պատասխանատու է իր կողմից պատճառված վնասի համար քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան:[267]

Օրենսդրական փոփոխություններով սահմանվել են նաև անձի գործունակության իրավունքի վերականգնման չափանիշները: Մասնավորապես, եթե անգործունակ ճանաչված անձի մոտ զարգանում է սեփական գործողությունները հասկանալու կամ դրանք այլ անձանց օգնությամբ ղեկավարելու հնարավորությունը, դատարանը նման անձին ճանաչում է սահմանափակ գործունակ, իսկ սեփական գործողությունները հասկանալու և դրանք ղեկավարելու հնարավորության դեպքում՝ լրիվ գործունակ:[268] Հետևաբար, անձի նկատմամբ նշանակված խնամակալությունը վերացվում է, իսկ սահմանափակ գործունակ ճանաչելու դեպքում նշանակվում է հոգաբարձություն:

Անձն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվում է դատարանի կողմից: Անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու պահանջով կարող են դիմել նրա ընտանիքի անդամները, մերձավոր ազգականները՝ անկախ համատեղ բնակվելու փաստից, խնամակալության և հոգաբարձության մարմինները, հոգեբուժական օգնություն տրամադրող բժշկական կազմակերպությունները կամ սոցիալական օգնություն տրամադրող ստացիոնար հիմնարկները:[269]

Դատարանը պարտավոր է ապահովել անձի՝ անձամբ լսված լինելու իրավունքը, եթե նրա ներկայությունը չի վտանգում իր կամ շրջապատի կյանքը կամ առողջությունը:[270] Անձի մասնակցությունն ապահովելու անհնարինության դեպքում, գործը դատարանի կողմից քննվում է նրա գտնվելու վայրում, այդ թվում նաև ստացիոնար բժշկական կամ սոցիալական հաստատությունում անձի անմիջական մասնակցությամբ:[271]

Անգործունակ ճանաչված անձը իրավունք ունի անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով բողոքարկել դատարանի որոշումը վերաքննության կարգով, դիմել դրա վերանայման պահանջով, ինչպես նաև բողոքարկել որոշումը վճռաբեկության և վերահսկողության կարգով, եթե առաջին ատյանի դատարանում անձը հնարավորություն չի ունեցել ներկայացնել իր տեսակետն անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով:[272] ՄԻԵԴ վճիռների հիման վրա կատարված հիմնական փոփոխություններից է նաև անգործունակ և սահմանափակ գործունակ անձի՝ իր գործունակության իրավունքի սահմանափակումը վերացնելու դիմումով դատարան դիմելու իրավունքի նախատեսումը:[273]

Այսպիսով, չնայած կատարված փոփոխություններին, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը գործունակության իրավունքի սահմանափակման առնչությամբ էական բարեփոփոխումների չի ենթարկվել: Մասնավորապես, օրենքի հիմնական փոփոխությունը գործունակության իրավունքի մասնակի սահմանափակման հնարավորության նախատեսումն է, անձնական և ֆինանսական հարցերի լուծման առնչությամբ անձի ցանկությունների հաշվի առնումը, ինչպես նաև դատավարական իրավունքների պահպանման որոշ երաշխիքներ, սակայն օրենքով նախատեսված չեն անձի գործունակության իրավունքի սահմանափակման հետ չկապված այլընտրանքային միջոցներ, որպիսի պայմաններում հնարավոր չէ ապահովել անձի կարիքներին համարժեք, ճկուն աջակցություն:

---

[267] Նույն տեղում:
[268] Նույն տեղում:
[269] ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 281, մաս 2:
[270] Նույն տեղում, հոդված 284, մաս 1:
[271] Նույն տեղում:
[272] Նույն տեղում, մաս 3:
[273] Նույն տեղում, հոդված 286, մասեր 1 և 2:

4. Գերմանիայի Դաշնություն

Հոգեկան և մտավոր հիվանդություն ունեցող անձի գործունակության իրավունքի վերաբերյալ օրենսդրական գործող կարգավորումները սահմանված են Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքով:[274] Օրենսգիրքը անձի գործունակության իրավունքի սահմանափակումներ չի նախատեսում, այլ հիմնված է անձի կարիքների և հնարավորությունների վրա և ուղղված է նրա ինքնորոշմանը:

Մասնավորապես, ըստ օրենսգրքի՝ չափահասության տարիքի հասած անձը, ով որոշակի հոգեկան, ֆիզիկական կամ մտավոր հիվանդության պատճառով չի կարողանում ամբողջությամբ կամ մասնակիորեն հոգալ իր իրավական հարաբերությունները, ինչպես նաև կնքել իրավական գործարքներ, նրա նկատմամբ դատարանի կողմից կարող է նշանակվել խնամակալ (custodian): Խնամակալը կարող է ընտրվել միայն անձի սեփական դիմումի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ի վիճակի չէ հայտնելու իր ցանկությունը:[275] Խնամակալն ընտրվում է միայն կոնկրետ իրավահարաբերությունների առնչությամբ, որոնք որոշվում են դատարանի կողմից կոնկրետ անձի հանգամանքների գնահատման պայմաններում:[276] Դատարանը որպես խնամակալ նշանակում է աջակցության կարիք ունեցող անձի համաձայնությամբ: Աջակցության կարիք ունեցող անձի կողմից խնամակալի թեկնածուի բացակայության դեպքում, դատարանն ընտրում է խնամակալի՝ հաշվի առնելով անձի ընտանեկան և այլ անձնական կապերը, մասնավորապես, անձի կապը ծնողների, երեխաների, ամուսնու կամ փաստացի ամուսնու հետ, ինչպես նաև շահերի բախման հնարավորությունը նրանց միջև:[277] Անձի խնամակալ կարող է ընտրվել խնամակալության միավորման ներկայացուցիչը կամ միավորումը՝ միայն դրա համաձայնության դեպքում:[278] Միաժամանակ, կամավոր խնամակալի բացակայության դեպքում տրամադրվում է մասնագիտական խնամակալություն, երբ դատարանն ընտրում է մասնագիտացված հիմնարկների աշխատակիցների, ում համար խնամակալությունը հանդիսանում է աշխատանքային պարտականությունների մաս, օրինակ բժիշկներ, սոցիալական աշխատողներ և այլն: [279]

Խնամակալի հիմնական գործառույթը անձի իրավական հարաբերությունների համար անհրաժեշտ գործողությունների իրականացումն է: Անձը չի կորցնում իր գործունակության իրավունքը և պրակտիկորեն հնարավոր դեպքերում կարող է որոշումներ կայացնել առանց երրորդ անձանց միջամտության: Իր գործառույթներն իրականացնելիս խնամակալը պարտավոր է հաշվի առնել անձի կամքը և ցանկությունները:[280] Խնամակալը կարող է անձի անունից որոշումներ կայացնել միայն դատարանի կողմից նման իրավասություն ստանալու դեպքում և նախօրոք քննարկելով նման որոշումը խնամակալության տակ գտնվող անձի հետ:[281]

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև անձի կողմից իր առողջության իրավունքի առնչությամբ նախօրոք պլանավորման /կյանքի կտակի/ հնարավորությունը, որի հիման վրա որոշում կայացնելու ունակություն ունեցող գործունակության տարիքի հասած անձը գրավոր կերպով կարող է որոշել, թե ապագայում որոշում կայացնելու հնարավորության չունենալու

---

[274] Գերմանիայի Դաշնության քաղաքացիական օրենսգիրք, հասանելի է http://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p6414 կայքէջում:

[275] Նույն տեղում, հոդված 1896, մաս 1-ին:

[276] Նույն տեղում:

[277] Նույն տեղում, հոդված 1898, կետ 5:

[278] Նույն տեղում, հոդված 1897, կետ 2 և հոդված 1900, կետ 1:

[279] Նույն տեղում, հոդված 1898, կետ 8:

[280] Նույն տեղում, հոդված 1901:

[281] Նույն տեղում, հոդված 1901, կետ 3:

դեպքում ինչպիսի բուժման, բժշկական միջամտությունների է համաձայն կամ դեմ:[282] Նախօրոք պլանավորումը կատարվում է բացառապես անձի ցանկության հիման վրա և որևէ անձ չի կարող պարտադրվել:[283] Որոշում կայացնելու ժամանակ խնամակալը պարտավոր է հաշվի առնել նման կտակի գոյությունը և ապահովել անձի ցանկության իրականացումը: Կտակի բացակայության կամ անձի կոնկրետ իրավիճակին դրա անհամապատասխանության դեպքում խնամակալը պարտավոր է հաշվի առնել անձի ցանկությունները կոնկրետ բժշկական միջամտության առչնությամբ: Միաժամանակ, օրենքը նախատեսում է, որ անձի ցանկությունները կարող են գնահատվել նաև հիմք ընդունելով անձի կողմից նախկինում արված բանավոր կամ գրավոր հայտարարությունները, էթիկական կամ կրոնական համոզմունքները, ինչպես նաև անձի այլ անձնական արժեքները:[284] Տվյալ սկզբունքները գործում են անկախ հիվանդության տեսակից և աստիճանից:[285] Միաժամանակ, Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է դատարանի համապատասխան որոշման պարտադիրությունը խնամակալության տակ գտնվող անձի առողջության իրավունքի վերաբերյալ,[286] անձի ազատության իրավունքի սահմանափակում հանդիսացող մեկուսացման վերաբերյալ,[287] անձի վարձակալած բնակարանից տեղափոխելու,[288] անձի սեփականության իրավունքի տնօրինման[289] և այլ հարցերում:

Այսպիսով, չնայած օրենսդրությամբ նախատեսված կարգավորման որոշ դրույթներ պարունակում են անձի փոխարեն որոշումների կայացման համակարգի տարրեր, սակայն այն հիմնվում է անձի գործունակության իրավունքը հարգելու, նրա ցանկությունները և կամքը հաշվի առնելու սկզբունքի վրա:

5. Շվեդիայի Թագավորություն

Շվեդիայի օրենսդրությունը հիմնված է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ սեփական հարաբերությունները կարգավորելու առնչությամբ լրիվ ինքնորոշման սկզբունքի վրա: Գնահատվելով որպես անձի արժանապատվությունը նվաստացնող երևույթ՝ 1989 թվականից ի վեր շվեդական օրենսդրությունը բացառում է անձի գործունակության իրավունքի սահմանափակումը: Փոխարենը, սեփական հարաբերությունները կարգավորելու առնչությամբ աջակցության կարիք ունեցող անձանց գործունակության իրավունքի իրացման համար նախատեսվել են պատրոնի և հոգաբարձուի ինսիտիտուտները:[290]

Համաձայն Երեխաների և ծնողների օրենսգրքի,[291] այն դեպքերում, երբ անձը հիվանդության, հոգեկան խանգարման, առողջության վիճակի կամ այլ նմանատիպ հանգամանքների պատճառով իր հարաբերությունները կարգավորելու հարցում աջակցության կարիք ունի, դատարանի կողմից նրա համար ընտրվում է խնամակալ (պատրոն): Անձի նկատմամբ խնամակալի ընտրությունը չի կարող տեղի ունենալ առանց նրա համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ անձն ի վիճակի չէ տալու նման համաձայնություն: Իրավական

---

[282] Նույն տեղում, հոդված 1901ա:
[283] Նույն տեղում, կետ 4:
[284] Նույն տեղում, կետ 2:
[285] Նույն տեղում, կետ 3:
[286] Նույն տեղում, հոդված 1904:
[287] Նույն տեղում, հոդված 1906:
[288] Նույն տեղում, հոդված 1907:
[289] Նույն տեղում, հոդված 1908:
[290] Երեխաների և ծնողների օրենսգիրք, (SFS: 1949:381): Հասանելի է http://www.government.se/content/1/c6/02/76/55/12308db5.pdf կայքէջում:
[291] Նույն տեղում, հոդված 11, մաս 4:

գործողությունների և գործարքների կնքման համար աջակցության ենթակա անձի համաձայնությունը պարտադիր է:

Երբ անձը ծանր հիվանդության, հոգեկան խանգարման կամ այլ նմանատիպ վիճակների պատճառով ունակ չէ հոգալու անձնական կամ գույքային հարցերը, նրա նկատմամբ կարող է նշանակվել հոգաբարձու (förvaltare): Ի տարբերություն պատրոնի՝ հոգաբարձուի նշանակման համար անձի համաձայնությունը չի պահանջվում: Սակայն անկախ այս հանգամանքից՝ անձն իրավունք ունի ցանկացած ժամանակ պահանջելու դադարեցնել, ինչպես խնամակալի, այնպես էլ հոգաբարձուի ընտրության գործընթացը: Հոգաբարձուի իրավասությունները որոշվում են կոնկրետ անձի հանգամանքների գնահատմամբ և սահմանվում են կոնկրետ հոգաբարձուի մանդատում:[292] Անկախ հոգաբարձուի իրավասության շրջանակից՝ անձը պահպանում է ընտրելու իրավունքը: Միաժամանակ, հոգաբարձուի նշանակումը որևէ կերպ չի կարող ազդել ծառայությունների և աշխատանքային պայմանագրեր կնքելու եկամուտները տնօրինելու իրավունքների իրականացման վրա, ինչպես նաև նվիրատվություն կատարելու, կտակելու իրավունքների վրա, քանի դեռ տվյալ հարցերի կարգավորումը նախատեսված չէ հոգաբարձուի մանդատով:[293]

Խնամակալի կամ հոգաբարձուի ընտրության պահանջով կարող են դիմել աջակցության կարիք ունեցող 16 տարին լրացած անձը, օրինական ներկայացուցիչը (մինչև 16 տարեկանների դեպքում), ամուսինը կամ փաստացի ամուսինը, մտերիմ հարազատը:[294] Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է անձամբ նախաձեռնել հոգաբարձուի նշանակման վարույթ, ինչը հիմնականում, տեղի է ունենում խնամակալի ընտրության վարույթի ընթացքում, երբ պարզվում է, որ անձը չի կարող համաձայնություն տալ և կարգավորել իր հարաբերությունները:

Անձի նկատմամբ խնամակալի և հոգաբարձուի ընտրությունը կատարվում է դատական կարգով: Դատական կարգով է որոշվում նաև անձի՝ սեփական հարաբերությունները ներկայացնելու ունակությունը:[295] Օրենսդրությունը պահանջում է բժշկական եզրակացության առկայություն անձի նկատմամբ հոգաբարձու նշանակելու դեպքում, ինչպես նաև խնամակալի նշանակման դեպքում, երբ անձն ունակ չէ տալու իր համաձայնությունը:[296] Օրենսգիրքը չի նախատեսում անձի նկատմամբ խնամակալության կամ հոգաբարձության նշանակման կոնկրետ ժամկետ, այն որոշվում է անձի հանգամանքների և անհրաժեշտ աջակցության հիման վրա: Մանդատով նախատեսված պարտականությունների իրականացումից հետո դրա գործողությունը դադարում է:[297]

Անձի նկատմամբ նշանակված խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ որոշումների, ինչպես նաև խնամակալի ու հոգաբարձուի մանդատում փոփոխությունների վերաբերյալ ներկայացված բողոքների քննությունը կատարվում է դատարանի կողմից: Նման դիմումներ ներկայացնելու իրավունք ունեն անձը, նրա օրինական ներկայացուցիչը, ամուսինը և փաստացի ամուսինը, մտերիմ ազգականը, խնամակալը կամ հոգաբարձուն: Դատարանն անձամբ կարող է նախաձեռնել մանդատի փոփոխության վարույթ առանց համապատասխան դիմումի: Դատարանի կողմից որոշումների կայացման համար կողմերը, հատկապես աջակցության կարիք ունեցող անձը, պետք է կարծիք հայտնելու հնարավորություն ունենան:[298]

Միաժամանակ, Շվեդիայում 2000 թվականին ձևավորվել է «անձնական օմբուդսմենի» ինստիտուտը, որը հանդես է գալիս որպես որոշումների կայացման համար աջակցության

---

[292] Երեխաների և ծնողների օրենսգիրք, գլուխ 11, հոդված 7:
[293] Նույն տեղում, հոդված 8:
[294] Նույն տեղում, հոդված 15:
[295] Նույն տեղում, հոդված 25:
[296] Հոդված 17:
[297] Նույն տեղում, հոդված 19:
[298] Նույն տեղում, հոդված 23:

լավագույն փորձի օրինակ:[299] Օմբուդսմենը հիմնականում սոցիալական աշխատանքի կամ իրավագիտության մասնագետ է, ով աշխատում է միայն աջակցության կարիք ունեցող անձի համար՝ հիմնված նրա ցանկությունները և նախասիրությունները հաշվի առնելու սկզբունքի վրա: Օմբուդսմենը որևէ հարաբերություններով կամ պարտականություններով կապված չէ բժշկական հիմնարկների, սոցիալական ծառայությունների, պետական իշխանության այլ մարմինների կամ անձանց հետ: Այն գործում է տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով, և յուրաքանչյուր ինքնակառավարման մարմին ունի ազգային ծրագրից բխող անձնական օմբուդսմենի սեփական համակարգը: Չնայած անձնական օմբուդսմենը վճարվում է տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեից, սակայն հիմնականում ընդգրկվում է հասարակական կազմակերպությունների միջոցով՝ հնարավոր շահերի բախումը բացառելու նպատակով, հատկապես, երբ անձը ցանկանում է բողոքել ինքնակառավարման մարմնի դեմ: Անձնական օմբուդսմենի և աջակցության կարիք ունեցող անձի հարաբերությունները հիմնված են բացառապես վստահության սկզբունքի վրա: Անձնական օմբուդսմենը պարտավոր է պահպանել հարաբերությունների գաղտնիությունը, և հարաբերությունների դադարեցման դեպքում վերադարձնել անձին պատկանող ամբողջ ինֆորմացիան կամ ոչնչացնել դրանք նրա ներկայությամբ: Անհրաժեշտ է փաստել, որ ծրագիրը բավականին դրական արդյունքներ է գրանցել հատկապես անտուն կամ հասարակությունից մեկուսացված վայրերում բնակվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շրջանում: Հաջողության հիմնական գրավականը անձական շփման հնարավորությունն է, ինչպես նաև մի շարք այլ կարևոր հանգամանքներ: Մասնավորապես, անձնական օմբուդսմեն ունենալու համար բյուրոկրատական ընթացակարգ, դիմումի ներկայացում չի պահանջվում: Անձի բանավոր համաձայնությունը բավարար է օմբուդսմենի ներգրավման համար: Օմբուդսմենը ֆիքսված աշխատանքային գրաֆիկ չունի, գործում է ճկուն ժամանակացույցով, ներառյալ երեկոյան և հանգստյան օրերին: Օմբուդսմենն աջակցում է անձին տարատեսակ հարցերում: Այս մոտեցումը կարևորվում է, քանի որ նախապատվությունը տրվում է կոնկրետ անձին հուզող հարցերին: Միաժամանակ, օմբուդսմենի կողմից աջակցության տրամադրման համար անհրաժեշտ չէ իրականացնել անձի ունակությունների գնահատում:[300]

Այսպիսով, ծրագիրն իր դրական արդյունքներն է ունեցել ոչ միայն հոգեկան և մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնորոշման բարձրացման հարցում, այլև հիվանդանոցային բուժման և խնամքի ենթակա անձանց քանակի, հետևաբար նաև հոգեկան առողջության համար պետության ծախսերի նվազման վրա:

Ամփոփելով այլ պետությունների օրենսդրությունների ուսումնասիրությունը՝ կարելի է արձանագրել, որ պետությունները տարբեր մոտեցում ունեն հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության վերաբերյալ: Դրանք տարբեր կերպ են արտացոլում հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության վերաբերյալ միջազգային չափանիշները՝ նախատեսելով առավել կամ նվազ միջամտության հնարավորություններ անձի անձնական կյանքի և այլ իրավունքների իրականացման հարցում: Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ անկախ անձի գործունակության իրավունքի սահմանափակման հնարավորության նախատեսումից, քննարկված բոլոր պետությունների կողմից որդեգրվել է անձի կամքի և ցանկությունների նախապատվության սկզբունքը: Պետությունների փորձի համեմատական վերլուծության արդյունքում հնարավոր է ընտրել հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից առավել նպատակահարմար կարգավորման ձևերը:

---

[299] Galway NUI CDLP, *Submission on Legal Capacity: the Oireachtas Committee on Justice, Defence & Equality*, p. 38:

[300] Jespersson, M. *Personal Ombudsman in Skåne – A User-controlled Service with Personal Agents* in Stastny and Lehmann (eds.) Alternatives beyond Psychiatry, 2007, page 299.

6. Եզրահանգումներ

Ուսումնասիրության հիմնական եզրահանգումը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և պրակտիկայի շրջանակներում՝ առանց այլընտրանքային միջոցների գոյության և կիրառման, գործունակության իրավունքի լրիվ սահմանափակումը խախտում է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքը՝ իր հերթին հանգեցնելով տվյալ խումբ անձանց այլ հիմնարար իրավունքների և ազատությունների անհարկի սահմանափակումների:

Գործունակության իրավունքը՝ որպես մարդու իրավունք

Գործունակության իրավունքը անձի հիմնարար իրավունքներից է, քանի որ հնարավորություն է տալիս անձին լինելու իրավունքի սուբյեկտ՝ կայացնելու իրավական ուժ ունեցող որոշումներ և գործարքներ՝ հանդիսանալով անձի այլ իրավունքների ու ազատությունների իրացման հիմնական երաշխիք: Պատմականորեն հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք ենթարկվում են խտրականության, տարանջատման և մեկուսացման, ինչն արտահայտվում է նաև նրանց գործունակության իրավունքի լրիվ կամ մասնակի սահմանափակմամբ: Պաշտպանիչ համարվող այս միջոցն իրականում հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց «քաղաքացիական մահվան», որի պայմաններում անձինք զրկվում են սեփական կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու հնարավորությունից՝ ենթարկվելով երրորդ անձանց կամքին, դառնալով ավելի խոցելի ու անպաշտպան: Հետևաբար, գործունակության իրավունքը կրում է երկակի նշանակություն և կարևորություն, հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և դրա հետևանքները

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված է հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անգործունակ ճանաչելու միատեսակ մոտեցում, որի պայմաններում հնարավոր չէ պատշաճ գնահատել անձի հնարավորություններն ու կարիքները և կիրառել դրանց համարժեք աջակցության և պաշտպանության միջոցներ:

Դատական պրակտիկան փաստում է, որ գործունակության լրիվ սահմանափակումը կիրառվում է հոգեկան և մտավոր տարբեր տեսակի և ծանրության հիվանդություններ, և հետևաբար, տարբեր հնարավորություններ ու կարիքներ ունեցող անձանց նկատմամբ, որպիսի պայմաններում նրանց իրավունքները և ազատությունները ենթարկվում են անհամաչափ սահմանափակումների:

Հաշվի առնելով, որ գործող օրենսդրությամբ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռը ժամկետային սահմանափակման կամ պարբերական վերանայման ենթակա չէ, ինչպես նաև ըստ օրենքի՝ անգործունակ ճանաչված անձն իր գործունակությունը վերականգնելու պահանջով դատարան դիմելու ուղղակի իրավասություն չունի՝ անձի այլ իրավունքների և ազատությունների սահմանափակումները կրում են շարունակական բնույթ:

Մասնավորապես, անգործունակ անձն ուղղակիորեն զրկվում է ամուսնության և ծնողական իրավունքներից, աշխատելու իրավունքից, իրեն պատկանող սեփականությունը տնօրինելու, կտակելու, քաղաքական և հասարակական կյանքին անմիջականորեն մասնակցելու իրավունքից: Անձը կորցնում է բնակության վայրն ընտրելու հնարավորությունը, առանց սեփական համաձայնության և դատական վերահսկողության կարող է ենթարկվել ազատության իրավունքի սահմանափակման և բժշկական միջամտությունների՝ ստեղծելով անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի վտանգ:

Ավելին, խնդրահարույց է անձին անգործունակ ճանաչելու առնչությամբ դատական վարույթի ընթացքում նրա դատավարական իրավունքների, ներառյալ անձամբ կամ ներկայացուցչի կողմից լսված լինելու, իրավական օգնություն ստանալու, դատարանի վճռի հիմնավորվածության և այլ իրավունքների ապահովումը: Անձը զրկվում է անձամբ՝ առանց

երրորդ անձանց միջնորդության դատարանի և իրավական պաշտպանության այլ միջոցների հասանելիության իրավունքից, որպիսի հանգամանքը վտանգում է անձի իրավունքների և շահերի պաշտպանության արդյունավետությունը, ինչը հաստատվել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ:

Գործող օրենսդրության պայմաններում անգործունակ ճանաչված անձն ամբողջովին ենթարկվում է երրորդ անձանց կամքին: Խնամակալը անձի կյանքի գրեթե բոլոր ոլորտներում որոշում կայացնելու անբեկանելի իրավասություն է ստանում: Պրակտիկայում չեն բացառվում անգործունակ ճանաչված անձի և խնամակալի միջև շահերի բախման հնարավոր դեպքերը:

Ավելին, անձին մեկուսացնելու պայմաններում խնամակալի լիազորությունները ստանձնում է համապատասխան հաստատության ներկայացուցիչը, ինչը նշանակում է, որ անձն ամբողջովին հայտնվում է հաստատության վերահսկողության ներքո, ինչը հղի է անձի իրավունքների խախտումների անբացահայտ և անպատիժ մնալու վտանգով:

Անգործունակ ճանաչված անձանց իրավունքների պաշտպանության խնդիրների առկայությունն ավելի է ընդգծվում դրանց պաշտպանության նկատմամբ հսկողություն իրականացնող գործուն և արդյունավետ մեխանիզմների բացակայությամբ: Անգործունակ անձանց խնամակալների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները: Հետազոտության արդյունքները փաստում են, որ այդ մարմինները չունեն օրենքով սահմանված հստակ լիազորություններ և պարտականություններ, մարդկային և նյութական ռեսուրսներ, ինչպես նաև մասնագիտական կարողություններ անգործունակ ճանաչված անձանց իրավունքների և շահերի պաշտպանության և հսկողության իրականացման առնչությամբ: Անձի կարևորագույն իրավունքների առնչությամբ, մասնավորապես, անձին հոգեբուժական հաստատությունում, ինչպես նաև սոցիալական խնամքի հաստատությունում տեղավորելու հարցում, խնամակալության և հոգաբարձության մարմինները որևէ իրավասություն չունեն: Խնդրահարույց է նաև հոգեկան և մտավոր հիվանդություն ունեցող անձանց մեկուսացման վայրերում դիտարկումներ իրականացնող մշտական մեխանիզմի բացակայությունը: Ձևական բնույթ է կրում անձի այլ իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությունը, քանի որ այն որևէ հստակ կարգավորում չունի և դիտարկվում է որպես խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների բարի կամքի դրսևորում:

Գործունակության իրավունքի վերաբերյալ ՀՀ միջազգային պարտավորություններ

Մինչդեռ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը սահմանում են անձի գործունակության իրավունքի ճանաչման և պաշտպանության վերաբերյալ հստակ պարտավորություններ:

Մասնավորապես, ՀՈՒԱԻԿը պետություններին պարտավորեցնում է ճանաչել բոլոր անձանց՝ օրենքի առջև հավասարության իրավունքը՝ բացառելով անձի գործունակության իրավունքի ցանկացած խտրական սահմանափակում՝ պայմանավորված հիվանդությամբ կամ հաշմանդամությամբ: Այն պահանջում է պետություններից հարգել հաշմանդամություն ունեցող անձանց տարբերությունները և մարդկային բազմազանությունը՝ ապահովելով գործունակության իրավունքի լիարժեք իրացման հնարավորություններով կյանքի բոլոր ոլորտներում և ցանկացած պարագայում: Ավելին, ելնելով բոլոր անձանց՝ որոշումներ կայացնելու հարցում աջակցության անհրաժեշտությունից՝ ՀՈՒԱԻԿը պետություններին պարտավորեցնում է անձի փոխարեն որոշումների կայացման գործող մեխանիզմները փոխարինել որոշումներ կայացնելու հարցում անձին անհրաժեշտ աջակցության մեխանիզմներով: Տրամադրվող աջակցությունը պետք է բավարարի և համապատասխանի անձի կարիքներին ու հնարավորություններին՝ հիմնվելով նրա անկախության և ինքնորոշման, կամքն ու ցանկությունները հաշվի առնելու սկզբունքների վրա:

Ի լրումն ՄԱԿ-ի կողմից ընդունված փաստաթղթերի՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում նույնպես զարգանում են սեփական հարաբերությունների առնչությամբ որոշումներ կայացնելու հարցում դժվարություններ ունեցող անձանց պաշտպանության և աջակցության տրամադրման երաշխիքներ: Մասնավորապես, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ընդունված փաստաթղթերով նախատեսվում են անգործունակ անձանց պաշտպանության հստակ չափանիշներ՝ պահանջելով պետություններից ապահովել պաշտպանության ճկուն մեխանիզմներ, որոնք բավարար և համարժեք կլինեն անձանց հնարավորություններին ու կարիքներին և ավելորդ միջամտություն չեն գործի նրանց անձնական կյանքին: Հետևաբար Հանձնարականը սահմանում է անձի գործունակության սահմանափակմանն այլընտրանքային միջոցների նախատեսումը և կիրառումը:

Հանձնարարականը սահմանում է նաև համապատասխան միջոցի ընտրության և կիրառման վերաբերյալ մի շարք կարևոր նյութական և ընթացակարգային երաշխիքներ՝ հիմնված անձի անկախության, կամքն ու ցանկությունները հաշվի առնելու, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի սկզբունքների վրա:

Անձի գործունակության իրավունքի սահմանափակման և այլ իրավունքների վրա դրա ազդեցության առնչությամբ ՄԻԵԴ բավականին հարուստ դատական պրակտիկայի շրջանակներում ձևավորվել են հաշմանդամություն ունեցող անձանց անձնական կյանքի և այլ իրավունքների պաշտպանության նյութական և ընթացակարգային պահանջներ: Անձի գործունակության իրավունքը ՄԻԵԴի կողմից դիտարկվում է անձի անձնական կյանքի բաղկացուցիչ տարր, հետևաբար դրա ցանկացած միջամտություն պետք է բավարարի ՄԻԵԿ 8-րդ հոդվածով նախատեսված նյութական և ընթացակարգային պահանջները: Մի շարք գործերով Դատարանն արձանագրել է նաև գործունակության լրիվ կամ մասնակի սահմանափակման հետևանքով անձի այլ իրավունքների և ազատությունների խախտումներ:

Գործունակության իրավունքի լրիվ կամ մասնակի սահմանափակում նախատեսող միաչափ օրենսդրության գոյությունը ՄԻԵԴի կողմից ճանաչվել է անձի անձնական կյանքի իրավունքի խախտում՝ ընդգծելով գործունակության իրավունքի սահմանափակմանն այլընտրանքային միջոցների նախատեսման անհրաժեշտությունը: Ավելին, անկախ հոգեկան կամ մտավոր առողջության խնդիրների առկայությունից՝ անձի գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է հիմնվի կոնկրետ անձի հանգամանքների ու կարիքների պատշաճ գնահատման վրա, կրի ժամանակավոր բնույթ և ենթարկվի պարբերական վերանայման:

Դատարանը շեշտել է նաև գործունակության իրավունքի սահմանափակման վարույթի շրջանակներում անձի դատավարական իրավունքների պաշտպանության կարևորությունը, ներառյալ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լսված լինելու, իրավաբանական օգնության և որոշումը բողոքարկելու իրավունքի արդյունավետ իրականացումը և այլն:

Խնդրահարույց է միջազգային իրավական նորմերի զարգացումների վերաբերյալ դատական իշխանության ներկայացուցիչների, անգործունակ ճանաչվելու ենթակա, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքների և շահերի պաշտպանությամբ զբաղվելու լիազորություն ունեցող անձանց անիրազեկվածությունը:

Այսպիսով, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի ճանաչման և պաշտպանության վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրությունը ակնհայտորեն հակասում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, որոնց Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է հետևել՝ անհապաղ իրականացնելով օրենսդրության, քաղաքականության և պրակտիկայի արդյունավետ փոփոխություններ, որոնք պետք է կրեն ընդգրկուն բնույթ:

7. Առաջարկություններ

Անհրաժեշտ է մշակել և կենսագործել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց փոխարեն որոշումների կայացման գործող համակարգը աջակցման համակարգով փոխարինող օրենսդրություն և քաղաքականություն, որի շրջանակներում

1. Անհրաժեշտ է ճանաչել բոլոր անձանց հավասարությունն օրենքի առջև՝ ճանաչելով չափահաս տարիքի հասած բոլոր անձանց գործունակության իրավունքը՝ առանց որևէ խտրականության՝ պայմանավորված անձի հիվանդությամբ, հաշմանդամությամբ կամ ցանկացած այլ խտրական հիմքով:
2. Հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի և որոշումների կայացման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և քաղաքականությունը պետք է հիմնված լինեն անձանց մարդկային արժանապատվությունը հարգելու, ինքնորոշման և նրանց կամքը ու ցանկությունները հաշվի առնելու սկզբունքների վրա:
3. Անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության և որոշումների կայացման աջակցության՝ անձի գործունակությունը չսահմանափակող տարբեր միջոցներ: Գործունակության իրացմանն ուղղված այլընտրանքային միջոցների տրամադրումն ու կիրառումն իրականացնել ոչ խտրական չափանիշների հիման վրա:
4. Օրենսդրությամբ նախատեսել որոշումների կայացման հարցում աջակցման կարիք ունեցող անձին աջակցություն տրամադրելու ինչպես ոչ ֆորմալ (հարազատների, ընկերների կողմից), այնպես էլ մասնագիտական աջակցության (անձնական օմբուդսմենի կամ օգնականի կողմից) հնարավորությունը:
5. Երաշխավորել, որպեսզի որոշումների կայացման աջակցության բոլոր ձևերը և տեսակները, ներառյալ աջակցող անձի ընտրությունը հիմնված լինեն անձի կամքի, ցանկությունների և նախասիրությունների վրա:
6. Ապահովել որոշումների կայացման աջակցման համակարգի հասանելիությունը դրա կարիքն ունեցող բոլոր անձանց համար: Անձին անհրաժեշտ աջակցության ծավալը և աստիճանը չպետք է խոչընդոտի աջակցության ստացմանը:
7. Ապահովել անձին անհրաժեշտ աջակցության տնտեսական հասանելիությունը:
8. Երաշխավորել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի իրավունքը մերժելու, դադարեցնելու և փոփոխելու աջակցության տրամադրման հարաբերությունները:
9. Բացառել որոշումների կայացման համար անհրաժեշտ աջակցության տրամադրման ազդեցությունը անձի այլ իրավունքների սահմանափակումների վրա, ներառյալ ամուսնության և երեխաներ ունենալու, ծնողական իրավունքների, ինչպես նաև բժշկական միջամտության ենթարկվելու համաձայնություն տալու, ազատության իրավունքի, ընտրության, սեփականության իրավունքի վրա և այլն:
10. Օրենսդրությամբ ճանաչել աջակցող անձի կարգավիճակը, ինչպես նաև նախատեսել երրորդ անձանց կողմից աջակցող անձի կարգավիճակը ստուգելու և նրա գործողությունները վիճարկելու մեխանիզմներ, այն դեպքերի համար, երբ աջակցող անձը չի գործում աջակցման ենթակա անձի կամքի և ցանկությունների համաձայն:
11. Օրենսդրությամբ նախատեսել հստակ երաշխիքներ և պատասխանատվության միջոցներ երրորդ անձանց, ներառյալ աջակցող անձի կողմից հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշումների կայացմանն անհարկի միջամտությունների համար:

12. Անհրաժեշտ է չափահաս տարիքի հասած բոլոր անձանց համար նախատեսել ապագայում իրենց իրավահարաբերությունների, ներառյալ անձնական կյանքի, բժշկական միջամտությունների, ինչպես նաև ֆինանսատնտեսական հարաբերությունների, հնարավոր աջակցողի կամ խնամակալի/հոգաբարձուի անձի վերաբերյալ որոշումների նախօրոք պլանավորման հնարավորությունը: Օրենսդրությամբ սահմանել նախօրոք պլանավորման հստակ չափանիշներ՝ ի ապահովումն անձի անկախության և ազատ կամարտահայտության սկզբունքների:
13. Անհրաժեշտ է քննարկել գործունակության սահմանափակմանն այլընտրանքային միջոցների գործողության հաստատման մեխանիզմները: Դիտարկել ինչպես դատական, այնպես էլ արտադատական միջոցներով դրանց հաստատման և ճանաչման հնարավորությունը:

14. Օրենսդրությամբ հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի սահմանափակման հնարավորություն նախատեսելու դեպքում <u>բացառել գործունակության լրիվ սահմանափակման հնարավորությունը</u>:
15. Գործունակության մասնակի սահմանափակումը թույլատրել միայն բացառիկ դեպքերում, երբ անձն ունակ չէ անձնական կյանքի վերաբերյալ իրավական բնույթի որոշումներ կայացնել նույնիսկ երրորդ անձանց աջակցությամբ:
16. Օրենսդրությամբ սահմանել անձի գործունակության իրավունքի սահմանափակման թիրախավորման սկզբունքը՝ կոնկրետ իրավահարաբերությունների կամ կոնկրետ իրավունքների իրականացման առնչությամբ:
17. Օրենսդրությամբ սահմանել անձի գործունակության իրավունքի սահմանափակման հնարավոր առավելագույն ժամկետ՝ սահմանելով գործունակության սահմանափակման դադարեցման պայմանները, ինչպես նաև գործունակության իրավունքի սահմանափակման անհրաժեշտության պարբերական վերանայման հստակ ժամկետներ:
18. Անձի գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է վերացվի դրա հիմքերի գոյության դադարեցման դեպքում, ներառյալ կոնկրետ իրավահարաբերության դադարումը, որի առնչությամբ անձի գործունակությունը սահմանափակվել էր, անձի վիճակի բարելավումը և այլն:
19. Անձի անունից որոշումների կայացումը պետք է հիմնվի անձի կամքը, նախասիրությունները և ցանկությունը հաշվի առնելու սկզբունքի վրա: Ցանկացած որոշում պետք է կայացվի անձի հետ խորհրդակցության և նրա կամքի և ցանկությունների լավագույն մեկնաբանության հիման վրա:

20. Գործունակության ցանկացած սահմանափակում կարող է իրականացվել միայն դատարանի կողմից անձի արդար դատաքննության իրավունքի պահանջների պահպանության հիման վրա:
21. Անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել անձի գործունակության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս դատարանի կողմից նշանակված փորձագիտական քննությամբ պարզաբանման ենթակա հարցերի ճկուն շրջանակ, որն ի լրումն անձի հիվանդության ախտորոշման, կընդգրկի նաև պարզաբանում կոնկրետ գործողությունների ընկալման և ղեկավարման հնարավորության վերաբերյալ, անձի սոցիալական և անձնական կյանքին հիվանդության ազդեցության գնահատման վերաբերյալ:
22. Անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել գործունակության իրավունքի սահմանափակման ենթարկվող անձի՝ դատարանի կողմից անձամբ լսված լինելու և դատական վարույթին ակտիվ մասնակցություն ունենալու իրավունքը, ներառյալ անձին ողջամիտ հարմարություններով ապահովելու՝ դատարանի պարտականությունը:

23. Ի ապահովումն արդար դատական քննության իրավունքի պատշաճ իրականացման՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել գործունակության իրավունքի սահմանափակման ենթակա անձի դատավարական հստակ կարգավիճակ:
24. Գործունակության իրավունքի սահմանափակման ենթակա անձի կողմից դատական քննությանը ներկա գտնվելու անհնարինությունը պետք է հաստատվի համապատասխան բժշկական, սոցիալական մասնագիտական կարծիքով, որը պետք է գնահատի անձի առողջական վիճակը, ինչպես նաև դատավարության հետևանքները և ազդեցությունը անձի առողջության և կյանքի վրա: Անհրաժեշտ է նախատեսել անձի գործունակության իրավունքի սահմանափակման վերաբերյալ գործերով արտագնա դատական նիստերի իրականացման հնարավորությունը:
25. Օրենսդրությամբ նախատեսել գործունակության իրավունքի սահմանափակման ենթակա անձին՝ պետության ռեսուրսների հաշվին իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորությունը:
26. Օրենսդրությամբ ամրագրել դատարանի պարտականությունը՝ հիմնավորելու անձի գործունակության սահմանափակման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով գործունակության իրավունքի սահմանափակում չնախատեսող միջոցների կիրառման հնարավորությունը, ինչպես նաև գործունակության սահմանափակման անհրաժեշտությունը անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և ազդեցությունը դրանց իրականացման վրա:

27. Անհրաժեշտ է բացառել գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակման ուղղակի ազդեցությունը անձի անձնական և ընտանեկան կյանքի, ներառյալ ծնողական իրավունքների, բնակության վայրն ընտրելու, դատարանի և իրավական պաշտպանության այլ միջոցների հասանելիության, ընտրության իրավունքների վրա:
28. Անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել գործունակության սահմանափակման ենթարկված անձի՝ դատարանի և իրավական պաշտպանության այլ միջոցների ուղղակի հասանելիության իրավունքը ինչպես գործունակության սահմանափակում նախատեսող դատական ակտը բողոքարկելու, գործող սահմանափակումը դադարեցնելու, փոփոխելու, այնպես էլ ցանկացած այլ հարաբերությունների առնչությամբ՝ ներառյալ իրավունքները և շահերը պաշտպանելու համար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորությունը:
29. Անհրաժեշտ է հոգեբուժական օգնության վերաբերյալ օրենսդրությամբ երաշխավորել, որ գործունակության իրավունքի սահմանափակման ենթարկված անձի՝ բուժման և բժշկական միջամտության ենթարկվելու համաձայնության բացակայության դեպքում նրա նկատմամբ կիրառվել նույն երաշխիքները, ինչ գործունակության իրավունքի սահմանափակման չենթարկված անձանց նկատմամբ:
30. Անհրաժեշտ է երաշխավորել հոգեբուժական հաստատություններում անձանց իրավունքների պաշտպանությունը: Անկախ հոժարակամ կամ ոչ հոժարակամ բուժման ենթարկվելուց՝ յուրաքանչյուր անձ պետք է ստանա իր բուժման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, և բուժումը կամ ցանկացած այլ բժշկական միջամտություն մերժելու անձի իրավունքը պետք է հարգվի:
31. Անձի հոսպիտալացումը և ցանկացած բժշկական միջամտությունը պետք է կատարվի նրա տեղեկացված, ազատ և գրավոր համաձայնության հիման վրա, պետք է բացառել երրորդ անձի կողմից նման համաձայնություն տալու հնարավորությունը՝ անկախ անձի գործունակության իրավունքի սահմանափակման:

32. Անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձին սոցիալական խնամքի հաստատություններում տեղավորելու մեխանիկական և պարբերական դատական վերանայման հնարավորությունը:
33. Անհրաժեշտ է օրենսդրությամբ ճանաչել գործունակության սահմանափակման ենթարկված անձի սեփականության իրավունքը, ներառյալ անձի կողմից իրեն պատկանող գույքը իր ցանկությամբ տնօրինելու, կտակելու իրավասությունը: Միաժամանակ, եթե անձի գործունակության սահմանափակումը ներառում է անձի սեփականության իրավունքի առնչությամբ որոշումների կայացման հնարավորությունը, խնամակալի/հոգաբարձուի կողմից կայացված որոշումը պետք է հիմնվի բացառապես անձի կամքը և ցանկությունները հաշվի առնելու սկզբունքի հիման վրա:
34. Անհրաժեշտ է օրենսդրությամբ բացառել հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության սահմանափակման ցանկացած ուղղակի բացասական ազդեցությունն անձի անձնական և ընտանեկան կյանքի, ներառյալ ամուսնության իրավունքի և ծնողական իրավունքների վրա:
35. Անհրաժեշտ է օրենսդրությամբ ճանաչել հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական և քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը և բացառել գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակման ուղղակի ազդեցությունը անձանց ընտրության իրավունքի վրա:

36. Քննարկել խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվող հանձնաժողովներին կազմակերպաիրավական (իրավաբանական անձի) կարգավիճակ տալու տարցը:
37. Անհրաժեշտ է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին ապահովել ֆինանսական ռեսուրսներով, ներառյալ հանձնաժողովի անդամներին իրենց լիազորությունների իրականացման համար պատշաճ ֆինանսական փոխհատուցմամբ:
38. Քննարկել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հստակ հաստիքացուցակ, ներառյալ անձին անհրաժեշտ մասնագիտական աջակցություն տրամադրող, ինչպես նաև խնամակալի/հոգաբարձուի հաստիքների սահմանման հարցը: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում ընդգրկել համապատասխան մասնագիտություններ ունեցող անձանց:
39. Քննարկել հասարակական կազմակերպությունների աշխատակիցների կողմից մասնագիտական աջակցություն տրամադրելու հնարավորությունը՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների/հանձնաժողովների հսկողության և համագործակցության շրջանակներում:
40. Անհրաժեշտ է սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմնի/հանձնաժողովի հստակ լիազորություններ և պարտականություններ, որոնք կներառեն գործունակության իրավունքի սահմանափակման դեպքում անձի իրավունքների պաշտպանության, անձի անունից որոշումներ կայացնող անձի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու արդյունավետ մեխանիզմներ, ներառյալ այցելություններ համապատասխան անձին, ինչպես հասարակությունում, այնպես էլ հասարակությունից մեկուսացված վայրերում՝ հոգեբուժական կամ սոցիալական խնամքի հաստատությունում բնակվելու դեպքերում:
41. Անհրաժեշտ է սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմինների հստակ պարտականությունը իր լիազորությունները և պարտականություններն իրականացնելիս հիմնվել գործունակության իրավունքի սահմանափակման ենթարկված անձի կամքը և ցանկությունները հաշվի առնելու սկզբունքի վրա:

42. Քննարկել գործունակության սահմանափակման ենթարկված անձի նկատմամբ դատարանի կողմից խնամակալ/հոգաբարձու նշանակելու հնարավորությունը:
43. Օրենսդրությամբ ամրագրել և ապահովել որպես խնամակալ/հոգաբարձու նշանակման ենթակա անձի վերաբերյալ անձի ցանկությունը և համաձայնությունը հաշվի առնելու սկզբունքը՝ անկախ նշանակող մարմնի կարգավիճակից:
44. Անհրաժեշտ է պրակտիկայում բացառել գործունակության իրավունք սահմանափակում ունեցող անձի և խնամակալի/հոգաբարձուի միջև շահերի բախման ցանկացած հնարավորություն:
45. Օրենսդրությամբ բացառել հոգեբուժական կամ սոցիալական խնամքի հաստատության ներկայացուցչի կողմից անձի խնամակալի/հոգաբարձուի լիազորությունները ստանձնելու հնարավորությունը:

46. Անհրաժեշտ է նախաձեռնել որոշումների կայացման հարցում աջակցման կարիք ունեցող անձանց համապատասխան աջակցման տարբեր միջոցների պիլոտային ծրագրեր:
47. Ապահովել հոգեկան և մտավոր հաշմանդանություն ունեցող անձանց և նրանց ներկայացուցիչ կազմակերպությունների ներգրավվածությունն օրենսդրության և քաղաքականության բարեփոփոխումների ընթացքին:
48. Անհրաժեշտ է իրականացնել և ապահովել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հստակ և պարբերաբար թարմացվող վիճակագրություն, ներառյալ անգործունակ ճանաչված անձանց հստակ քանակը և բաշխվածությունը:
49. Օրենսդրության և քաղաքականության փոփոխության ամփոփման արդյունքում անհրաժեշտ է սահմանել հստակ ժամանակահատված, որի ընթացքում դատական կարգով պետք է քննարկել նախկինում անգործունակ ճանաչված անձանց գործունակության իրավունքի սահմանափակման հետագա անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր դեպքում գործունակության իրավունքի ցանկացած սահմանափակման հնարավորությունը պետք է ենթարկվի նոր գնահատման և հիմնավորման:
50. Անհրաժեշտ է իրականացնել հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության, նրանց տրամադրվող աջակցության և խնամքի տրամադրման առնչությամբ գործունեություն իրականացնող պետական մարմինների, ներառյալ դատարանների, իրավապահ մարմինների, նոտարների, խնամակալության և հոգաբարձության մարմինների/հանձնաժողովների, բժշկական և սոցիալական ծառայություններ մատուցող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև փաստաբանների, իրապաշտպան և այլ հասարարական կազմակերպությունների անդամների համար մասնագիտական վերապատրաստման ծրագրեր հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության (անձամբ որոշումներ կայացնելու իրավունքի) ճանաչման և պաշտպանության վերաբերյալ:
51. Անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով՝ անհրաժեշտ է ստեղծել անկախ և արդյունավետ մեխանիզմ հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակությունից մեկուսացման վայրերում, ներառյալ հոգեբուժական և սոցիալական խնամքի հաստատություններում, դիտարկումների իրականացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Bach, M., *Supported decision making under Article 12 of the UN Convention on the Rights of Persons with Disabilities: questions and challenge*. Athlone, Ireland: Parents' Committee of Inclusion Ireland; 3 November 2007.
2. Hammarberg T., *Human Rights and Disability: Equal Rights for All*, Council of Europe, October 2008, CommDH/ IssuePaper(2008)2; https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1355349
3. Hammarberg T., *Who Gets to Decide?* Council of Europe, February 2012; https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1908555
4. Lewis, O., *Advancing Legal Capacity Jurisprudence*, EHRLR, Issue 6, 2011; http://www.academia.edu/1163165/Advancing_legal_capacity_jurisprudence
5. MDAC,*Guardianship and Human Rights in Hungary: Analysis of Law, Policy and Practice*, 2007. MDAC, *Legal Capacity in Europe, A Call to Action to the Governments and to the EU*, October 2013, http://mdac.info/sites/mdac.info/files/legal_capacity_in_europe.pdf
6. MDAC, *Hungary: Parliament reforms legal capacity laws* , 22 September 2009, http://www.mdac.info/en/hungary-parliament-reforms-legal-capacity-laws
7. MDAC, *Czech Republic: Constitutional Court finds Deprovation of Legal Capacity "Constitutionally Problematic"*, http://www.mdac.info/en/czech-republic-constitutional-court-finds-deprivat
8. Nilsson, A., *Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial Disabilities*, Strasbourg, 2012
9. Nilsson, A., *Who Gets to Decide? Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial disabilities*, Strasbourg, 2012
10. Office of the High Commissioner for Human Rights, *Thematic Study by the Office of the United Nations High Commissioner for Human Rights on enhancing awareness and understanding of the Convention on the Rights of Persons with Disabilities,*26 January 2009
11. Զրվանդյան Ա., *Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում*, Քաղաքացիական Հասարակություն Ինստիտուտ, Երևան, 2014: Հասանելի է http://www.hra.am/i/up/pmdARMFINALweb.pdf կայքէջում:
12. Հարությունյան Գ. և այլք, *ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ*, Երևան 2010, http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf

ՄԱԿ-ի փաստաթղթեր

13. UN GA, Convention on Rights of Persons with Disabilities, UN Doc. A/RES/61/106, 13 December 2006.
14. UN Human Rights Committee (2000), General Comment no. 28: Equality of rights between men and women (Article 3), Doc. CCPR/C/21/Rev.1/Add.10, 29 March 2000.
15. CRPD, General Comment No. 1, UN Doc. CRPD/C/GC/1, 19 May 2014.
16. CRPD, Concluding Observations on New Zealand, UN Doc. CRPD/C/NZL/CO/1, 2014
17. CRPD, Concluding Observations on Azerbaijan, UN Doc. CRPD/C/AZE/CO/1, 2014
18. CRPD, Concluding Observations on Tunisia, UN Doc. CRPD/C/TUN/CO/1, 2011
19. CRPD, Concluding Observations on Spain, UN Doc. CRPD/C/ESP/CO/1, 2011
20. CRPD, Concluding Observations on Hungary, UN Doc. CRPD/C/HUN/CO/1, 2012
21. UN Special Rapporteur on Torture, Report of the Special Rapporteur on Torture and other inhuman or degrading treatment or punishment, Juan E. Méndez, 1 February 2013

22. UN Special Rapporteur on Torture, Special Report of the Special Rapporteur on Torture and other inhuman or degrading treatment or punishment, Manfred Nowak, UN Doc. A/63/175, 28 July 2008

ԵԽ փաստաթղթեր

23. CoE, EuropeanConvention on the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 4 November 1950.
24. CoE, Committee of Ministers, Recommendation No R(99)4 on *Principles Concerning the Legal Protection of Incapable Adults*, 23 February 1999.
25. CoE, Implementation Memoranudum on the Recommendation R(99)4.
26. CoE, Committee of Ministers Recommendation Rec(2006)5 *: Council of Europe Action Plan to promote the rights and full participation of people with disabilities in society*: improving the quality of life of people with disabilities in Europe 2006-2015.
27. CoE, PACE, Resolution 1642 *Access to rights for people with disabilities and their full and active participation in society*, 26 January 2009:

ՄԻԵԴ վճիռներ

28. Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի /Shtukaturov v. Russia/, թիվ 44009/05, 27 մարտի 2008:
29. Սիկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության /Sýkora v. the Czech Republic/, թիվ 23419/07, 22 նոյեմբերի 2012:
30. Բրյուդեմանը և Շեութենն ընդդեմ Գերմանիայի/Brüggemann and Scheuten v. Germany/, իվ 6959/75, Հանձնաժողովի զեկույց, 12 Հուլիսի 1977:
31. Իքս ևԻգրեկը ընդդեմ Խորվաթիայի /X and Y v. Croatia/, թիվ 5193/09, 3 նոյեմբերի 2011:
32. Լաշինն ընդդեմ Ռուսաստանի /Lashin v. Russia/ թիվ 33117/02, 22 հունվարի 2013:
33. Ստաննն ընդեմ Բուլղարիայի /Stanev v. Bulgaria/ թիվ 36760/06, 17 հունվարի 2012:
34. Իվինոնիչն ընդեմ Խորվաթիայի /Ivinovic v. Croatia/ թիվ 13006/1, 18 սեպտեմբերի 2014:
35. Գորգուլուն ընդդեմ Գերմանիայի /Gorgulu v. Germany/, թիվ 74969/01, 26 փետրվարի 2004:
36. Բերկովան ընդդեմ Սլովակիայի /Berkova v. Slovakia, թիվ 67149/01, 24 մարտի 2009:
37. Սալոնտայի-Դրոբնյակն ընդդեմ Սերբիայի /Salontaji-Drobnjak v. Serbia/, թիվ. 36500/05, 13 հոկտեմբերի 2009:
38. Բ-ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 2) (B. v. ROMANIA (no. 2)), թիվ 1285/03, 19 փետրվարի 2013:
39. Վինթերվերպն ընդդեմ Նիդերլանդների, (Winterwerp v The Netherlands), 24 հոկտեմբերի 1979, թիվ 6301/73
40. Հ.Լ ընդդեմ Միացյալ Թագավորության(H.L. v. the United Kingdom), թիվ 45508/99, ECHR 2004-IX
41. Ստորքն ընդդեմ Գերմանիայի (Storch v. Germany) թիվ 61603/00, ECHR 2005-V
42. Հաթչիսոն Ռեյդն ընդդեմ Միացյալ Թագավորության, (Hutchison Reid v. the United Kingdom), թիվ 50272/99,
43. Շնեյտերն ընդդեմ Շվեյցարիայի(Schneiter v. Switzerland) թիվ 63062/00, 31 մարտի 2005
44. Վերբանովն ընդդեմ Բուլղարիայի(Varbanov v. Bulgaria) թիվ 31365/96, ECHR 2000-X
45. Մեգյերին ընդդեմ Գերմանիայի, (Megyeri v. Germany), 12 մայիսի 1992, 22, Series A no. 237-A
46. Կիսսն ընդդեմ Հունգարիայի /Kiss v. Hungary/, թիվ 38832/06, 20 մայիսի 2010

ՀՀ ներպետական օրենսդրություն

47. *ՀՀ Սահմանադրություն*, ընդունվել է 5 հուլիսի 1995, փոփոխությունները 27 նոյեմբերի 2005:
48. *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 5 մայիսի 1998:*
49. *ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 17 հունիսի 1998:*
50. *ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունվել է 9 նոյեմբերի 2004:*

51. *ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ընդունվել է 9 նոյեմբերի 2004:*
52. *ՀՀ Ընտրական օրենսգիրք, ընդունվել է 26 մայիսի 2011:*
53. *Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենք, 30 օգոստոսի 2004:*
54. *Պետական տուրքի մասին ՀՀ օրենք, 11 հունվարի 1998:*
55. *Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք, 17 դեկտեմբերի 2014:*
56. ՀՀ նախագահ, *ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն,* 29 հոկտեմբերի 2012թ., թիվ ՆԿ-159-Ն կարգադրություն: Հասանելի է http://www.gov.am/u_files/file/kron/MIP%20azgayin%20razmavarutyun25_11_2011.pdf կայքէջում:
57. ՀՀ Կառավարություն, *Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին,* թիվ 303-Ն որոշում, 27 փետրվարի 2014թ:
58. ՀՀ Կառավարություն, *Ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին*, թիվ N 1874-Ն որոշում, 7 դեկտեմբերի 2006թ:
59. ՀՀ կառավարություն, *Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն,* թիվ 164-Ն որոշում, ընդունվել է 24փետրվարի 2011:
60. ՀՀ Սահմանադրական դատարան, *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ՔԴՕ 171-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում*, 7 ապրիլի 2015թ:
61. ՀՀ Վճռաբեկ դատարան, *Վ. Օհանովի վերաբերյալ որոշումը,* ԵՇԴ/0938/02/10, 24 մայիսի 2013թ:

Այլ պետությունների օրենսդրություն

62. Հունգարիայի քաղաքացիական օրենսգիրք, 2013թ. փոփոխություններով:
63. ՌԴ Քաղաքացիական օրենսգիրք, 2015թ. փոփոխություններով: Հասանելի է http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_142950/
64. ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
65. ՌԴ Սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Ի.Բ. Դելովայի դիմումի հիման վար ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ ոհդվածի 1-ին և 2-րդ մասերի, 31-րդ հոդվածի 2-րդ մասի և 32-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ, 27 հունիսի 2012թ., հասանելի է http://www.rg.ru/2012/07/13/spb-dok.html կայքէջում:
66. Չեխիայի քաղաքացիական օրենսգիրք, 2014թ. փոփոխություններով:
67. Գերմանիայի Դաշնության քաղաքացիական օրենսգիրք, հասանելի է http://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p6414 կայքէջում:
68. Շվեդիայի Երեխաների և ծնողների օրենսգիրք, (SFS: 1949:381): Հասանելի է http://www.government.se/content/1/c6/02/76/55/12308db5.pdf կայքէջում: